


ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



DIRECTEUR : A. TCHOBANIAN.

ԲՆՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Դիվեր — Շիրվանզադե	ԱՐՀԱԿ ԶՕԳԱՆԵԱՆ	146
Նա	ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐԶԵԱՆ	149
Անտոնիոս եւ Կիոպասրա (Շեյխփիր), Բ. Արարուած Թարգմ.	Գ. ՓԱՌՆԱԿ	150
Ցեղին յունուքը, Եղերամայրերու գովքը	ԼԵՒՈՆ ԷՍՏՃԱՆԵԱՆ	171
Վերջին ժպիքը	ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՔԵԱՆ	171
Կործանուածը, Երրորդ և Չորրորդ Արարուած — վերջ —	ՇԻՐՎԱՆԶԱԿԻ	172
Խորհն Նարայէյի անկիս ջաղեր — Հառաչանք, Իմ իսեալը		186
Եւա — — — — —		187
Ճամբորդները	ԱՀԱՐՈՆ ՅԱՏՈՒՐԵԱՆ	188
Քրոնիկ — Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը —		189
Երուանդ Լալայեանի « ալպոյր »	Ա. Զ.	191
Վեցեցիկ	ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ	192

Բացուած է բաժանորդագրութիւն

Ն Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ Ի

ԻԴ — 1910 — ՏԱՐԻՈՅ

« Հանդէս Ամսօրեայ »-ն լոյս կը տեսնէ ամէն ամսագլխին՝ կառավարութեամբ Վիեննայի Մխիթարեան Հարց և գործակցութեամբ ազգային կարող բանասէրներու :

« Հանդէս Ամսօրեայ »-ն նուիրուած է ամբողջապէս ազգային հին ու նոր գրականութեան և պատմութեան . կուտայ իւր էջերու մէջ ամէնազգի կարծ և ընդարձակ ուսումնասիրութիւններ և տեսութիւններ հայ Աշխարհին, Գրականութեան, Լեզուին, Հնախօսութեան և Պատմութեան վրայ :

« Հանդէս Ամսօրեայ »-ի բաժնեգիրը Կանիէի Հճարմա՞թ տարեկան 15 ֆր. = 6 ըրբ. Իւրաքանչիւր համարը կ'արժէ 1.50 ֆր. — 70 կոպէկ :

« Հանդէս Ամսօրեայ »-ի բաժանորդ կարելի է գրուիլ՝ Վիեննա, Խճարատունը . զիմել հասցէով՝
 Rédaction de la Revue « Handes Amsorya », Vienne, VII/2 Mechitharistengasse 4.
 Կոստանդնուպոլիս, Մխիթարեան Վանատունը՝ R. P. P. Méchitharistes de Vienne,
 Constantinople. Poste autrichienne 115.
 Չմիւռնիս, Մխիթարեան Վանատունը՝ R. P. P. Méchitaristes de Vienne, Smyrne.
 Տրապիզոն, R. P. Hamasasb, Aumonier des Frères Ecoles Chrétiennes, Trébizonde.
 Կարին, զիմել՝ R. P. Augustin Amrikian, Erséroum.
 Տիփլիս, զիմել՝ Mr. A. J. Mantacheff (pour Mr. Arakel Sarouhan). Tiflis կամ « Գուտեմբերգ »-ի Գրավաճառանոցը :

Ամերիկա զիմել « Հայրենիք »-ի Խճարատունը՝ The « Hairenik » Publ. Co., Boston, Mass, 9 Kapp Street.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

ՏԱՍՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱԻ

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆԻՍԻԿ վճարել

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1909

ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ


ԹԻԻ 7-8.

Գ Է Մ Ք Ե Ր

Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Դ Է

Ան՝ գրագէտ մը,
որ իր գործին ընդար-
ձակութեամբն ու սու-
կունութեամբը, իր
յղացմանց և արտա-
յայտութեան պորու-
թեամբն ու կենդա-
նութեամբը, գրական-
նութեան դերին և
խնդիրներու մասին իր
ունեցած բարձր ու
անկախ ըմբռնումովը,
լիովին արժանի է
« վարպետ » պատ-
ուանունին:

Ուսումնասիրութիւն
մը չէ որ կ'ուզեմ հոս
փորձել Արփիտի հե-
ղինակին ամբողջա-
կան գործունէութեան
վրայ: Հատոր մը հա-
զիւ պիտի բաւեր
խզճմտորէն ու ման-
րամանորէն վերու-
ծելու համար բազմա-



ձեւ ու ա' շնքան տե-
սակէտով թելադրիչ
ու շահեկան արտադ-
րութիւնն այդ բեղ-
մաւոր ու յոբնաճիր
ճատենագրին: Կը
յանկամ միայն քանի
մը մեծ գծերով ուր-
ուագրել պատճառնե-
րը այն խոր յար-
գանքին զոր երկար
ատենէ ի վեր կը տա-
ծեմ զէպ ի Շիրվան-
զաղէի գործը, մի'ն՝
ապահովապէս՝ մեր
հին ու նոր գրակա-
նութեան ամենէն ա-
մուր ու հարուստ
կոթողներէն:

* * *

Ինչ որ զլիաւորա-
պէս կը բնորոշէ այդ
գործն իմ աչքիս, անոր

Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Դ Է (1897)

զած հայ հեղինակի ընտանեկան թշուառութիւնը .
 Ջհոմարի ահաջը , Հրէաներու կեանքէն . Աշխարհի
 պատճառաւ հայ լրտեսի կեանքէն . Աւերակներէ զոյ,
 թատրերգութիւն հայ վաճառականներու կեանքէն .
 Կործանածը , թատրերգութիւն որ ծանօթ է Անա-
 հիսի ընթերցողներուն . Արժեքներ , սիրային սուամ
 ճը , դեռ չներկայացուած և անտիպ : Եւրաշիան ,
 կատակերգութիւն հայ « Էկսպրոպրիատոր » ներու
 կեանքէն , նոյնպէս անտիպ և դեռ չներկայացուած* :

Անցեալ տարի , Թիֆլիսի Գործ թերթը անար-
 զարօրէն կը մեղադրէր Շիրվանզադէին թէ իր երկերը
 միօրինակ են , գլխաւորապէս հայ պուրժուաներու
 կեանքէն ներշնչուած , և ճանաւորապէս ճատմանիշ
 կ'ընէր անոնց մէջ՝ Հայոց ազգային յեղափոխական
 ներկայ կեանքին վերաբերող գրուածքներու պակասը .
 վերջերս , Թիֆլիսի Հորիզոնը , հաճակութեամբ
 խօսելով Անահիսի մէջ երեցող Կործանածի ճա-
 սին , կ'ենթադրէր որ այդ դիտողութեան արդիւնքն
 եղած ըլլայ այս խաղը : Նախ , մեղադրանքը
 բացարձակապէս անհիմ էր . Շիրվանզադէի գործը .
 ինչպէս վերեւ յիշուած ամբողջական թուով ցոյց
 կուտայ , ամենէն այլազանն է որ մեր մէջ երեցած
 ըլլայ . յետոյ՝ նոյն իսկ եթէ Շիրվանզադէ իր գործին
 երբէք նիւթ առած չըլլար մեր յեղափոխական կեան-
 քը , անիմաստ պիտի ըլլար ատիկա իրեն մեղադրելը :
 Ֆրոպէր անազին գրագէտ ճըն է , թէպէտ՝ օրինակի
 համար՝ բանտներու , չքաւորներու կեանքը նկարա-
 գրելով չէ գրադած : Բայց ճիշդ չէ Հորիզոնի են-
 թաղրութիւնը . Կործանածը գրուած է Գործի յօդ-
 ուածին երեւումէն տարի ճը առաջ , Թիֆլիս զրկուած՝
 ներկայացուելու համար , բայց կարելի չէ եղած
 ներկայացնել Շիրվանզադէ , իբր գրագէտ ճը որ , ո՛չ

իբր ազգային գործիչ , իբր սրտը կուտակցութեան ճը
 զրօշակիր . այլ իբր հոգեբան - գեղարուեստագէտ՝
 պիտի նկարէր ճեր ազգային - յեղափոխական կեանքի
 ճգնաժամը . հասկանալի է որ շտապելու պէտք ճը
 չունէր այդ բարդ . դեռ տաք , շփոթ հոգեբանական
 կացութեան հանդէպ . ու երբ ժամը եկած համարեց
 այդ նիւթն ալ ձեռք առնելու , սուառ պատկեր ճը՝
 առարկայական և անկողմնակալ՝ ուր հայ վարժա-
 պետ . ազգասէրը . հայ ազգասէր - յեղափոխականը ,
 հայ ընկերվարական - միջազգայնական - յեղափոխա-
 կանը և հայ անիշխանականը նկարուած են հաւա-
 տարմութեամբ , իրենց ճիշդ պատկերով , ամէնքն ալ՝
 իրենց տեսակէտով՝ տրամաբանական և ազնիւ , բայց
 յառաջ բերելով տուածը և բառը՝ իրենց սարբերու-
 թեանց բաղխումովը . այնտեղ կը պակսի միայն հայ
 ընկերվարական - ազգասէրը , — որ սակայն , աւա՛ղ ,
 շատ ուժեղ և շատ քառասային գեր կատարեց :

Շիրվանզադէի ոճը պարզ է , բնական , յստակ ,
 ճշգրիտ : Քնարերգական իրիպիս սլացքներով , նը-
 կարչական հարուստ երանգներով , լեզուական նըր-
 բութիւններով չէ որ կը բնորոշուի ան . իր յատկանիշն
 է ամբուրթիւնը , լիութիւնը , բնականութիւնը . կ'ար-
 տայայտէ , պարզօրէն և ամբողջապէս . ինչ որ
 կ'ուզէ արտայայտել : Ոչ մէկ աւելորդ զարդ , ոչ մէկ
 ճուռմոմութիւն : Բայց և վայելուչ է ան և շնորհալի՝
 երբ պէ՛տք է : Նկարագրութիւնները պատկերավեց
 են , փափուկ ու ժուժկալ պատկերներ , երբէք ան-
 ճիշդ : Հոգեբանական կացութեանց արտայայտիչ
 կտորները՝ նրբերանգ , քնքուչ , առանց նրբամուր-
 թեան և անպէտ ճանրամասնութեանց մէջ ինչաբու :
 Լեզուն՝ ուր ժողովրդական տարրը տիրապետող է ,
 ոճին կենդանութեան կը նպաստէ ճեճապէս :

Ասոր համար է որ այդ ոճը ունի , ամենաբարձր
 աստիճանով , յուզելու կարողութիւնը : Շիրվանզադէի
 զգայնութիւնը , թէպէտ երբէք ինքզինքը չի ցուցա-
 դրեր , չի փռեր անհարկի կերպով , շատ խոր է և
 անկեղծ : Իր գործին մէջ կան էջեր , — ինչպէս՝ օրի-
 նակի համար՝ Ն-գիւնի մէկ քանի տեսարանները ,
 Յ-գ-բ-բ-բ զճաչելի վիպակին շատ ճը կտորները , և
 ճանաւանդ Արթուրը , ըստ իս՝ Շիրվանզադէի գրու-
 գործոցը , և մին ճարդկային գրականութեան ամե-
 նէն անճահ արտադրութիւններէն , — անհնար է
 կարգալ առանց արտասուելու :

* * *

Երեսուն տարիէն աւելի է որ Շիրվանզադէ իր

* Շիրվանզադէի գրուածքներէն ուստերէնի
 թարգմանուած են հետեւեալները .

Նամուս , Օրիորդ Լիզա , Ֆադմա եւ Ասադ ,
 Տասնուհինգ տարի անցած , Թանկագին կապանք ,
 Արսէն Իիւնսեան , Յաւագար :

Արսիսի Փրանսերէն թարգմանութիւնը յոյս
 կը տեսնէ ի ճօտոյ՝ Փարիզի մէջ : Վերջին պա-
 ճուն « Մշակ » կը հաղորդէ թէ ուսու բանաստեղ-
 ծուհի Իզապէլլա Փրինսեփսկայա և Լեւոն Գրի-
 գորեան ուստերէնի կը թարգմանեն Պատուի
 Հաւաքը , որ պիտի ներկայացուի Փեթերպուրկի
 թատրոնին մէջ : Նոյն խաղը թարգմանուած է
 նաեւ Փրանսերէնի և յոյս կայ ներկայացուի
 փարիզեան թատրոնի մը մէջ :

առաջին գործը հրատարակած է: Բարբերէ յետոյ հարուստ ու հզօր գրական գործունէութեան այդ երկար շրջանը, ուրախութեամբ կարելի է նկատել որ ան, իր տաղանդին լիալիր հասունութեան մէջ, աւելի առօջգ և բեղուն քան երբէք, կը շարունակէ իր գործը և դեռ երկար ատեն կարող է շարունակել: Այսպիսի գործիչի ճը հանդէպ հայ ժողովուրդը պարտական է հանդիսաւոր ցոյցով ճը իր յարգանքն ու երախտագիտութիւնը յայտնել: Ճարի ճը առաջ, կովկասեան մէկ քանի շրջանակներու մէջ խօսք կար Շիրվանզագէի յրեբխանը տօնելու. բայց այդ ճրագիրը չիրականացաւ տակաւին: Թերեւս ատոր պատճառ եղան այն լքումը, տխրութիւնը զոր հայ ազգին ցաւերով, վտանգներով, սուգերով լեցուն կացութիւնը ճենէ շատերուն ազգած է: Լքումը միշտ դատապարտելի է: Իր բոլոր ցաւերուն ու սուգերուն մէջէն, հանդէպ բոլոր վտանգներուն, ճեր ցեղը պարտաւոր է իր կենդանի եւ ուժեղ ըլլալն ապացուցանել ինքզինքին և ուրիշներուն. և ի՞նչ լաւագոյն աւիթ այդ ապացոյցը տալու քան՝ տօնելով իր ամենէն տաղանդաւոր ներկայացուցիչներէն մէկուն զորճը՝ փառաւորել իր իսկ ճտաւոր գորութեան, գեղարուեստական կարողութեան ճշակեանդան բեղունութիւնը: Յանկալի էր որ կովկասեան հայ ճամուլը և Շիրվանզագէի ուսուահայ եղբայրակիցները, ընէին ինչ որ կարող են և պարտական են, փութացնելու համար Շիրվանզագէի յրեբխանին կատարումը: ճաճկահայ հասարակութիւնը, որ՝ ճանաւանդ Աբէլեան-Արմէնեան խումբին յաղթական պտոյտէն ի վեր՝ Շիրվանզագէի բազմութիւ հիացողներ կը հաշուէ իր ճոցին մէջ, անշուշտ ճեճ խանդավառութեամբ պիտի ճասնակցի այդ գրական-ազգային տօնին, — և նոյն իսկ՝ եթէ ճեր ուսուահայ եղբայրները եթէ չչտապեն սարքել յրեբխանը, կը վախնամ որ թրքահայ ճտաւորականութիւնը անոր նսխաճեռնութիւնը ինքն իսկ առնելու փորճուի: Թող ուրեմն չուշանայ այլ ևս այն օրը, ուր հայկական ճեճ ընտանիքը, իր ամէն դասակարգի, դպրոցի կամ աշխարհայեացքի ներկայացուցիչներով, պիտի հաւաքուի՝ ճտաւոր իրախճանքի ճը մէջ՝ տօնելու իր ամենէն փառաւոր գաւակներէն մէկը:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆՆԱՆ



Ն Ա

Լուռ սննեակիդ մթնումն անշուք
Նստած է նա հսկելով քեզ,
Ու տխրագին ու անշըշուկ
Նայում՝ վրրագ խեղճիկ մօր պէս:

Եւ իր աչքերն անհո՛ւն տըխուր՝
Ուր արցունքի հետքերը կան՝
Քո նայելիս ժպտում են խոր
Ինչպէս հիւանդ արեւն աշնան:

Բայց ո՞վ է նա՝ այդ արամագին
Մտերիմըդ խեղճ, անճանօթ...
Գուցէ քեզ շա՛տ կարօտ մի կին
Իր ըսուերն է զրկել քեզ մօտ...

Նըրա անունն է մեռութիւն,
Կեանքիդ վերջին լուռ այցելուն.
Նոճու ըսուեր պիտ՝ հագնի նա
Ու գայ թեքի շիրմիդ վըրա:

* * *

Ծա՛նըր մի ձեռք քաշում է լուռ
Էութիւնըս գէպի իրան,
Ծա՛նըր մի ձեռք՝ գէպ՝ ինձ մեկնած՝
Մի յաւերժող մե՛ծ լըռութեան:


Ու չըգիտեմ՝ ո՛ւր է քաշում
Ծա՛նը, հաստա՛տ պողպատի պէս...
Նըրա հրգօր ճիրաններում
Ճըմլըւած ենք կամքըս ու ես:

Հըսկայ մի գանկ տիեզերեան
Իր բերանից մթնաըսուեր
Փըշում է խուլ քամու նըման
Մի բառ երկար, թոյլ շըշուկներ...

Ու լըսում եմ, լըսում, տխրո՛ւմ,
Չեմ հասկանում այդ բառն անճայն,
Մինչ ճալում է, ճալում վըրաս
Թեւը մի խո՛ր յաւերժութեան...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ

Ժընեւ



Ա Ն Տ Ո Ն Ի Ո Ս ԵՒ Կ Լ Է Ո Պ Ա Տ Ր Ա

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Բ.

Տեսարան Ա. — Մեսիցա — Պոմպէոսի տունը :
Կը մտնեն Պոմպէոս , Մենեկրատ եւ Մենաս
ռազմիկի ձեռով :

ՊՈՄ. Եթէ արդար են աստուածներն , արդարագոյն մարդոց գործքին
Պէտք է օգնեն :

ՄԵՆ. Գիտցիր , ազնիւ Պոմպէոս , ինչ որ անոնք
Կը յամեցնեն , չեն զըլանար մինչ ի սպառ :

ՊՈՄ. Բայց մինչդեռ մենք
Անոնց գահին ազաշաւոր կը կենանք , կը փձանայ
Այն բանը զոր մենք իրենցմէ կ'աղերսենք :

ՄԵՆ. Մենք՝ անգիտակ
Ինքըզինքնուս , շատ հեղ մեր վնասը կը խնդրենք , զոր իմաստուն
Երկինք մեզ կը զըլանայ նոյն իսկ մերին բարւոյն համար :
Այսպէս օգուտ՝ շահ կը գտնենք՝ կորուստ տալով մեր աղօթքներն :

ՊՈՄ. Գործերըս լաւ պիտի երթան : Ժողովրդին սիրելի եմ
Ու ծովն իմն է : Զօրութիւնս աճման վրայ է , ու իմ յոյսըս
Կանխազգարար ինձ կ'ըսէ թէ ան իր լըրման պիտի հասնի :
Անտոնիոս Եգիպտոս հացկերոյթի կը նստի
Եւ երկրէն զուրս պատերազմիլ բնու միտք չունի . Կեսար դրամ
Չեւք կը բերէ հոն ուր սրտեր կը կորսնցնէ . Լեպիտոս
Երկուքն ալ կը շողովէ . երկուքը զինք կը փաղաքշեն
Բայց ինք երկուքն ալ չըսիրիր , ոչ ալ անոնց մէկն իր վըրայ
Սէր ունի :

ՄԵՆ. Կեսարն ու Լեպիտոս պատերազմի
Դաշան իջած են , մեծ ու ահեղ մէկ զօրութեան զըլուխ անցած :

ՊՈՄ. Ո՛ւրկէ է այդ լուրը , սուտ է :

ՄԵՆ. Սիլվիոսէն :

ՊՈՄ. Կ'երագէ ան :

Քաջ գիտեմ որ անոնք Հռոմ են , Անտոնիոսի կը սպասեն :
Բայց թող սիրոյ հրապուրանքները բովանդակ , աղի՛ գրգռի՛չ
Կլէոպատրա , կակղեցընեն շուրթըզ մաշած : Կախարդանք
Թող միանայ գեղեցկութեան , ու երկուքին հետ տըռի՛փ :
Ինչոյքներու արգելոցին մէջ անառա՛կը զի՛ր կապէ՛ ,
Ըմպելիքէն զըլուխն՝ ըղեղն գոլորչիներ հանել տուր յար ,
Եպիկուրեան խոհարարներ մշտագրգիռ համեմներով
Թող ախորժա՛կը սըրեն , որպէս զի քուն ու կերուխում
Թուլցընեն իր պատիւն ու ձըգեն մինչև լէթէական

Խոր թմրութիւն :

(կը յոնէ վարէն)

Ինչ լուր հիմա , վարիտս :

ՎԱՐ.

Ամենաստոյգ

Է այս որ ես լուր պիտի տամ : Անտոնիոս ամէն ժամ Հոռոմ
կը սպասուի : Եգիպտոսէ հեռանալէն ի վեր անոր ,
Ատեն եղաւ որ աւելի ծանրայ առնէ :

ՊՈՄ.

Նուազ կարեւոր

Լուր մ'աւելի հեշտ ունկընդիր գիս կը գտնէր : Մենա՛ս , բնաւ
Չէի կարծեր որ այս պահէտ ցոփը ելլէ իր սաղաւա՛րտը
Դընէ այսպէս դոյզըն մարտի 'մհամար : Ռազմահմուտ
Իբըր գինւոր , ան միւս երկուքը կ'արժէ : Բայց մենք մեր միտքն
Աւելի՛ վեր բարձրացնենք որ մեր շարժմունք՝ Եգիպտոսի
Այրիին ծոցէն իրլիկ կրցեր են հեշտանքներէ
Անտոնիոսի Անտոնիոսը :

ՄԵՆ.

Ես չեմ՝ կրնար սպասել որ

Անտոնիոս ու կեսար քաղցըր աչքով զիրար ողջունեն :
Անոր կինն որ մեռաւ՝ կեսարի դէմ յանցանք գործեց՝
Եզրայրն՝ իր դէմ պատերազմներ մըղեց . թէպէտ , ես կը կարծեմ
Առանց գրգման Անտոնիոսէ :

ՊՈՄ.

Ես չեմ՝ գիտեր , քա՛ղցըր Մենաս ,

Որչա՛ր կրնան փոքըր ոխեր մեծագոյնին տեղի առլ :
Եթէ մէջտեղ չըլլայինք մենք երկուքին դէմ ոտք ելած ,
Խելքի մօտ է թէ մէջերնին ոգորումներ՝ կուի հանէին ,
Զի բաւական պատճառներ յարուցած են մերկացնելու
Սուրերնին : Բայց թէ ինչպէս մենէ երկի՛ւղը կրնայ
Պառակտումին կցկցել . գեռ չենք գիտեր : Մեր աստուածներն
Ինչպէս ուզին՝ ա՛յնպէս ըլլայ : Մեզի միայն մահու կենաց
Խնդիր է , զօրեղագոյն միջոցներնուս ձեռնարկել :
Եկա՛ւ . Մենա՛ս :

(կը յիշն)

Տեսարան Բ. Հոռոմ . — Լեպիսոսի տունը

Կը մահեն Ենոքարթոս եւ Լեպիսոս

ԼԵՊ.

Ազնուամիտ Ենոքարթոս , արժանայարկ գործ մըն է աս ,
Ու Չեզի լաւ պիտի վայլէ , պաղատիլ Չեր զօրապետին
Որ հեզ ու մեղմ՝ խօսք գործածէ :

ԵՆՈ.

Ես պիտ՝ իրեն պաղատիմ

Իր ինքնութեանը համաձայն պատասխան տալ : Եթէ կեսար
Զինքը գրգուէ , Անտոնիոս թող կեսարին վերէն նայի
Ու Արէսի պէս բարձրաձայն բարբառի , վկայ Արամազդ ,
Անտոնիոսի եթէ մօրուքն ես կըրէի , այսօր չէի
Ածիլեր ան :

ԼԵՊ.

Ատենը չէ այս միջոցիս անձնասնդիր
Քինւորութեան :

ԵՆՈՒ. Ամէն ատեն կը պատշաճի նոյն օրուան մէջ
Բղիսած խնդրին ծառայելու :

ԼԵՊ. Բայց մեծագոյն խնդիրներու
Փոքրը պէտք է տեղի տայ :

ԵՆՈՒ. Ա՛չ երբ առաջ փոքրը գայ :

ԼԵՊ. Խօսքըդ համակ կըրի յոյզ է : Բայց կը խնդրեմ, ծածկուած կայծե՛րը
Մի՛ յուզեր վեր բերեր : Ահա կուգայ ազնուականն
Անտոնիոս :

(Կը մտնեն Անտոնիոս և Վեպիդիոս)

ԵՆՈՒ. Ու քիչ մ'անդին հոն կեսար :

(Կը մտնեն Կեսար, Մեկենատ և Ագրիպպոս)

ԱՆՏ. Եթէ խնդիրն
Հոս յարգարենք, Պարթեւաստան կ'երթաս, կը լսե՛ս :

ԿԵՍ. Ես չեմ գիտեր.

Մեկենա՛ս, Ագրիպպային հարցումդ ուղղէ :

ԼԵՊ. Վեհաշո՛ւք
Բարեկամներ, ան որ մեզ միաւորեց շատ մեծ բան մ'էր,
Ու թող վըտիտ գործ մը չգայ մեզ պառակտե՛լ : Ինչ որ ծուռ է,
Խնդրեմ հեղիկ թող լըսուի ան : Երբ չնչին տարբերութիւնն
Աղաղակով ելլենք վիճել, վերքի բուժման տեղ սպանութիւն
Գործած կ'ըլլանք. ուստի, ազնի՛ւ ընկերակիցք, մանաւանդ որ
Սրտի մըտք կը պաղատիմ, լեղիագոյն կողմերուն վրայ
Քաղցրագոյն բառերով զըպէք անցէք, ոչ թէ խնդրին
Նեղսրտութիւն բերէք բարդէք :

ԱՆՏ. Քաջ խօսեցար, բանակներուս
Եթէ առաջն ըլլայինք ու մարտնչման սկսելու, այդպէս
Պիտի ընէի ես : (Փողայն)

ԿԵՍ. Բարի եկաք Հոռոմ :

ԱՆՏ. Շնորհակալ եմ :

ԿԵՍ. Նստեցէք :

ԱՆՏ. Նստեցէք, տէր :

ԿԵՍ. Քանի որ չէք նստիր՝ կը պնդէք, ուրեմն :

ԱՆՏ. Կ'իմանամ թէ դուք ծուռ կ'առնէք այն բաներն որ ծուռ չեն բնաւ
Կամ եթէ են, Չեզի անկ չեն :

ԿԵՍ. Վըրաս ծիծաղ կը հրաւիրեմ,
Եթէ թեթեւ կամ ոչինչ բանի համար ինքըզինքըս
Վշտացածի տեղ դընեմ, ու Չեզի դէմ աշխարհիս վրայ
Մանաւանդ. աւելի մեծ ծիծաղ որ ես Չեզ անգամ մ'իսկ
Վարկաբեկած բերանս առնեմ, երբ Չեր անունը տալ բընաւ
Ինձ անկ չըլլար :

ԱՆՏ. Իմ Եգիպտոս ըլլալս Չեզի՞ ինչ, Կեսար :

ԿԵՍ. Ոչ աւելի քան իմ Հըռոմ հոս բընակիլս կրնայ ըլլալ
Չեզ Եգիպտոս. բայց և այնպէս եթէ դուք հոն դաւեր նիւթէք
Իմ երկրիս վրայ, Չեր Եգիպտոս ըլլալն ինձի կրնար խնդրի
Նիւթ ըլլալ :

ԱՆՏ. Դաւեր նիւթել ըսելով Չեր միտքն ի՞նչ է :

ԿԵՍ. Եթէ ուզէք՝ կրնաք գտնել իմ մտքինս՝ ինձի հոս

Պատահածէն: Չեր եղբայրն ու Չեր կինն ինձ դէմ պատերազմներ
Մըղեցին, ու իրենց վէճ ու կռիւին նիւթ գուբ էիք,
Պատերազմին նշանարանը գուբ էիք:

ԱՆՏ.

Չեր գործը սխալ

Կ'իմանաք գուբ: Եղբայրըս զիս երբէք մէջ չէ՛ բերած իր այս
Գործին մէջ: Հարցիորձ ըրի ես այս բանին, և առած եմ՝
Տեղեկ ութիւնս հաւատարիմ լրատուններէ, որոնք Չեյ հետ
Միասին թուր քաշած են: Միթէ յաւէտ ան օտնակոխ
Չէ՛ ըրած Չերինին հետ իմ մեծութիւնս, ու պատերազմ
Ըրած նոյնպէս իմ կամքիս դէմ, Չերինին հետ նոյն պատն ե՛ս ալ
Ունենալովս: Այս բանին վրայ իմ նամակներս առաջ Չեյ գոհ
Չըզած են: Եթէ կռիւ մը կարկատելու միտքն ունիք
— Որովհետեւ ամբողջական նիւթ կայ Չեր քով կցկցելու —
Պէտք չէ ասով ելլէք ընել:

ԿԵՍ.

Գուբ Չեր անձին՝ գովքը կ'ընէք,

Թերի գատում վրաս գնելով, բայց կարկատանք մըն է միայն
Չեր չքմեղանք:

ԱՆՏ.

Չէ՛, չէ՛ այդպէս: Գիտեմ, հնար չէ՛ — ես վստահ եմ

Ասոր վըրայ — որ գուբ վրիպիք սա հարկադրող մտածումէն թէ
ես Չեր ընկերն այս գատին մէջ՝ որուն դէմ ան կը մարտնչէր,
Չէի կրնար հաւանութեան աչքով նայիլ այն կռիւներուն
Որոնք նոյն իսկ իմ հանգստիս դէմ կուգային: Անոջս գալով,
Կ'ուզէի որ անոր նըման մէկ հատ մ'ալ գուբ անոր խե՛ն
Ոգիովն ունենայիք: Երկրիս երրորդ մասը Չերն է,
Չոր պախուրցով մը դիւրաւ կրնաք վարել, բայց ո՛չ անոր
Նըման մէկ կին:

ԷՆՈ.

Իցի՛ւ թէ ամէնքնիս ալ այդպիսի ամուսիններ
Ունենայինք որ ոչրերը պատերազմի ելլէին կիներուն, հետ:

ԱՆՏ.

Այդքան անսանձ ըլլալով ան, իր խռովութիւնք, Կեսա՛ր, որոնք
Իր անհամբեր բարբէն էին, թէպէտ սրատես նուրբ հայեացքէ
Ալ գուրկ չէին, ես ցաւելով կ'ընդունիմ որ Չեյ չափազանց
Տագնապեցին: ատոր գալով պէտք է ինքնին գուբ ըսէք միայն
Թէ ես չէի կարող ատոր առաջքն առնել:

ԿԵՍ.

Գրեցի Չեյ

Երբ անառակ կեանք կ'ապրէիք Աղեքսանդրիա, նամակներս
Գրպանեցիք, և այպանքով պատգամարերս անունկնդիր
Դուրս վաճառեցիք:

ԱՆՏ.

Բայց, տէ՛ր, ան վրաս խուժեց գեռ ե՛ս ունկնդրութեան
Ձինք չընդունած. այն վայրկեանին նոր տուեր էի խնջոյք երկը
Թագաւորի և առտուան ինքնութենէս պակաս էի:
Բայց հետեւեալ օրը ես իսկ իմ վրաս եղածն իրեն ըսի,
Որ նոյն բանն էր իրմէ ներում խնդրելու հետ: Մեր վէճին մէջ
Աս մարդը թող տեղ չբռնէ՛: Եթէ կռուիք, մեր խնդիրէն
Չանիկա դուրս հանէ՛ սրբէ՛:

ԿԵՍ.

Գուբ գրեցիք Չեր դաշինքի

Ուխտի երգման, մինչ նոյն բանին երբէք լեզու չէք ունենար

- Գուր ամբաստան կանգնիլ ինձ գեմ:
- ԼԵՊ. Մեղմ գնա, Կեսար:
- ԱՆՏ. Ա՛չ, Լեպիտոս,
- Թողէ՛ք խօսի: Նուիրական է այն պատի՛ւը զոր հիմա
 Խնդիր կ'ընէ անիկա, ենթագրելով թէ թերացած
 Ըլլամ անկէ, բայց յառաջ տար խօսքդ, Կեսա՛ր, իմ՝ երգուընցած
 Դաշինքըս, օ՛ն:
- ԿԵՍ. Ձէնք՝ օգնական զրկել ինձի, երբ իմ պէտքս
 Պահանջէր: Երկուքն ալ ինձ մերժեցիք դուք:
- ԱՆՏ. Ըսէք յաւէտ՝
 Անփոյթ կեցաք, ու այն ատեն երբ թունալից ժամեր կապած
 Ձիս կաշկանդած էին անձիս անգիտակից: Արցածիս չափ
 Մօտ ի մօտոյ մեղանքըս Ձեզ խոստովանիմ, բայց ուղղութիւնս
 Նուաստացում պիտի չ'առթէ իմ մեծութեանս, ոչ ալ առանց
 Անոր գործէ իմ գորութիւնս: Սա ստոյգ է թէ Ֆուլլիա
 Եգիպտոսէն զիս դուրս հանել մտածելով, պատերազմներ
 Հոս մըղեր է, որոնց համար ես ինքս անգէտ՝ անմեղ առիթ
 Կուգամ ներում խնդրել այնքան որքան պատուիս վայելուչ է
 Ձիջում ընել մի այդպիսի դիպուածի մէջ:
- ԼԵՊ. Վհհորէն խօսք:
- ՄԵԿ. Եթէ հաճոյ թուէր Ձեզ՝ Ձեր մէջ կեցած գանգատանքն'ըրը
 Չի մըղել ալ ես յառաջ, բոլորովին մոռացութեան
 Տալով գանոնք պիտի յիշած ըլլայիք թէ ներկայ պէտքը
 Կ'ազազակէ միութեան Ձեզ բերելու:
- ԼԵՊ. Քաջ խօսեցար,
- ՄԵԿ. Մեկենաս:
- ԷՆՈ. Կամ եթէ դուք մէկզմէկու սէրը հիմա փոխ առնէք,
 Կրնաք յետոյ, երբ Պոմպէոսի խօսքն ալ չգայ Ձեր ականջին,
 Սէրը ետ տալ: Ժամանակ շա՛տ կ'ունենաք դուք պայքարելու,
 Երբ ուրիշ գործ ա՛լ չունենաք ընելու:
- ԱՆՏ. Պատերազմող
- ՄԵՆ. Ես գուն լոկ — ա՛լ մի խօսիր:
- ԷՆՈ. Գրէթէ մտքէս ելեր էր թէ
 Մունջբերան ըլլալու է ճշմարտութիւնն:
- ԱՆՏ. Ներկաներուն
- ՄԵՆ. Անարժան է ըրածդ. ուստի ալ մի՛ խօսիր:
- ԷՆՈ. Լա՛ւ, լա՛ւ,
 Քու լուռ ու մունջ քարի կտորդ եմ:
- ԿԵՍ. Հատ անախորժ չգար ինձի
 Նիւթը խօսքին, բայց անոր կերպը միայն, զի հընար չէ,
 Մենք չենք կրնար բարեկամ մընալ յաւէտ, մեր վարքն ու բարք
 Այնքան տարբեր իրենց գործքին մէջ յայտ կուգան: Սակայն դարձեալ
 Եթէ գիտնամ թէ ի՞նչ գօտի կրնայ կապել մեզ ամբօրէն,
 Աշխարհիս մէկ կողէն միւսն անոր սիրով հետապնդել
 Կ'եւլլէի:
- ԱԳՐ. Թոյլտուութիւն շնորհէ ինձի, ո՞վ Կեսար:
- ԿԵՍ. Խօսէ՛, խօսէ՛, Ագրիպպա:

ԱԳԻ. Մօր կողմէ զուն քոյր մ'ունիս հանուր երկրին հիացումն՝
 Հոկաաւիա , մեծըն Մարկ-Անտոնիոս հիմն 'յրի է :

ԿԵՍ. Մ'ըսեր այգպէս , Ագրիպպա : Եթէ լըսէր քեզ Կլէսպատրա ,
 Անխորհուրդ խօսքդ արժանապէս իր կշտամբանքը կը ստանար :

ԱՆՏ. Ամուսնացած չեմ ես , Կեսար , թողէք լսեմ թէ ինչ ունի
 Ագրիպպա գեռ ըսելու :

ԱԳԻ. Արպէս զի դուք եղբայր ըլլաք ու Ձեր սրտերն անլոյծ կապով
 Մէկտեղ հիւսուին , թող Անտոնիոսը կին առնէ Հոկաաւիան
 Արուն գեղն ու շնորհը մարդոց լաւագոյնն իբր ամուսին
 Պահանջելու արժանի է , որուն պէս պէս վայելչութիւնք
 Աւ գգաստութիւնն այնպիսի զինք կը հռչակեն որպէս ուրիշ
 Աչ որ կրնայ : Այս խնամութեամբ ամէն փոքրիկ նախանձութիւնք
 Արոնք հիմն մեծ կը թըւին , և ամէն մեծ երկիւղներ որ
 Հիմն իրենց վըտանգներն հետ կը բերեն , այն ատեն չիք
 Պիտի դառնան : Ըստոյգը լոկ սնտաի գրոյց պիտի դառնայ ,
 Մինչդեռ հիմն կէս գրոյցն անգամ ստոյգի տեղ կը գըրուի :
 Գէպի երկուքն անոր սէրն (իր ետեւէն) պիտի քաշէ
 Մէկը միւսին , ու ամէնուն սէրն՝ երկուքին : Ներողութիւն
 Իմ խօսածիս , զի կանխանկատ , ոչ ավիպփոյ խորհուրդ է ան ,
 Աւ որոճում՝ պարտքի գգացման :

ԱՆՏ. Պիտի՛ խօսի՞ Կեսար :
 ԿԵՍ. Աչ մինչև որ նախ լըսէ՛ թէ ինչպիսի ազգում կ'ընէ
 Անտոնիոսի այն որ արգէն խօսուեցաւ :

ԱՆՏ. Ի՞նչ ոյժ ունի
 Ագրիպպա , եթէ իմ կամքս ըլլար ըսել "Այգպէս ըլլայ ,
 Ագրիպպա" արգիւնք տալու այս բանին :

ԿԵՍ. Կեսարի ոյժն
 Աւ անոր ոյժն ալ հանդէպ Հոկաաւիայի :

ԱՆՏ. Հենի՛ ինէ
 Այնքան ազնիւ երեւոյթով այսպէս բարի նպատակի
 Մըտքէս արգելք անցընել : Տուր ինձ ձեռքըդ : Յառաջ վարէ՛
 Այս բարի գործը շնորհաբեր , ու այս ժամէս ըսկըսած
 Եղբայրներու թող սիրտը մեզ կառավարէ սիրելու մէջ
 Եւ մեր մեծ խորհուրդներուն ուղղիչ լինի :

ԿԵՍ. Ա՛ն քեզ ձեռքըս :
 Քոյր մը կուտամ ես քեզի , գոր չէ եղած եղբայր որ
 Այնքան սիրով սիրած ըլլայ . թող շա՛տ ապրի որ միասին
 Կապէ մեր սիրտն ու տէրութիւն , և ալ երբէք չի ցնդի
 Մեր սէրն ի բաց :

ԼԵՊ. Հընորհաւոր ըլլայ , ամէն :
 ԱՆՏ. Մտքէս չէի

Ես անցընել որ իմ թուրքս մերկացընեմ Պոմպէի դէմ .
 Ձի ան վերջերս անկարծելի ու մեծագոյն ազնուութիւն
 Վրաս պարտք գրած է . շնորհակալ ըլլալ պարտիմ ես միայն ,
 Ձի չըլլայ թէ երախտիքի յիշումի մէջ վատ անուն մը
 Ձիս աղարտէ : Աս որ ըրի , զինքն ասպարէզ կը կոչեմ :

ԼԵՊ. Ժամանակն իր կոչ կ'ուղղէ մեզ, պէտք է որ անմիջապէս
Պոմպէոսին հետապնդենք. եթէ ոչ ան կը փնտրուէ
Մեզ կը գտնէ:

ԱՆՏ. Ո՞ւր կը կենայ

ԿԵՍ. Միսինում լեռան կողմերն:

ԱՆՏ. Ի՞նչ գորութիւն ունի ան ցամաքի վրայ:

ԿԵՍ. Մե՛ծ ու տակաւ

ԱՃեցուն: Բայց ծովու վրայ բացարձակ իշխող է ան:

ԱՆՏ. Համբաւն այդպէս կը խօսի: Իցի՛ւ մէկտեղ կուուի ելած
Ըլլայինք: Փութանք առ այդ: Բայց զէնք շառած՝ գըլուխ հանենք
Գարծր որուն վրայ խօսեցանք:

ԿԵՍ. Ամենամեծ ուրախութեամբ:

Եւ ահա Չեզ կը հրաւիրեմ քոյրըս տեսնել, որուն տունն

Ուղղակի Չեզ կը տանիմ:

ԱՆՏ. Օ՛ն երթանք, Լեպիտոս: Չըպակսի Չեր
Ընկերութիւնն:

ԼԵՊ. Բզնուասի՛րտ Անտոնիոս, հիւանդութիւնն
Իսկ պիտի դիտ չկեցնէր:

(Փողայ)՝ կը ժէննի կեսք Անտոնիոս և Լեպիտոս

ՄԵԿ. Բարի եկաք եգիպտոսէն, պարո՛ն:

ԷՆՈ. Կեսարի սրտի չհատորը, պատուական Մեկենաս: Իմ պատուաւոր բարեկամս,
Ագրիպպա:

ԱԳՐ. Ազնի՛ւ էնորարքոս:

ՄԵԿ. Պատճառ ունինք ուրախանալու որ գործերը այսպէս լաւ կարգադրուեցան:
Եգիպտոս կենալովիդ լաւ անցուցի՞ր ժամանակնիդ:

ԷՆՈ. Այո՛, պարոն: Յորեկն ամօթեցինք քնանալով և գիշերը լոյս ըրինք գուարթ
խմելով:

ՄԵԿ. Աւթ կինձ միակտուր խորոված նախաճաշի, ու միայն տասերկու հոգի կոչնական.
Իրա՞ն է աս:

ԷՆՈ. Ատի ճանճ մըն է արծիւին քով, դեռ շատ աւելի վիթխարի նիւթ ունէինք
խնջոյքի, որ գերազանցօրէն արժանի էր յիշատակուելու:

ՄԵԿ. Գերազանձ տիկին մըն է ան, եթէ համբաւն արգար կը խօսի իր վրայ:

ԷՆՈ. Երբ առաջին անգամ Մարկ-Անտոնիոսին հանդէպն ելաւ, Կիւտնոս գետին վրայ,
քսակեց անոր սիրտը:

ԱԳՐ. Հոն իրաւ տեսիլ երեւոյթք մը եղաւ ան, եթէ ոչ իմ տեղեկատուս ազէ՛կ ճար-
տարեց իր խօսքն անոր վրայ:

ԷՆՈ. Պատմեմ Չեզ:

Իր նըստած նաւն՝ հըրափայլ գահի մը պէս՝ ջուրին վըրայ
կը վառէր. նաւուն խելքն էր ծեծած ոսկի. առաքատան՛բըր
Ծիրանի, ու այնպիսի անուշ բուրմունք կը բուրէին
Որ հովերն անոր սիրուն կը մարէին: Թիւրն էին
Արծաթի, որոնք սրընգի եղանակման հետ միանուազ
Իրենց ճողփիւնը կ'ընէին, ու ջուրը գոր կը ծեծէին
Աւելի շոյտ վագրով իրենց հետապնդիլ կուտային,
Իբր սիրող հարուածներնուն: Գալով նոյն իսկ իր անձին,
Կ'ազբառընէր ան որ և է նրկարագիր, նստած էր ան

Հովանոցակն իր ոսկեհուռ , գերահըրաշ իբրը նրկար
 քան այն Աստղիկն որուն մէջ — մենք կը ածենք — արուեստին
 Ստեղծող աշխոյժը բընութիւնն իսկապէս կը գլէ կ'անցնի :
 Իր երկու կողմը մանուկներ կը կանգնէին՝ ժպտի փոսիկ
 Երեսնուն վրայ , ինչպէս փոքրիկ կուկիտոններ , ձեռքերնուն մէջ
 Գունագոյն հովահարներ՝ որոնց հովը զովացնելուն հետ
 կը բերէր նոր հուրք փափո՛ւկ իր այտերուն , ու իր տարա՛ծը
 կը նորէր վերըստին :

ԱԳՐ. ԱՏ անգի՛ն բան Անտոնիտին :
 ԷՆՈ. Իր նաժիշտներն՝ տոհմիկ կանայք , ներէանց պէս մէն մին մէյմէկ
 Ծովապարիկ , անոր աչքէն կախուած ինամով մըտագիր՝
 Իրենց կայքին հակուժը գա՛րգ մը աւելի կը կազմէին :
 Ղեկին գըլուին՝ երեւութով ծովապարիկ մը կը վարէ .
 Մետաքսաթել երասանները կ'ուռնան ծաղկափափո՛ւկ
 Այդ ձեռքերուն հըպուժներէն , որոնք ճարպիկ իրերց ըսպա՛սը
 կը վարեն : Նաւակէն տարօրէ՛ն աննիւթ բուրմուռք
 Մը կը զարնէ մերձակայ ծովափներուն : Ամբողջ քաղաքն
 Անոր վըրայ իր ժողովո՛ւրդը կը թափէ , ու Անտոնիտս
 Հրապարակին մէջ գահանիստ , մէն միայնակ կը բազմէր ,
 Սուկելով օդն ի վեր , որ ինք նաև պիտի երթար ,
 Եթէ չի ձգեր դատարկութիւն , կէտպատան տեսնելու
 Ու բնութեան մէջ պիտի խոռոչ մը բանար :

ԱԳՐ. ԱՏ չըքնա՛ղ եգիպտոհէին :
 ԷՆՈ. Այն ինչ ցամա՛քը ոտք կոխեց ,
 Անտոնիտս մարդ զրկեց իրեն ճաշի հրաւիրեց .
 Ան պատասխան տուաւ թէ աւելի լաւ կը վայլէր
 Որ ինքն ըլլայ իրեն հիւր , որուն շնորհուր՛ը կը հայցէր :
 Մեր կընահաճ Անտոնիտսն որմէ երբէք «ոչ» բառը կին
 Արարած լըսած չէ , տասը անգամ վըրայէ վրայ
 Ածիլուելով , կ'երթայ ինջոյք , և իբրը վարձք ճաշին իր սիրտը
 կը վճարէ , փոխարէն լոկ իր աչքերուն լափածին :

ԱԳՐ. Արքայական
 կինը , ո՛հ : Մեծ կեսարին՝ թուրն անկողին տանել տուաւ .
 Ան արօրեց , ինքը հնձեց :

ԷՆՈ. Ձինքը տեսայ անգամ մը երբ
 Քառասուն քայլ ցատկըտուքով անցաւ գընաց հասարակաց
 Փողոցէն , ու շունչն հատած խօսեցաւ ու մեծ հեւք մ՛առաւ
 Այնպէս մը որ թերութեան տուաւ տիպ կատարեալ ու շնչասպա՛ռ
 Զօրութի՛ւն արտաշնչեց :

ՄԵԿ. Ալ հիմա պէ՛տք է Անտոնիտս
 Ձանի ձըգէ բոլորովին :

ԷՆՈ. Երբէք չըներ այգպիտի բան .
 Տարիքը բնաւ չի կրնար ան թուժեցնել , և ոչ սովա՛նքը
 Հինցընել փոփոխ կերպերն իր անհատնում: ուրիշ կիներ
 Իրենց սնուցած ախորժակնին կը յափրացնեն , իսկ ա՛ս քաղցած
 կը ձըգէ հո՛ն ուր ամենէն շատ իբրը թէ յագուրդ կուտայ ,
 Ձի ամենէն անարգ բաներն վայելութիւն կ'առնեն իր վրայ

Այնպէս որ սուրբ քուրմերն անգամ աստուծոյ շնորհքն
իրեն կուտան երբ անառակ է ան պարզ :

ՄԵԿ. Եթէ գեղ , շնորհ , զգաստութիւն , համեստութիւն կարող ըլլան
Անտոնիոսի սիրտը կապել , Հոկտաւիա երկընքէն բաղդ
Մրն է իրեն :

ԱԳԲ. Օ՛ն , երթա՛նք : Ազնիւրդ իմ էնորարբ ,
Հիւրըս եղէք ցորչափ հոս մնար :

ԷՆՈ. Խոնարհաբար , պարոն , ձենէ
Շնորհակալ եմ :

(Կը Քէնէն)

Տեսարան Գ. — Նոյնը — Կեսարի օուրը

Կը մտնեն Անտոնիոս , Կեսար , Հոկտաւիա մէջերնին , Կեսարիոյնը :

ԱՆՏ. Աշխարհքն ու մեծ իմ պաշտօնըս երբեմն գիտ պիտի գասն
Ձեր գրկէն :

ՀՈԿՏ. Այդ բոլոր ատենը ես աստուածներուն
Առջև ծունկի աղօթքներըս պիտի ուղղեմ Ձեզ համար :

ԱՆՏ. Գիշեր բարի , տէր իմ : Ի՛մըս Հոկտաւիա , արատներն
Իմ անունիս դուք մի՛ կարգաբ աշխարհի զրոյցներուն մէջ :
Իմ կարգս ու գիրքս միշտ չեմ պահած ես ուղիղ , բայց ապագան
Կանոնաւոր պիտի ըլլայ բոլորովին : Գիշեր բարի ,
Սիրելի՛ տիկին , տէ՛ր իմ , գիշեր բարի :

ԿԵՍ. Գիշեր բարի :

(Կը Քէնէն Կեսար և Հոկտաւիա , ասէնք՝ Բոյի Անտոնիոս)

(Կը մտնէ Բաղդասարայ)

ԱՆՏ. Քեզի կ'ըսեմ , հիմա ինքզինքըդ Եգիպտոս չե՛ս փափաքիր :

ԲԱՂԳ. Իցի՛ւ թէ բնաւ հոնկէ եկած չըլլայի , և ոչ ալ դուն
Հոն գացած :

ԱՆՏ. Եթէ կրնաս , պատճառըդ տուր :

ԲԱՂԳ. Կը տեսնեմ

Ներքին շարժմամբ , բայց լեզուիս ծայրը չի գար ան , բայց դարձեալ
Եգիպտոս փութացէք դուք վերըստին :

ԱՆՏ. Ըսէ ինձի

Որո՞նք բաղդն աւելի վեր պիտի ելլէ , Կեսարի՛ն բա՛ղդը
Թէ իմըս :

ԲԱՂԳ. Կեսարինը :

Անոր համար , ո՛վ Անտոնիոս , մի՛ յամենար դուն անոր քով :
Քու ոգիդ , նոյն այն որ քեզ պահապան է , ազնուական է ,
Քաջարի , վեհ , անզուգական՝ ուր Կեսարինը չի կենայ ,
Բայց անոր քով քու հրեշտակդ համակ երկիւղ կը դառնայ ,
Իբրև թէ զինքը նուաձէր , անոր համար երկուքնուդ մէջ
Անջրպե՛տ զիր բաւական :

ԱՆՏ. Ալ մի խօսիր ատոր վրայ :

ԲԱՂԳ. Քեզի միայն , ալ ո՛չ մէկուն , բայց միայն քեզի : Եթէ անոր
Հեա որ և է խաղ մը խաղաս , կորսնցնելուդ ապահով ես :

եւ այդ բնական բազդի բերմամբ, թէպէտ քու կողմից ըլլայ գորեղ՝
Քեզ կը յաղթէ. քու նըշոյումը կը ստուերի երբ մտառդ ան
ճառագայթէ: Նորէն կ'ըսեմ, քու ոգիդ համակ երկչոտ
է վարելու քեզ անոր մտա, բայց ան գնալուն՝ վեհագոյն է:

ԱՆՏ. Գնա հոսկէ: Հիմա ըսէ Վենտիգիոսի թէ իրեն հետ
խօսիլ կ'ուզեմ:

(Կը Բիլիէ Բաղբաբոնալ)

Պարթեւաստան պիտի երթայ: Ըլլայ արուեստ
կամ լոկ դիպում, մարդը ըստոյգ խօսեցաւ, քուեայնեան
Անգամ մըտիկ կ'ընեն խօսքին, ու միասին խաղերնու մէջ
իմ մեծագոյն վարպետութիւնս կը նուազի իր բազդին քով:
Եթէ վիճակ քաշենք անոր կը յաջողի, իր աքլորնե'րը
Անվրէպ յաղթող կ'ելլեն իմիննեանու հետ կուռի մէջ,
Երբ ան ոչինչ, ես ամէն յոյս իմ կողմն ունիմ, և միշտ ի'ր
Լորամարգին՝ բողբոսկի մէջ բանտարգել, կը յաղթէ
Թէպէտ անյոյս, իմինիս: Եգիպտոս պիտի երթամ,
Եւ թէպէտ այս ամուսնութիւնն իմ հանգստիս համար կ'ընեմ,
Արեւեկքն է իմ հաճոյքըս:

(Կը Գոնէ Վենտիգիոս)

Օ՛ն եկուր. Վենտիգիոս,
Պէտք է երթաս Պարթեւաստան, հրամանագիրըդ պատրաստ է,
Հետեւէ ինձ ու կը ստանաս:

(Կը Բիլիէ)

Տեսարան Գ. — Նոյնը — փողոց մը
Կը մտնեն Լեպիսոս, Մեկեմաս եւ Ագրիպպա:

ԼԵՊ. Այ մի կըրէք նեղութիւն, կ'աղաչեմ, շտապեցէք
Զօրագլուխնուդ ետեւէն:

ԱԳՐ. Պարո՛ն, Անտոնիոս
Ճիշդ մէկ համբոյր Հոկտաւիայէն առնելուն պէս, կուգանք մենք:

ԼԵՊ. Մինչև ձեզ ձեր զինուորի հագուստին մէջ տեսնելըս,
Որ զոյգիդ ալ պիտի վայէ, մընաք բարով:

ՄԵԿ. Ճամբուն նկատմամբ
Իմ ըմբռնումն, Ձենէ առաջ մենք պիտի լե'որ գտնուինք,
Լեպիտոս:

ԼԵՊ. Աւելի կարճ է Ձեր ճամբան, իմ խորհուրդներս
Զիս շատ հոս հոն կը քաշեն: Իմ վրաս երկու օր կը շահէք:

ՄԵԿ. }
ԱԳՐ. } Պարոն, բարի յաջողութիւն

ԼԵՊ. } Երթաք բարով:

(Կը Բիլիէ)

Տեսարան Ե. — Ազեխսանդրիա — Կլեոպատրայի պալատը •
Կը մտնեն Կլեոպատրա, Շարմիան, Իռաա եւ Ալեխաս :

ԿԼԷՈ. Քիչ մը նուագ տուէք ինծի, նըւագ՝ սընճենդ մեղամաղձիկ
Մեզի նըման սիրազբա՛ց հոգիներու :

ՍՊԱՍ. Օ՛ն նուագ հոգ :
(Կը մտնէ Ներսէս Մարդիան)

ԿԼԷՈ. Թող մընայ . երթանք գնդակ խաղալ . եկո՛ւր , Շարմիան :

ՇԱՐ. Թեւս կը ցաւի . լաւագոյն է Մարդիանի հետ խաղաք :

ԿԼԷՈ. Կնոջ մը համար ներքինիի հետ խաղալ նոյն է կընոջ
Հետ խաղալ : Եկէ՛ք , պարոն , կը խաղաք դուք ինծի հետ :

ՄԱՐԴ. Որչափ որ կընամ , տիկին :

ԿԼԷՈ. Եւ երբ բարի կամք ցոյց տրուի , թէպէտ ան շա՛տ թերի մընայ ,
Գերակատարն արժանի է ներողութեան : Ալ չեմ ուզեր :
Տուր իմ կարթըս ինծի , երթա՛նք գետեզերք . հոն հեռուանց
Նուագի ձայնով , թեփոտ ձուկեր պիտի որսամ , իմ կեռ երկաթըս
Պիտի թափ անցնի անոնց լըպիրժ ծնօտներն ու երբ վեր
Քաշեմ գանոնք , ամէն մէկն Անտոնիոս մը պիտի ես
Համարիմ ու՛ ըսեմ , հա՛ , հա՛ , բռնեցի քեզ :

ՇԱՐ. Ի՛նչ գուարթ խաղ՝

Կատակ էր ան , երբ դուք գըրաւ դըրիք ձեր ձուկ որսալուն վրայ ,
Եւ Ձեր լուզորգն իջաւ ջուրն ու անոր կարթին աղած մէկ ձուկ
Մը անցուց զոր եռանդով ան վեր քաշեց :

ԿԼԷՈ. Այն ատեն , ո՛վ ժամանակ ,
Խնդալովըս համբերութի՛ւնը հատցուցի , ու ան՝ գիշեր
Խնդումովըս համբերութի՛ւնը ետ բերի , և միւս առտու
Իններորդ ժա՛մը դեռ չեղած , արբեցուցի զինքն անկողին ,
Յետոյ վրան զրի հագուստներս ու վերարկուս , մինչ ես
Փիլիպպիի իր թուրը մէ՛ջքըս կապեցի .

(Կը մտնէ պարգամաբէր)

Իտալիայէ՛ն

Լուր կայ ո՛հ : Շուտ կըռէ՛ բերրի լուրերդ ականջիս մէջ
Որ երկա՛ր ատեն անբեր մընացած է :

ՊՏԳՄ. Տի՛կին , տի՛կին :

ԿԼԷՈ. Անտոնիոս միթէ մեռա՞ւ : Եթէ ա՛տ ըսես , ա՛նզգամ ,
Կը մեռցընես քու տիրուհիդ , բայց եթէ լաւ ու ազատ
Անոր լուրն ինծի բերես , ա՛ն քեզ ոսկի , ու ահա իմ
Կապուտագոյն երակներըս համբուրելու . ձեռք մը զոր
Թագաւորներ կարօտ շրթով լափած են ու զողագին
Համբուրած :

ՊՏԳՄ. Նախ , տիկին , լաւ է ան :

ԿԼԷՈ. Քեզ աւելի՛

Ուրեմն ոսկի : Բայց հոս նայէ , մենք սովոր ենք ըսել նոյնպէս
Թէ մեռնողնե՛րը աղէկ են : Գործը հո՛գ բեր , ու ես ոսկին
Ձոր քեզ տըւի կը հալեցնեմ ու քու չարգրուց կոկորդէդ վար
Կը հոսեցնեմ :

ՊՏԳ. Ազնիւ տիկին , յտիկ ըրէք :
 ԿԼԷՈ. Լա՛ւ , լա՛ւ , ըսէ .
 Մտիկ կ'ընեմ : բայց դէմքիդ վրայ բարի չկայ , եթէ լաւ ու
 Ազատ ըլլայ Անտոնիոս — այդպէս թըրթո՞ւ դէմք պէտք էր
 Ատանկ բարի լուր փողելու աւետելու : Եթէ լաւ չէ ,
 Պէտք է քայիր օձապրտակ Մեգերայի նրման , ո՛չ թէ
 Չեւական մարդու մը պէս :

ՊՏԳ. Կը հաճի՞ք ինձ մըտիկ ընել :
 ԿԼԷՈ. Սրաէս կուգայ
 Քեզի դարնել դեռ բերանըդ չբացած , սակայն դարձեալ
 Եթէ ըսես կ'ապրի , լա՛ւ է Անտոնիոս , կամ բարեկամ
 Կեսարի հետ , կամ գերի չէ բռնուած անկէ , քեզ ոսկիի
 Տարափի մէջ կը կեցընեմ , ու մեծագին մարգարիսներ
 Կը տեղացնեմ .քու վըրայ :

ՊՏԳ. Տիկին , լաւ է ,
 ԿԼԷՈ. Ի՞նչ լաւ ըսիր :

ՊՏԳ. Եւ բարեկամ Կեսարի հետ :
 ԿԼԷՈ. Գուն պարկե՛շտ մարդ ես իրաւ :
 ՊՏԳ. Ան ու Կեսար աւելի մեծ բարեկամ են քան երբէք :

ԿԼԷՈ. Թող բազրըդ քեզ շինուի ինէ :
 ՊՏԳ. Բայց սակայն , մե՛ծըդ Տիկին :
 ԿԼԷՈ. Ես չեմ սիրեր բայց սակայն . ան՝ նախընթացն իր բարի
 Կը ստորնացնէ . բայց սակայնն երթայ գրողին : Բայց սակայնը
 Բանտապահ մ'է որ մէջտեղ պիտի բերէ չարագործ
 Մը հրէշային : Բարեկա՛մ , քու նիւթերուդ ծրարն ամբողջ ,
 Խնդրեմ թափէ ականջիս , լաւն ու բարին միահաղոյն :
 Բարեկամ է Կեսարի հետ , կ'ըսես առողջ վիճակի մէջ
 Ու ազատ է կ'ըսես նաև :

ՊՏԳ. Ազա՛տ , տիկին , ո՛չ ես չառի
 Այդպիսի լուր : Կապուած է ան Հոկտաւիային :

ԿԼԷՈ. Ո՞ր բարի
 Գործին համար :
 ՊՏԳ. Շատ բարի գործի մ'համար անկողնի մէջ :

ԿԼԷՈ. Գոյնըս գընաց , Շարմիան :
 ՊՏԳ. Ամուսնացած է ան , տիկին ,
 Հոկտաւիայի :

ԿԼԷՈ. Ամենէն քարշ ժահրոտ ժանապետը բռնէ քեզ :
 (Վար կը շարէ)

ՊՏԳ. Ազնիւ տիկին , համբերութի՛ւն :
 ԿԼԷՈ. Ի՞նչ կ'ըսես հոգ : Գնա՛ կորսուէ՛ ,
 Զարհուրելի ստոր արարած , թէ ոչ աչքերըդ կը հանեմ
 Գնտաղնիսու պէս կը նետեմ ոտքիս առջև , գըլուխդ անմայ
 Կը դարձընեմ :
 (Վեր շար կը Կարէ)

Երկաթաթել խարազանով պիտի ծեծուիս ,

Աղջուրի մէջ պիտի ետուիս , երկարածից թարշաուումով
Տանջիկ տանջիկ :

ՊՏԳՄ. Ազնիւ տիկին , լուրը բերողն ես եմ , բայց ոչ
Խնամախօսն ալ :

ԿԼԷՈ. Հիմա ըսէ որ այդպէս չէ , գաւառ մ'ամբողջ
Կուտամ քեզի ու բարձրագլուխ կ'ընեմ պատուով . զիս կատղութեան
Գրբգուելուց համար կերած հարուածըդ քեզ հաշտութեան ուխտ
Պիտի կազմէ ու ես վըրան կ'աւելցընեմ զեռ ինչ պարգև
Որ դուն կրնաս համեստօրէն խնդրել մենէ :

ՊՏԳՄ. Ամուսնացած
Է ան , տիկին :

ԿԼԷՈ. Սրիկայ , ա՛լ բաւ է որչափ որ սպրեցար :
(Իայն ղը կը տաչէ)

ՊՏԳՄ. Փախիմ ուրեմն : Ի՞նչ միտք ունիք , տիկին : Յանցանք ես չեմ գործած :
(Կը ղէկէ)

ՇԱՐ. Բարի տիկին , ինքըզինքնուդ տէր եղէք : Մարդն անմեղ է :

ԿԼԷՈ. Կան անմեղներ որ կայծակին զարկուածէն չեն խուսափիր .
Թող եգիպտոս լուծուի հալի Նեղոսի մէջ , և հեղհամբոյր
Արարածներ ա՛կնքը օձ ու իժ դառնան : Կանչէ նորէն
Սա վատ ըստրո՛ւկը , թէպէտ խելահարուած , խածնելու չեմ
Ձինքը ես : Օն , կանչէ :

ՇԱՐ. Կը վախնայ գալ :

ԿԼԷՈ. Վընաս չեմ
Ըներ իրեն .

(Շարժան կը ղէկէ)

Այս ձեռքերն ազնուութենէ կը թերանան
Որ կը վարենն ինէ ստոր մէկ անձի 'մ մինչդեռ ե՛ս
Ինքըս պատճա՛ւը տըւած եմ ինքըզինքիս *

(Կը մընէն Շարժան և պարփանաւոր)

Եկո՛ւր , պարոն :

Թէպէտ ուղիղ , բայց ոչ երբէք բարի է չար լուր բերել
Շնորհաւոր լուր մը հազար բերանով տուր բայց թող գէշ լո՛ւրը
Ինքըզինքն յայտարարէ , երբ զգացուի :

ՊՏԳՄ. Պարտքըս ըրի :

ԿԼԷՈ. Ամուսնացած է ուրեմն :

Իմ ատածէս աւելի չե՛մ կրնար հիմա քեզ ատել
Եթէ նորէն այո՛ ըսես :

ՊՏԳՄ. Ամուսնացած է , տիկին .

ԿԼԷՈ. Տունըդ քանդկն աստուածներն , զեռ ստոր փրայ՛ ես յամաւած :

ՊՏԳՄ. Սո՛ւտ խօսելու եմ , տիկին :

ԿԼԷՈ. Ո՛հ իցի՛ւ թէ սուտ խօսէիր
Եւ թող կէսն Եգիպտոսիս ջուրերու տակ ծածկուած ըլլար

*) Ըսել կ'ուզէ « թոյլ տալով որ ես Ահսոնիոսի համար ունեցած սիրոյս այս
աստիճան գերի դառնամ :

Ու աւագան գործած թեփոս օձերու: Գնա՛ կորսուէ՛:
Կէմբըղ Նարկիդ եթէ նկարուած ունենայիր, ամենաագեղ
Պիտի ինծի երեւայիր:

ՊՏԳ. Չեր բարձրութեան ներողութիւնը
Կը հայցեմ:

ԿԼԷՈ. Ամուսնացած է ըսիր:

ՊՏԳ. Մի՛ բարկանայ

Որ չեմ ուզիր Ձեզ բարկացնել: Շատ անարդար կը թուի Ձեր իսկ
Ինձ ըսել տուածին համար պատժելը զիս: Ամուսնացած
է Հոկտաւիդ:

ԿԼԷՈ. Ո՛հ, ի՛նչպէս անոր յանցանքը քեզ սրիկայ
Մը կը դարձնէ, դուն որ հաստատ գիտցածըդ չես: Գընա՛ սրկէ:
Քու Հըռովէն հետըդ բերած փաճառքներըդ ամէնքն ալ
Սուղ են ինծի: Չեղբրդ մընան, ու անոնցմէ տունդ աւերի:
(Կը Ռիլի գործածուողը)

ՇԱԲ. Բարձր տիկին բարեհաճ, համբերութիւն:

ԿԼԷՈ. Անտոնիոս
Գոված տտենս, կեսարը վար գարկած եմ ես:

ՇԱԲ. Շատ հեղ, տիկին:

ԿԼԷՈ. Հիմա անոր հատուցումն է աս ինծի: Տա՛ր զիս հոսկէ:
Կը նուազիմ, Իւան, Հա՛րմիան: Բան չի կայ: Գնա՛ նա մարդուն,
Ալէքսան, քեզ որ տայ տեղեկութիւն Հոկտաւիդի կերպարանքին,
Ցարիքին, բընութեանը վըրայ և դուքս չի ձգէ՛
Կոյնը մային: Շուտ լուր բեր ինձ:
(Կը Ռիլի Ալէտուս)
Յաւիտեան թող երթայ:

Ո՛չ, չերթայ — Հարմիան, թէպէտե ան մէկ կողմէն
Մեղուսայի մը պատկերն է ք միւս կողմն ո՛հ Արէս մըն է*:

(Մարդիանէն)

Պատուիրէ՛ Ալէքսասին լուր բերէ ինձ թէ հասակն
Ինչքան բարձր է: Մեղքըցիր զիս, Հա՛րմիան, բայց մի՛ խօսիր ինծի:
Իմ սենեակըս տար զիս, օ՛ն:

(Կը Ռիլի)

Տեսարան 2. — Միսեոսի մօտ.

Փողոսայն: Կը մտնեն Պոմպէոս և Մեմուս մէկ կողմէն,
Փողոլ և Բմբուկոլ ուրիշ կողմէ՛ Կեսար, Աննանիոս,
Լեպիոս, Մեկեմուս, զօրեռով, գինուտուական քայլով:

ՊՈՄ. Ձեր պատանդներն իմ քովս են, նոյնպէս ունիք դուք իմիններս,
և միտան պիտի խօսինք՝ պատերազմի չի ձեռնարկած:

ԿԵՍ. Շատ պատշաճ է որ խօսելու գանք մենք նա՛խ, և ճիշտ ատոր

*) Ակնարկուրիսն ճի՛ն ասեցներ շա՛ս տարածուած այն եկարեւրուն՝ որոնք զիսովք երբ
մէկ կողմ մը կեցած նայէր, մէկ կերպ անձ մը կը ցուցնէին և երբ միւս կողմը կեցած
նայէր, բոլորովին տարբեր անձ կամ պատկեր կը ցուցնէին:

Համար զրկած ենք նախապէս գրաւոր մեր մտադրութիւնն ,
Որ , եթէ վրան խորհած ես , գիտցուր մեզի թէ քու դժգոհ
Թուրդ կապէ՞ պիտի իր տեղն ու ետ ամնի Սիկիլիա
Բազում մատաղ հասակագեղ երիտասարդ որք այլապէս
Պիտի կորուստ երթան հոս :

ՊՈՄ. Ձեզ երեքնուդ միասին ,
Այս մեծատարր աշխարհիս միակ աւագներուդ , աստուածներուն
Գլխաւոր գործիչներուդ կ'ըսեմ ահա թէ չեմ գիտեր
Ինչո՞ւ հայրըս վրէժխնդրի կարօտ մընայ , մինչ ունի ան
Զաւակ մը ու բարեկամներ . քանի որ Յուլիոս Կեսար
Որ Փիլիպպի ազնիւ Բրուտոսն եկաւ խռովել ոգեգարծիկ ,
Հոն տեսա՛ւ իրեն համար Ձեր գուն գործելն : Ի՞նչ էր այն
Որ կասիո՛սը գունատ գրդեց դաւի , ի՞նչ էր որ
Հանրամեծար , պատուաւոր Հռոմէացւոյն՝ Բրուտոսին
Միւս զինեալ ընկերներուն հետ միասին — ամէնքն ազա՛ր
Ազատութեան սիրարկուններ — արեւնո՛վ ոռոգել տուաւ
Կապիտոլն , եթէ ոչ սա՛ որ կ'ուզէին թէ մէկ մարդ մը
Սոսկ մարդ մ'ըլլայ : Եւ ճիշտ ինձ ա՛ս սարքել տուաւ
Իմ տորմիլըս որուն բեռան տակ կը փրփրայ ծովը ցասկոտ ,
Որով միտքս էր պատուհասել ապաստիքն որ չարակա՛մ
Հըռոմ՝ թափեց ազնուակա՛ն հօրըս վըրայ :

ԿԵՍ. Մի՛ այդքան շուա :
ԱՆՏ. Գուն չես կրնար մեզ , Պոմպէ՛ , ահաբեկել քու նաւերովդ :
Կը խօսինք հե՛տըդ ծովու վրայ . ցամաքի վրայ քաջ գիտես թէ
Քանիպատիկ աւելի ենք մենք քենէ :

ՊՈՄ. Յամաքի վրայ
— Իրաւ ես — գուն աւելի ունիս ինէ հօրըս տունը
Զոր չես վճարած * : Բայց քանի որ կուկուկն իրեն չի շիներ տուն ,
Մէջը մնացիր ցորչափ կրնաս :

ԼԵՊ. Շընորհ ըրէք մեզ ըսելու
— Զի այդ խօսքերն մեզ ներկայէն կը շեղեցնեն — թէ ի՞նչպէս
Կ'ընդունիք մեր Ձեզ զրկած առաջարկներն :

ԿԵՍ. Խնդիրն հոգ է :
ԱՆՏ. Որոնց մի՛ հաճութիւն տաք աղաչուելով , այլ կշռելով
Ընդունուելու արժէքնին :

ԿԵՍ. Եւ դեռ անոնց հետագան ,
Եթէ ուզէք աւելի մեծ բաղլի ձգտիլ :

ՊՈՄ. Կ'առաջարկէք
Գուր ինձի Սիկիլիան ու Սարտինիան , և ես պէտք է
Ծովը սրբեմ ծովահէնէ բոլորովին , յետոյ զրկեմ
Հըռոմ՝ ցորենի այսքան չափեր . երբ այս միաբան որոշուի ,

* Մեծն Պոմպէոսի եւ Յուլիոս Կեսարի մէջ անագին ոգորումէն յետոյ՝ երբ առաջինը
Փարոպլիա վնասական պատերաթիւեր կրեց , Կեսարի կուսակցութեան պատկանողներէ շատ
գրաւեցին հակառակ կուսակցութեան պատկանողներու տուներ , եւ Մարկ Անտոնիոս տուն
իդ՝ որ առաջ մեծն Պոմպէի բնակութիւնն էր :

Պիտի մեկնինք չի հերձաւած մեր թրի բերան ու կտ տանինք
Մեր ասպարնէ՛րը չի գրծուած .

ԿԵՍ. }
ԱՆՏ. } Այո՛, ա՛տ է մեր առաջարկ :

ԳՈՄ. Գիտցէ՛ք ուրեմն , ես հոս եկայ Ձեր առաջ Ձեր առաջարկն
Ընդունելու պատրաստ մի մարդ , բայց Անտոնիոս նեղարտութիւն
Տուաւ ինձ քիչ մը . թէպէտ ըսելս անոր գովեստն առնէ տանի ,
Պէտք է գիտնաք թէ երբ Կեսար ու Ձեր եղբայր կուռի էին ,
Ձեր մայրն եկաւ Սիկիլիա և ջերմ՝ գըտաւ բարի գալուստն
Ու մտերմիկ :

ԱՆՏ. Լըսած եմ ես ատ Պոմպէոս ու շատ պատրաստ
եմ իմ առա՛տ շնորհակալիքս յայտնելու զոր Ձեզ պարտիմ :

ԳՈՄ. Տուէք ինձի ձեռքերնիդ : Չկարծեցի , պարոն , որ Ձեզ
Հանգիսիմ հոս :

ԱՆՏ. Արեւելք անկողիննէ՛րը փափուկ են ,
եւ Ձեզ պարտիմ շնորհակալիք որ զիս հոս կոչած եղաք
Մըտադրածէս կանխագոյն , զի շահաւոր ելայ ատով :

ԿԵՍ. Վերջին անգամ Ձեզ տեսնելէս ի վեր Ձեր վրայ փոփոխում կայ :

ԳՈՄ. Կարելի է . սաչափն ըսեմ թէ չեմ գիտեր ի՞նչ հաշուենիշ
Դէմքիս վրայ կը խաղցընէ բազզը դժնէ . սակայն երբէք
Ներսըս մուտ չի՛ պիտի գործէ որ սիրտս իրեն ծառայ ընէ :

ԼԵՊ. Բարի դիպում :

ԳՈՄ. Յուսամ այդպէս , Լե՛պիտոս : Այսպէս հիմա
Համաձայն ենք . կը հայցեմ որ մէջերնիս հաւանութեան
Դաշինքը գրի առնրւի ու կընքուի :

ԿԵՍ. Ասկէ ետք ա՛տ
կայ ընելու :

ԳՈՄ. Դեռ չի զատուած՝ ուրախ խնջոյք մենք պիտի տանք
Իրարու , և վիճակով թէ ով առաջ պիտի սկսի :

ԱՆՏ. Ես Պոմպէոս :

ԳՈՄ. Ո՛չ , Անտոնիոս , վիճակ քաշէ , բայց սկիզբէն
Եւ կամ յետոյ , եգիպտական Ձեր փափկանուրբ խոհերութիւնն
Անուն ու յարգ պիտի ստանայ : Լըսած եմ թէ Յուլիոս Կեսար
Հացկերոյթով հոն միս կապեց :

ԱՆՏ. Շատ բաներ էք դուք լըսեր :

ԳՈՄ. Բարի մտքով ըսի , պարոն :

ԱՆՏ. Ու անոր հետ բարի խօսք :

ԳՈՄ. Գէթ ատ է իմ լսածըս :

Ու դեռ լըսած եմ նաև թէ Ապոլոգոր օր մը տարաւ . . .

ԷՆՈ. Աչ բաւ է ատ , ըսենք տարաւ , լըմըննայ :

ԳՈՄ. Ի՛նչ , խնդրեմ :

ԷՆՈ. Պաստառի մէջ թագուհի մը Կեսարին :

ԳՈՄ. Կը ձանջնամ ես

Քեզ հիմա . ի՞նչպէս կ'երթաս , զօրական :

ԷՆՈ Լաւ և պէտք է

Որ լաւ ըլլամ, զի կը տեսնեմ չորս խնջոյքի պատրաստութիւն
կը տեսնուի :

ՊՈՄ. Տուր ինձ քու ձեռքըդ որ սեղմեմ: — Երբէք չեմ
ես քեզ ստած: — Տեսած եմ քու կուռիլըդ, երբ արի գնացքըդ
իմ նախանձրս շարժած է:

ԷՆՈ. Պարոն, երբէք Ձեր վրայ շատ սէր
Ձեմ ունեցած, բայց գոված եմ Ձեզ երբ դո՛ւք իմ ըսածէս
Տասն անգամ աւելիին արժանաւոր գտնուած էք:

ՊՈՄ. Ախորժ կուգայ պարզիտութիւնդ: Ան քեզ բընաւ գէշ չի վայլեր:
Ցոկանաւիս վրայ ամէնքնիդ կը հրաւիրեմ: Տեսաք, կ'երթաք
Դուք առջեւէն:

ԿԵՍ. }
ԱՆՏ. } Դո՛ւք, պարոն, մեզի ձանքան ցուցուցէք:
ԼԵՊ. }
ՊՈՄ. Եկէք, օն:

(Կը վերնն ահարժ քաջի Մեհա... ու Էնթարթ...)

ՄԵՆ. (Մեկուսի) քու հայրդ, Պոմպէոս, երբէք ըրած չպիտի ըլլար այս
դաշինքը: —

(Էնթարթոն) Ես ու դուք տեսած ենք զիրար:

ԷՆՈ. Ծովու վրայ, կարծեմ:

ՄԵՆ. Այո, պարոն

ԷՆՈ. Աղէկ գործ տեսաք ծովի վրայ,

ՄԵՆ. Եւ դուք ցամաքի վրայ:

ԷՆՈ. Ով զիս գովէ, ես ան գովելու պատրաստ եմ, թէպէտ ցամաքի վրայ ըրածս
չկրնար ուրացուիլ:

ՄԵՆ. Եւ ոչ ալ ծովի վրայ իմ ըրածս:

ԷՆՈ. Այո՛, կայ բան մը զոր կրնաք ուրանալ՝ նոյն իսկ ինքզինքնիդ ազատելու համար.
մեծ աւագակ մը եղած էք ծովի վրայ:

ՄԵՆ. Եւ դուք ցամաքի վրայ:

ԷՆՈ. Ատ կէտին կ'ուրանամ ցամաքի սպասս: Բայց տուէք ինձի Ձեր ձեռքը, Մենաս.
Եթէ մեր աչքերը իշխանութիւն ունենային, կրնային հիմա բռնել երկու աւագակներ որ կը
համարուրուին:

ՄԵՆ. Ամէն մարդոց դէմքերը վստահելի են, ինչ որ ալ ըլլայ ձեռքերնին:

ԷՆՈ. Բայց երբէք չկայ ազուր կին որ վստահելի դէմք ունենայ:

ՄԵՆ. Ձուր բամբասանք չէ: Սիրտ կը գողնան:

ԷՆՈ. Հոս եկանք ձեզի հետ պատերազմելու:

ՄԵՆ. Իմ մասիս, կը ցաւիմ որ խմելու թափուեցաւ գործը: Պոմպէոս այս օրս ծիծաղե-
լով մը իր բազը ձեռքէ կը հանէ:

ԷՆՈ. Եւ եթէ ձեռքէն հանէ, ապահովաբար, արտասուելով չէ որ ետ կրնայ բերել
նորէն:

ՄԵՆ. Ճիշդ ըսածնուդ պէս, պարոն: Չէինք սպասեր հոս Մարկ Անտոնիոսի. ինդրեմ,
իրա՞ւ կլէոպատրայի հետ ամուսնացած է:

ԷՆՈ. Կեսարի քոյրը Հոկտաւիա կը կոչուի:

ՄԵՆ. Ստոյգ է, պարոն. Կայիտ Մարկելլոսի կինն էք:

ԷՆՈ. Բայց հիմա Մարկոս Անտոնիոսի կինն է:

ՄԵՆ. Ի՞նչ, խնդրեմ:

ԷՆՈ. Ստոյգ է:

ՄԵՆ. Այն ժամանակ կեսարն ու ան յաւիտեան կապուած են իրարու:

ԷՆՈ. Եթէ ես պարտաւոր ըլլայի գուշակութիւն ընելու այս միացումին վրայ, այդ կերպ չէի կանխատեսեր:

ՄԵՆ. Կարծեմ այդ խորհուրդին օգտի նկատումը աւելի գործ տեսաւ այդ ամուսնութեան մէջ քան թէ երկու կողմանց սէրը:

ԷՆՈ. Ես ալ այդպէս կը խորհիմ: Բայց պիտի տեսնէք, իրենց բարեկամութիւնը միասին կապել թուող կապանքը ի՞նչ պիտի ըլլայ իրենց բարեկամութեան խեղդիչը: Հոկտաւիան մաքուր, ցուրտ ու ծանր բարք ու վարք ունի:

ՄԵՆ. Ո՞վ չուզեր իր կընոջ այդպէս ըլլալը:

ԷՆՈ. Ան որ ինքը ատանկ չէ, այսինքն Մարկ-Անտոնիոս: Անկա նորէն իր եգիպտական սորված կերակուրին պիտի դիմէ, այն ժամանակ Հոկտաւիայի հառաչքները պիտի փչեն կեսարին կրակը վառեն, և ինչպէս առաջ ըսի, ան որ իրենց բարեկամութեան ուժն է, անմիջական առիթը պիտի ըլլայ իրենց պառակտումին: Անտոնիոս գոհացում պիտի տայ իր սէրին հոն ուր է ան, հոս լոկ իր օգտին հետ ամուսնացաւ:

ՄԵՆ. Այդպէս կրնայ ալ պատահիլ: Եկէք, պարոն, կ'ելլէք նաւ: Կենաց մը ունիմ ձեզի:

ԷՆՈ. Պիտի ընդունիմ զայն, պարոն. վարժեցուցինք մեր կսկորդները Եգիպտոս:

ՄԵՆ. Օ՛ն, երթանք:

Տեսարան Է.—Միտեմոմ լեռան առջեւները—Պոմպեոսի սորմիդին վրայ, նուագածուրիւն.

Կը մտնեն երկու երեք ծառաներ սեղանով մը:

Ա. ԾԱՌԱՍՑ. Հոս պիտի ըլլան, մա՛րդ: Ոտքերնուն վրայ անկուածնին արդէն խախուցած է. պտըտիկ հով մը գետին պիտի կործանէ զիրենք:

Բ. ԾԱՌԱՍՑ. Լեպիտոսին երեսները կ'այրին:

Ա. ԾԱՌԱՍՑ. Մնացուկներ խմել տուեր են իրեն:

Բ. ԾԱՌԱՍՑ. Երբ իրար խթեն կատականքով, «Ալ մ'ընէք» կը պուայ, անոնք իր աղաչանքին կը պառկեցնէ, ինքըզինքն ալ՝ խմելիքին:

Ա. ԾԱՌԱՍՑ. Բայց ատ աւելի մեծ հակառակութիւն կը հանէ իր ու իր խելքին մէջ:

Բ. ԾԱՌԱՍՑ. Բայց ատանկ կ'ըլլայ մեծ մարդերու ընկեր ըսուելով անուն ունենալը: Հա ինծի օգուտ չունեցող եղէպ մը, հա՛ տապար մը որ չեմ կրնար վերցընել:

Ա. ԾԱՌԱՍՑ. Խոշոր ոլորտի մը մէջ մտցուիլ ու մէջը շարժելը չտեսնուիլ կը նմանի աչք կենալիք տեղը ծակեր գտնուելու որոնք խեղճուկրակ կերպով անձրագ կը ձգեն ու կ'անձրկեն այտերը:

(Փողի վրայ եղանակ մը կը հնչեցնեն — կը մտնեն Կեսար, Անտոնիոս, Լեպիտոս, Պոմպեոս, Ագրիպպա, Մեկենաս, Էնոբարբոս, Մեկաս, ուրիշ սպաներու հետ:)

ԱՆՏ. (Կեսարէն) Այսպէս կ'ընեն. Նեղոսին ջրին հոսումը կը չափեն Բուրգին վըրայ աստիճան-նշաններէն. բարձրութենէն, Ցածութենէն կամ միջինէն կը գիտնան թէ պարտա՞տ տարի Պիտի ըլլայ թէ նուազ. որքան բարձրը Նեղոսն ուռի, Այնքան առատ կը խոստանայ: Երբ կը քաշուի, սերմնացանն իր հատիկները տիղմին, սրկին վըրայ կը ցանէ
Ու շուտ մը հո՛ւնձքը կ'աւնէ:

ԼԵՊ. Տարօրինակ օձեր ունիք զուր հոնտեղ:

ԱՆՏ. Կայ, Լեպիտոս:

ԼԵՊ. Եգիպտոսի սձերնիդ տիզմերնէդ յառաջ կուգայ արեւնուդ ազգեցութեամբ . նոյնպէս կոկորդիլոսնիդ :

ԱՆՏ. Այդպէս են :

ՊՈՄ. Նստեցէք, ու գինի հող. Լեպիտոսի կենացը :

ԼԵՊ. Պէտք եղածին պէս աղէկ չեմ գգար, բայց բնաւ ետ չեմ մնար :

ԻՆՈ. Ոչ մինչև քնանալդ, մինչև ան ստեն շատ յառաջ գացած պիտի ըլլաս վախեմ :

ԼԵՊ. Մ'ըսէք. ապահով ես լսած եմ որ Պտղոմեանց փրփուքները (բուրգերը) շատ պատուական բաներ են, ստոր ըսելիք չկայ, լսելըս լսած եմ :

ՄԵՆ. (Մէկոսի Պոմպեոն) Պոմպէ. մէկ բառ :

ՊՈՄ. (Մէկ. Մէկոսին) Ահանջէս վար, ըսէ, ի՞նչ է :

ՄԵՆ. (Մէկ. Պոմպեոն) Շատ կը խնդրեմ, ձրգէ աթո՛ւղդ, ծովապետ, ու լըսէ ինձ Որ բառ մ'ըսեմ :

ՊՈՄ. (Մէկ. Մէկոսին) Համբերէ. մէկ պահեկէն : Այս գինին Լեպիտոսի կենացն է :

ԼԵՊ. Ի՞նչ կերպ բան է կոկորդիլոսնիդ :

ԱՆՏ. Չե մը ունի, պարոն, որ ճիշդ իր ձեն է, ու որքան լայնութիւն ունի ճիշդ ան լայնքն է, ճիշդ բարձր եղածին չափ է բարձրութիւնը, ու կը շարժի իրեն յատուկ գործարաններովը, կ'ապրի իրեն առած սնունդովը, ու կեանքի տարեբքը անգամ մը էր իր մէջէն դուրս ելլեն, կը հոգեփոխի :

ԼԵՊ. Ի՞նչ գոյն ունի :

ԱՆՏ. Ինք իր գոյնը :

ԼԵՊ. Տարօրինակ օձ է .

ԱՆՏ. Ի՛ ա : Ու արցունքներն ալ թաց են :

ԿԵՍ. Այս նկարագրութիւնը պիտի գոհացնէ՞ զինքը :

ԱՆՏ. Պոմպէին իրեն նուիրած կենացներովը պէտք է գոհացնէ, եթէ ոչ հեշտակցիկին մեծն է :

ՊՈՄ. (Մէկ. Մէկոսին) Գնա կորիր, պարոն, կորիր : Խօսիլ ուզածդ է ատ նորէն . Գընա ըրէ ըսածըս : Ա՛ւր է սպասած բաժակըս :

ՄԵՆ. (Մէկ. Պոմպեոն) Հաւատարիմ ծառայութեան սիրուն, եթէ կ'ուզես լըսել, ել աթոռէդ :

ՊՈՄ. (Մէկ. Մէկոսին) Խենթեցեր ես դուն կարծեմ : Ի՞նչ կայ եղած (Կ'ելլէ գեղէն ու թէ կողմ կը տալէ)

ՄԵՆ. Ես միշտ Ձեր բաղդ ու վիճակին ջերմ հետեւող մ'եղած եմ

ՊՈՄ. Հաւատարիմ ծառայող մը եղած ես շատ : Ա՛ս է ինձի ըսելիքըդ : — Զուամ եղէք, տեսք իմ :

ԱՆՏ. Այս մատնիչ

Աւազուտէն, Լեպիտոս, հեռու կեցիր, կ'ընկուզիս :

ՄԵՆ. Կ'ուզե՞ս որ ողջ աշխարհի տէրն ըլլաս դուն,

ՊՈՄ. Ի՞նչ կ'ըսես :

ՄԵՆ. Կ'ուզե՞ս որ դուն ողջ աշխարհի տէրն ըլլաս : Երկրորդ անգամ եղաւ աս :

ՊՈՄ. Ի՞նչպէս պիտի ըլլայ ատ .

ՄԵՆ. Միայն բացուէ

Գազափարին ու թէպէտ իմ աղքատ ըլլա՛լըս գիտես,

Ես ան մարդն եմ որ ողջ աշխարհը քեզ կրնամ պարգեւել :

ՊՈՄ. Աղէկ մը դուն արբա՞ծ ես :

ՄԵՆ. Ոչ, Պոմպէ, ես խընամով

Զգոյշ կեցայ խըմելէ : Գուն երկրաւոր Արամազդն ես ,

Եթէ ըլլալ սիրտ ընես: Ինչ որ երկինք կը պարուրէ,
կամ ովկիան ծայրափակէ, քուկդ է եթէ ուզես ստանալ:

ՊՈՄ. Յոյց տուր ինծի թէ ի՞նչ կերպով,

ՄԵՆ. Այս երեք բաժանւորներն

Աշխարհիս, այս մրցակից պետերը քու նաւիդ մէջ են.

Թոյլ տուր կտրեմ պարանն ու՝ երբ բացն ելլենք մենք ծովուն

Սուրը զընենք կոկորդնուն: Քուկդ է ամէն ինչ որ հոգ է:

ՊՈՄ. Ա՛հ պէտք է ատի ըրած ըլլայիր դուն, 'ւ ոչ թէ ինծի

Վրան խօսած: Իմ կողմէս ատ՝ անզգամութիւն է գարշելի,

Իսկ քու կողմէդ՝ բարի ըսպաս պիտի ըլլար: Պէտք է գիտնաս,

Իմ շահըս չէ առաջնորդն իմ պատիւիս, պատիւս՝ անոր:

Գընա զըզջա՛ որ լեզուդ այդպէս մտանեց քու գործըդ.

Երբ գործուած ըլլար անյայտ, յետոյ ես զայն լաւ գործուած

Պիտ՝ գտնէի, բայց ես պարտիմ դատապարտել զայն հիմա:

Դադրէ մտքէդ ու խըմէ:

ՄԵՆ. (Մեկտէ) Ասոր համար ալ չըպիտի

Բնաւ հետեւիմ քու նուազած նըսեհիդ: Փնտրուողն.

Ու չառնողն երբ անգամ մը ընձեռուի, ալ գտնելիք

Չունի բընաւ:

ՊՈՄ. Կենացն է աս Լեպիտոսին:

ԱՆՏ. Առէք տարէք

Զինքը ցամաք. Անոր տեղն ես կ'ընդունիմ ատ, Պոմպէոս:

ԷՆՈ. Աս, Մենաս, քու կենացդ է:

ՄԵՆ. Բարի եկար, Էնորարբ:

ՊՈՄ. Լեցուցէք մինչև բաժակը ծածկըլի:

ԷՆՈ. Ահա քեզի

Զօրաւոր մարդ մը, Մենաս:

(Յոյց որով որսաստորը որ Մենասը կը որսէ)

ՄԵՆ. Ինչո՞ւ:

ԷՆՈ. Մա՛րդ, չե՞ս տեսներ, աշխարհիս երրորդ մասն ան կը տանի:

ՄԵՆ. Ուրեմն երրորդ մասն արբած է, իցի՛ւ ամբողջն ատանկ ըլլար

Որ հարթ երթար անիւի վրայ:

ԷՆՈ. Դուն ալ խմէ. անիւ շատցուր:

ՄԵՆ. Օ՛ն:

ՊՈՄ. Աղէքսանդրեան խրախճան չեղաւ դեռ ասիկա:

ԱՆՏ. Ասոր կ'երթայ

Կը հասուննայ: Ամանները բերէք հօ՛. Կեսարի՛ն

է այս բաժակ:

ԿԵՍ. Աղէկ կ'ըլլար զանց ընէի: Հրէշային

Աշխատանք է աս, գինի զրկել ըզեզըս որ լուացուի

Ու աւելի զայն պղտորել:

ԱՆՏ. Ժամանակին զաւակն եղիր,

ԿԵՍ. Տէ՛րը եղիր. պատասխանս է իմ ասոր: Բայց աւելի

Կ'ընտրեմ չորս օր՝ ամէն խմելէ կտրուիլ քան մէկին մէջ

Այսքան խըմել:

ԷՆՈ. (Անգոնիտին) Է՛հ քաջարի իմ կայսրըս: Հիմա պարե՞նք

Եզիպտոսի բաբոսական պարերն ու մեր գինարբօ՛ւքը

Տօններ մեծահանդէս:

ՊՈՄ. Տեսնենք ատի, բարի գինւոր :

ԱՆՏ. Եկէք ամենքս իրարու ձեռք միացնենք, մինչև որ
Յաղթող գինին զգացունմնիս խորասուզէ գիրգ ու փափուկ
Լէթէի մէջ :

ԷՆՈ. Ամենքդ միացուցէք ձեռքերնիդ .
Բարձրաձայն նուագներով մեր ականջնե՛րը կոծեցէք
Մինչև ևս ձեր տե՛ղը դընեմ ձեզ, յետոյ տըղան պիտի երգէ .
Իւրաքանչիւր մարդ ատենին պէտք է յանկե՛րգը գոռայ
Այնքան բարձր որքան ներեն իրեն կողե՛րը հուժկու :
(Նստադասութիւն, Էնթարթոս Եր+ Եր+ի Բացոցած և շեշտադրէ շէրէն+)

Ե Ր Գ

Եկուր ով դուն որթատուկի իշխան միակ,
Գիրուկ Բաքոս մանր աչքերովըդ կարմրորակ .
Տակառներուդ մէջ մեր հոգեր թող ընկղմին,
Պաղողներովդ պրտակ կապուի մեր գլխին .
Նըմցուր մեզի մինչև աշխարհք դառնայ չորս դին
Նըմցուր մեզի մինչև աշխարհք դառնայ չորս գին :

ԿԵՍ. Ի՛նչ կ'ուզէք դեռ աւելի : Գիշեր բարի, Պոմպէոս .
Եղբայր բարի, խնդրեմ ձենէ դադրեցնել ալ ատի,
Մեր ունեցած ծանր գործին հետ հաշտ չէ այս մեր ընթացքը
Թեթև : Ազնիւ տեարք, ալ բաժնուրիք : Կը տեսնէք որ
Մեր երեսներն այրել տուինք, նոյն իսկ ուժեղ Էնթարթոս
Գինին չափ ուժով չէ, ու իմ՝ լեզուս իսկ իր խօսածը
Կը մանրէ . այլանդակ այս գառանցանքն ամէնքս ալ
Խայտառակ ըրաւ գրէթէ : Ալ խօսքի ի՛նչ պէտք կը մընայ :
Գիշեր բարի : Ազնիւրդ իմ Անտոնիոս, ձեռքդ տուր :

ՊՈՄ. Ցամաքի վրայ պիտի ևս Ձեր փորձն ընեմ :

ԱՆՏ. Պիտի ընէք, պարոն, տուէք Ձեր ձեռքն ինձ : Ու անշուշտ

ՊՈՄ. Ով Անտոնիոս,
Հօրրս տունն էք գրաւած — բայց ալ ի՛նչ պէտք — բարեկամ ենք
Եկէք օն իջնենք նաւակ :

ԷՆՈ. Ձգոյշ եղիք որ չի յնար :
(Կը Բեկին ափէր Էնթարթոսէ և Մեռաւ դար)

Մենա՛ս, ցամաք պիտի չելլեմ :

ՄԵՆ. Ո՛չ, մ'ելլե՛ր . խուցըս եկուր .
Սա թմբուկնե՛րը, սա փողերն, սրինգներն ո՛ւր են մընացեր :
Թող Պոսիդոն իր ականջով լըսէ ո՛րքան մենք բարձրագոյ
Երթաք բարով կը մաղթենք այս մեծ աւա՛գ անձերուն .
Հնչեցուցէք, գետինն անցնիք, հնչունիդ դուրս հանեցէք օն :
(Փողայտն, Բեթո-Կեթոլ)

ԷՆՈ. Հո՛ կ'ըսէ ան . Քեզի է սա գլխարկը :

ՄԵՆ. Հո՛ : Ազնիւ ըսպայ, եկուր օ՛ն :

(Կը Բեկին)

(Շարունակելի)

Թարգմ. Գ. ՓԱՌՆԱԿ

ՅԵՂԻՆ ՅՈՒՌՈՒԹՔԸ

Քընարս գինիին մէջը թաթխեցի,
Եւ երբ ըսկըսայ նըւագել ես գայն,
Այգիէն խուժք խուժք այրիններ անցան:

Քընարս աղբիւրին մէջը թաթխեցի,
Եւ երբ թըրջըւած նըւագեցի գայն,
Սափորով արցունք առնելու եկան:

Քընարս արիւնին մէջը թաթխեցի,
Երբ գոհի ձայնով նըւագեցի գայն,
Մանուկներ եկան սուրբուռ նըման:

Քընարս՝ գայլէն աղիք մը սըւի,
Եւ երբ ըսկըսայ նըւագել ես գայն,
Եթ լեռնէն անդին ոչխարներ փախան:

Քընարս մոխիրին մէջը թաթխեցի,
Երբ ճարճատման պէս նըւագեցի գայն,
Այդ օր գիւղիս մէջ Տրդեհներ ինկան:

Քընարս բոցերուն մէջը վառեցի,
Հոգիիս խորը Տըթիւններ ինկան,
Որոնցմով կ'ուզեմ այրել ամէն բան:

ԵՂԵՐԱՄԱՅՐԵՐՈՒ ԳՈՎՔԸ

Երեք եղբայր ունէինք
Խորհուրդի պէս կախիցին,
Երեք քոյրեր ունէինք
Սիւնի մը պէս վառեցին:

Երեք գաւա՛կ ունէինք
Հանձարի պէս խղզեցին,
Երեք ոչխա՛ր ունէինք
Իրենցնուն պէս մորթեցին:

Երեք առններ ունէինք
Բոյնի մը պէս քանդեցին,
Երեք ծըխա՛ն ունէինք
Յոյսի՞ մը պէս մարեցին:

Երեք տաարա՛կ ունէինք
Բաղդի մը պէս թոցուցին,
Երեք վանդա՛կ ունէինք
Կուրծքի մը պէս կտորեցին:

Երեք յոյսեր ունէինք
Թարմ ծառին պէս կտորեցին,
Երեք ճամբա՛յ ունէինք
Երկնքի պէս ծածկեցին:

Այս ամենուն զէմ, ափսո՛ս,
Բողբընու համար սոսկ,
Երեք Աստուած չունէինք...

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

ՎԵՐՁԻՆ ԺՊԻՏԸ

Դ...ի յիշատակին

Անդրի ճերմակ գազարը անդորր
Դեռ նոր կ'ողջունէ այգուն պայծառ եղ.
Չորակին մէջեղ, լրո՛իկ, մեճաւոր,
Հանգստս կը փայլի առքւան վառ ցող:

Թրուչիկը կ'երգէ այգը հոն զըւարթ.
Դեք կը նստի ձորէն ոլորուն,
Սրգաւոր կընոջ փայլերով հանգստս.
Դաւեսն ու մութ անտառ կը բօթուեն խոր բուն:

Թաւուսին խորը ինկած մեճաւոր
Երկինք սեւեռած մեղուակըն աչուին,
Վիրաւոր փայլ մը պառկած է անձայն,
Կարծես սեցանոյնով կը սպասէ մէկին:

Լըւած է փողը ձորէն անաւոր,
Չքունար այլեւս գրեղակն նըրաւէկ,
Ու ամբխային գոռունն ու ժրխոր
Չեն արձագանգեր լեռներն անաբէկ:

Կը փրչէ նովը ձայնով լալագին,
Ու թեր բացած արծիւի հանգոյն՝
Մեղմիկ կը հրպի փայլ լայն վերին,
Ու վրճահագագ կը փայլի հեռուն:

Կ'ունայ գազանք լեռան ամայի.
Սարափն ու անը կ'իջեսն միաբան.
Ուրուրն ու ագուա կը ինչով վայրի,
Կը տօնեն մահուան տօնը յաղթական:

Ու ամայութեան գիրկը մեճաւոր,
Հըսկայ ու անուռ լեռներու կողմին,
Կը ննջէ կըստինն անձայն ու անդորր,
Կը նընջէ միմակ՝ ժրպիսը տուրթին:

Քամին աղբաձայն կը դադրի յանկարծ,
Ուրուր մէկէն կը կենայ անտար՝
Դիտելով կին մը մազերն արձրկած
Որ կուգայ կըսրած լեռ, ձոր, ապառած:

Թախիծը ինն է կարծես՝ կը փութայ.
Ահա էն կեցաւ կըստինն կողմին.
Կուրծքը վիտեռու ալիքներ կուտայ.
Սիրուն աչքերը յառած է վերին:

Ու ցաւի թափէն կողպըւած տուրթին
Կը նընջէ էնոր ձայնը ինչպէս լար.
Ու կ'երգէ փայլին երգը սրտտօրէն՝
Ժրպիսն ու լացը խառնելով իրար:

Եւ ա՛յո նըրարոր երգի նընչումէն
Ճեղային բացաւ աչքերը կամաց,
Քայց վառ գորովի ժրպիսը կրկին
Դալկացած դէմին թառեցաւ սառած:

ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՔԵԱՆ

Կ Ո Ր Ծ Ա Ն Ո Ի Ա Ծ Ը

Հեղինակութիւն ՇԻՐԱՆՁԱԴԵԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ



Արսաշխի սենեակը : Խորի պասի մեջ , աւելի դեպի ձախ՝ դուռը , որ սանում է ընդունարան-սենյակահաստն : Այս դրան քով , դեպի աջ , հասարակ անկողնակալ առանց «Չիր»ի : Անկողնակալի սակ երեւում է ձախարկը : Աջ պասի մեջ դուռ դեպի նախասենեակ , աւելի առաջ դեպի առանսենի կողմ մի փոփոխի գահաւորակ հնամաշ , քովն երկու արտ : Ձախ պասի մեջ մի հաս յուսանուտ առանց վարագոյրի : Լուսամտի առջեւ գրասեղան , վրէն գրէր , բոջիւրներ եւ այլն : Գրասեղանի քով արտներ : Աջ անկիւնում անկողնակալի մօտ պասի վրայ հակադրակալ (le porte-manteau), վրէն մի ձեւերային վերարկու եւ ուրիշ հագըստեղէն Արսաշխի պասիակող : Ընդհանրապէս սենեակն ունի ուսանողական կացարանի տեսք , բայց շատ մաքուր է :

Տ Ե Ս Ի Լ 1.

Արտաշէն Ե Նոյիսկար .

Արսաշխ . (Վարագոյրը բարձրանալիս զբաղւած է գրասեղանի վրայի գրքերը կապկապելով : Հագնուած է այնպէս , ինչպէս Առաջին Արարուածն .)

Նոյիսկար . (Նստած է գահաւորակի վրայ եւ կարդում է մի մեծ ճայրաքաղաքի քրագիր : Հագնուած է այնպէս , ինչպէս առաջ , միայն վզովը կախած է ճառագարնի պայտուակ եւ գլխարկին փաթաթած երկայն ընկուզեգոյն շղարշ : Մի քանի վայրկեան լուռ կարդալուց յետոյ , քրագիրը ձգում է գահաւորակի վրայ եւ վեր կենում : Այո՛ , կռիւն այժմ ուրիշ ուղղութիւն է ստանում : Մերոնք պէտք է լարեն իրենց բոլոր ուժերը : Այժմ՝ ամեն ինչ հարկադրում է մեզ շտապել : Ես հետաքրքրութիւնից այրուած եմ իմանալու թէ ինչեր են կատարուում այնտեղ . դու չը վերջացրի՞ր :

Արսաշխ . (Մի փոքր ներվային) Մի՛ շտապիր , դեռ երկու ժամ ունինք մինչեւ գնացքը : (Գաղարում է աշխատել) :

Նոյիսկար . (Նայելով ժամացոյցին) Մի ժամ եւ քառասուն րոպէ : Իսկ ես վաղուց եմ պատրաստ : Մնում է մի անգամ էլ տեսնուել

տեղացիների հետ : Այսօր , անպատճառ այսօր . անգործութիւնն ինձ ձանձրացնում է , բացի այդ արդէն որսորդները գտել են մեր հետքը...

Արսաշխ . (Սառը) Երեւակայութիւնդ ամեն տեղ որսորդներ է տեսնում : (Մուտքէն դուրս է բերում ճամբարիցը անկողնակալի տակից) :

Նոյիսկար . Ա՛ա՛ , երեւակայութիւն չէ , ես հաստատ գիտեմ , որ մեր շատ մեղքերի համար ամենուրեք լքտեսներ են գնացել : Բայց դու չես վախենում : Այդ լաւ է : Բո սառնութիւնն ինձ սիրտ է տալիս : Այժմ ճանաչում եմ նախկին խելօք եւ համարձակ Արտաշխին : Իսկ ես , յիմարս , կարծում էի , թէ դու արդէն կորար այստեղ... (Նայում է Արտաշխին սիրով իր հայեացքով) :

Արսաշխ . (Գործով զբաղուած , չի նկատում Նոյիսկարի հայեացքը) Այս էլ այսպէս : Կարծեմ , բոլորը կը տեղաւորուի այս ճամբարիկում : (Երեսի քրտինքը սրբում է թաշկինակով) :

Նոյիսկար . Դա մի րոպէական խելագարութիւն էր , երբ քեզ տեսայ այդ աղջկայ հետ առանձին : Երկուսդ էլ յուզուած էիք : Ինձ թւաց , որ դու արդէն կորցրել ես քո սղատութիւնն եւ դարձել մէկն այն ողորմելիներէ , որոնց մենք ճանաչում ենք եւ արհամարհում : Անցաւ փորձանքն , եւ դու դարձաւ մերն ես : Արտաշէս , Արտաշէս , մենք պէտք է միանգամայն խորտակենք ոսկէ շղթաները աշխարհային գիրքի հետ , որպէս զի պողպատէ կապերով միանաւք մեր թշուառ ընկերներին :

Արսաշխ . Այո՛ , բայց դու ինքզի ես մոռանում այդ : Երկուսդ քո վարձուներն ուղղակի ամօթալի էք : Ինչ կարող է մտածել մեր մասին Ֆլօրան :

Նոյիսկար . Ինչ ուզում է , թող մտածէ : Մի՛թէ ինձ համար կարող է որ եւ է նշանակութիւն ունենալ մի բուրժուա աղջկայ կարծիքը :

Արսաշխ . Առհասարակ այստեղ գալուց յետոյ դու դարձել ես անզգոյշ , Անտօնիւնա , առաջ դու այդպէս չէիր : Ի՞նչ է պատահել :

Նոյիսկար . Ա՛հ , ես ինքս էլ չը գիտեմ : Գուցէ պատճառն այն աղջիկին է կամ ձեր կապոյտ ու կրակոտ երկինքը : Ինչո՞ւ թագցնեմ , այն օրից , որ այստեղ եմք , ես իմ սրտի տէրը չեմ :

Արսաշխ . Բայց դու շատ լաւ գիտես , որ ոչ մի երկնքի տակ եւ ոչ մի երկրում մեր յարաբերութիւնները չփոխուելու ենք : Եղբայրական

է իմ զգացումը դէպի քեզ եւ այնպէս էլ կը մնայ : (Վերջնում է հանդերձակայն ձմերային վերարկուն, նայում եւ ձգում անկողնակալի վրայ) :

Նոյիմզար . (Տխուր) Գրեմ, ա՛խ, գրեմ, հարիւր անգամ լսել եմ քեզնից, անգութ, բաւական է : (Գրգռուելով) Բայց ի՞նչ անեմ, քանի որ այստեղ (սիրտը ցոյց տալով), հակառակ իմ կամքի, արմատացել է մի տխմար զգացում, որ չի մեռնիլ երբէք, մինչ կենդանի ենք դու եւ ես :

Արսաեւ . Յիշիր Իպպոլիտի վիճակը, յիշի՛ր, որ նա խելագարի պէս սիրում է քեզ եւ մի օր քեզ հետ միանալու յուսովն է տանում իւր տառապանքները : Յիշիր մեր երդումը նրա բանտի երկաթապատ լուսամտի առջեւ, եւ դու կը մոռանաս անձնականը :

Նոյիմզար . (Մաւլ) Խեղճ Իպպոլիտ, կարո՞ղ էիր կարծել, որ երբ եւ իցէ իմ զգացումներով պիտի դաւաճանեմ քեզ : Բայց ես նրան երբէք չեմ սիրել — ինքն էլ գիտէ այս իմ զգացումը : Չեմ սիրել նա եղել է միշտ ընկերակց : Ես յարգել եմ եւ յարգում եմ նրան իրբեւ մի տաղանդաւոր գործիչի եւ հազուադիւր ընկերոջ, որ . . .

Արսաեւ . Որ մի անգամ քեզ եւ երկու անգամ ինձ ապատել է մահից : Եւ դու ուզում ես, որ մենք դաւաճանե՞նք այդպիսի մի ընկերոջ : Ոչ . Անտոնինա, նա քեզ սիրում է անհուն սիրով եւ եթէ այսօր չի վայելում քո փոխադարձ սէրը, յամենայն դէպս ես չեմ լինիլ քեզ նրանից խողը : Ես չունիմ իրաւունք եւ չեմ կարող մի այդպիսի վիշտ պատճառել Իպպոլիտին :

Նոյիմզար . (Ազդուելով Երազիտի խօսքերից, ուշքը ժողովում է, քաջարի) Այո, այդպէս է, դու ճիշդ ես ասում : Թող քո ասածը լինի : Եթէ ես Իպպոլիտին չըկարողանամ սիրել երբ եւ է, պարտաւոր եմ իմ սիրտը կոյս պահել նրա համար : Նա արժէ աւելին, քան մի այսպիսի գոհաբերութիւն : Թող կորչի փոքրագութիւնը : Ես կաշխատեմ սպանել իմ սրտում այս դաւաճանական զգացումը յանուն Իպպոլիտի եւ յանուն մեր ընկերական պարտականութեան : Բայց հետո՞ւ, հետո՞ւ այս երկրից : Այստեղ ես ինձ ուրիշ մարդ եմ զգում : Այստեղ իմ կամքի ոյժը սկսում է թուլանալ : (Նոսակող) Եղե՛լ է այստեղ Հրանտը :

Արսաեւ . Դե՛ս ոչ :

Նոյիմզար . Ես կըզնամ նրան գտնելու : Օօ, նա Փանտիկոս է, այդպիսիներն անհրաժեշտ են մեր գործի համար : Ցրահսութիւն Մի ժամ չանցած կըզգամ եւ միասին կերթանք կայարան : (Պնում է եռանդուն քայլերով աջ կողմի դռներով) :

Տ Ե Ս Ի Լ II.

Արսաեւ եւ Անահիտ .

Անահիտ . (Գալիս է խորքի դռներով) Գնաց, վերջապէս . . .

Արսաեւ . Անահիտ, ինչո՞ւ համար ես դու Նոյիմզարին այդպէս ատում : Երբ նա այստեղ է, դու երբէք չես մտնում իմ սենեակը :

Անահիտ . Ես չեմ ուզում նրան տեսնել : Նա իր սրտի խորքում ատում է մեզ, հայերիս :

Արսաեւ . (Ձայլացած) Անահիտ, դա զրպարաութիւն է : Նոյիմզարն այն անձանցից է, որոնք ազգային ատելութեան զգացումը համարում են զազրելի ախտ :

Անահիտ . (Խուսափողական ձեւով) Չըզիտեմ, գուցէ . . . Ես իսկապէս ոչ մի փաստ չունիմ նրա դէմ, բայց եւ այնպէս : Ատում են Նոյիմզար անունը տուել է նրան մի հայ, ճի՛շդ է :

Արսաեւ . Իմ ընկերների մեծ մասը թափառում է երկրից երկիր կեղծանունով : Այդ անունը ես եմ ընտրել նրա համար : Տեսե՛լ ես այսօր Փլօրային :

Անահիտ . Նրա մօտիցն եմ գալիս :

Արսաեւ . Ի՞նչպէս է :

Անահիտ . Թոյլ, յուսահատուած, ոչ ոքի հետ չի ուզում խօսիլ, բացի ինձնից : Նա ինձ մի յանձնարարութիւն է արել :

Արսաեւ . Ա՞յն է :

Անահիտ . Նա տուել է ինձ մի փոքրիկ արկղ քեզ յանձնելու : Ես չեմ բաց արել արկղիկը, բայց բովանդակութիւնն ինձ յայտնի է : Դա Փլօրայի ակնհայտներն պահարանն է :

Արսաեւ . Ո՛ւր է այն :

Անահիտ . Իմ սենեակում :

Արսաեւ . Վերադարձրու իրան : Լսո՞ւմ ես, անպատճառ վերադարձրու :

Անահիտ . Այդ իմ գործը չէ : Ես կըտամ քեզ, դու ինչ ուզում ես արա :

Արսաեւ . Ետա բարի, թող մնայ, ես իսկոյն կերթամ եւ կըխօսիմ նրա հետ : Նախ պէտք է բացատրել երէկուայ դէպքը : Այդ ինձ համար մի հանելուկ է :

Անահիտ . Ահ, այդ տեսարանը, երբէք չեմ մոռանալ : Երբ նա, ճիշ արձակելով, ընկաւ թիւերիս վրայ, կարծեցի յանկարծամահ եղա : Յետոյ, նրա հօր յուսահատական աղաղակը, հայրիկի ձիւնի պէս սպիտակիլն երկիւղից, ծառաների իրարանցումը, Փլօրայի քարացած կերպարանքը . . . Այս բոլորը պիտի տեսնէիր, Արտաչէս, որ զգայիր, թէ ինչ ես արել . . .

Արսաեւ . Դարձեա՛լ նոյնը : Բոյս, կարելի է կարծել, որ կամ դու եւ խելագարուել կամ ես : Չեմ հասկանում, ինչ եմ արել Փլօրային, որ երէկուանից պէս ակնարկում ես եւ չես բացատրում :

Անահիտ . Դու յախշտակել ես նրա սիրտը : Արսաեւ . Անահիտ, բառերի հետ մի՛ խաղար :

Անահիտ . Փլօրան ինքը խոստովանեց ինձ : « Ես մի թշուառ էակ եմ », այս էր նրա վերջին խօսքը ուշաթափուելուց առաջ : « Անահիտ, ես սիրում եմ Արտաշիսին », այս էր նրա առաջին խօսքը, երբ ուշքի եկաւ եւ երբ մենք մենակ էինք իւր սենեակում : Այնու . . .

հետեւ բոլորը պատմեց : Չգացումը յղացել է նրա սրտում քեզ տեսնելու առաջին օրից եւ զարգացել է այնքան արագ , որ ինքն էլ չբարեկէ իրան հաշիւ տալ :

Արսաեւ . (Միկուսի . ճուայ) Մի խոչնդոս եւս իմ ճանապարհի վրայ :

Անահիթ . Դու չըպիտի թոյլ տայիր , որ այդ զգացումը նրա մէջ զարգանայ : Դու չունէիր իրաւունք թոյլ տալու :

Արսաեւ . Ումի՞ց պիտի վերցնէի այդ իրաւունքը :

Անահիթ . (Տառամուտիով) Չըզգիտեմ , այդ միայն քեզ է յայտնի եւ ուրիշներին եւ ոչ քո մօրն ու քրոջը :

Արսաեւ . (Մի քանի վայրկեան լուռ , տարակուսանքով նայում է Անահիթին , ապա ծօռեմունք է եւ բռնում նրա ձեռը) Բոյր , դու գիտես , որ ես կատակ չեմ սիրում : Ասա պարզ , ի՞նչ է այն գաղտնիքը , որ թագցնում էք ինձնից : Ի՞նչ պատճառով է Տլօրան ուշաթափուել :

Անահիթ . (Ձեռը խլելով) Թո՛ղ ինձ , չեմ կարող ասել : Հարցրու մայրիկին : Ահա գալիս է այն աներեսը : Ների՛ր , ես չեմ կարող նրան տեսնել : (Գնում է խորքի դռներով)

S Ե Ս Ի Լ III.

Արտաշէս , Հրանտ և Արաւ Արագեան

Հրանտ . (Գալիս է աջ կողմի դռներով : Ձեռ է տալիս Արտաշիսին ամուր թափով) Ողջո՛յն ընկեր . (Գառնալով դէպի հիւրասենեակ) Արի , արի , ահա նա , պարոն : Կարող ես անձամբ հետը խօսիլ եւ համոզուիլ , քանի որ ինձ չես հաւատում :

Արագ Արագեան . (Գալիս է Հրանտից յետոյ : Ամուր կազմուածքով , քաջառողջ , արեւակեզ դէմքով երիտասարդ է , արծուաքիթ , կարճ խուզած մազերով և բաւական մեծ միրուքով : Հագած է հին վեստօն , տակից սեւագոյն արխայուզի պէս մի բոն , երկայն կօշիկներ . որ մինչեւ ձկները ծածկում են մոխրագոյն պանթալօնը : Հայեացքը համարձակ է , քայլուածքը խրոխտ , ձեւերը ծանրաբարոյ : Բայց ներվային : Սովորութիւն ունի մի ձեռք խոթել պոսթալօնի գրպանը : Վզովը զցած է դեղնագոյն զլինտոյ (բաշլըղ) : Գլխին դրած է մորթեայ կլոր գլուկ , որ ներս մտնելով , խկոյն չի վերցնում : Կանգնում է դրան առջեւ առանց բարեւերու) :

Արսաեւ . (Մի փոքր նայելուց յետոյ ճանաչում է եւ ուրախացած) Արագ , այդ դո՞ւ ես : (Գիւժում է առաջ , ուզում է համբուրուել . բայց , տեսնելով Արագի սառնութիւնը , կանգ է առնում) :

Արագ . (Կոպէ նայելով , սառը , հեղեղական , բաւականանում է միայն թոյլ սեղմելով Արտաշիսի ձեռը) Առաջ պէտք է միմեանց ճանաչենք : Լսել եմ գնում ես :

Արսաեւ . (Սառը) Այո՛ :

Արագ . Ո՞ւր :

Արսաեւ . Իմ ընկերներին մօտ :

Արագ . Ո՞վքեր են քո ընկերները :

Արսաեւ . Դու նրանց չես ճանաչում :

Արագ . Ուրեմն , ճի՛շդ է այդ տղայի ասածը :

Հրանտ . (Չարախնդ հեգնութեամբ) Ի՞նչպէս տեսնում ես :

Արագ . (Կտրուկ) Ուխտադրու՛ժ , ես այդ չէի սպասում :

Արսաեւ . Արագ , կատակ անելու ժամանակ չէ :

Արագ . Դժբաղդարար , Արագը վաղուց է մոռացել կատակ անելը : Ուխտադրու՛ժ , կրկնում եմ , քեզ ուրիշ անուն տալ չի կարելի : Լինել մեր շրջանի մոլեռանդ անդամ , գնալ հիւսիս , մի քանի տարուայ մէջ մոռանալ բոլորը , թողնել իսկական ընկերներին , երես դարձնել մի գրոջակից , անցնիլ միւսը եւ զաւանիլ մեզ համար վնասակար գաղափարներ — դա ոչ միայն ուխտը դրժել է նշանակում , այլ եւ . . . դաւաճանութիւն : (Ներվային թափով վերցնում է գլխից գլուխը և մի քայլ առաջ է գալիս) :

Արսաեւ . (Հանգիստ) Նախկին ընկեր , եթէ դու չըլինէիր Արագ Արագեանը , ես գիտէի ինչպէս կապել քո բերանը : Բայց դու այն մոլորուածներից ես , որոնք սիրելի են մեզ համար իրանց անկեղծութեամբ , ազնուութեամբ եւ խորը հաւատով դէպի իրանց գործը :

Արագեան . Ի՞նչ արժէք ունի այժմ քո սէրը կամ համակրանքը : Ես արհամարհում եմ քո կարծիքը :

Հրանտ . (Քաշուել է մի անկիւն և ամբողջ ժամանակ մերթ հեգնական և մերթ կատաղի հայեացքներ է ձգում Արագի վրայ) Օհօ՛ . . .

Արսաեւ . Թող այդպէս լինի , բայց հանգստացիր . ես ուխտադրու՛ժ չեմ , մա՛նաւանդ — դաւաճան : Ես միայն երեխայական իրանձարուրից դուրս եկած մարդ եմ : Տասնութ տարեկան էի , երբ յափշտակուցի ձեր շրջանով : Հայրս էր ձեր գլխաւոր ուսուցիչը : Հեռացայ այստեղից , տեսայ ուրիշ շրջաններ , ծանօթացայ աւելի լուրջ և աւելի բարձր իդէալների հետ — փոխուցի : Լաւ արի թէ վատ — չըզգիտեմ , բայց փոխուցի խելքով , համոզմունքով և սրտիս բոլոր ուժով :

Հրանտ . Ինչպէս եւ ես . . .

Արսաեւ . Ասա , ի՞նչն է ինձ պակասում այն ժամանակից , արդիօք մաքրութիւնը , անկեղծութիւնը , թէ՞ ազնուութիւնը , թէ՞ սէրը դէպի հարսնուածները և տանջուածները : Ահա այս մասին միայն կարող է խօսք լինել մեր մէջ : (Սկսում է անց ու գործ անել) :

Հրանտ . Դու այժմ աւելի ազնիւ ես , քան առաջ :

Արագեան . Ես լեզուի մարդ չեմ , որ քեզ հետ երկար վիճաբանիմ : Մենք էլ ունինք պերճախօս հռետորներ , որոնք լեզուով պատուութիւններ են կործանում ապահով ժողովներում : Ես արհամարհում եմ նրանց էլ : Ես մի մեծ եւ անբաղդ գործի հասարակ զինուոր եմ : Ես գիտեմ միայն մի բան . որ այնտեղ , հեռու երկրում , ունինք մի արիւնաքամ ժո-

դովորող, որին այսպէս կամ այնպէս պիտի փրկենք մեր կեանքի գնով :

Հրանս . Փրկեցէք, ո՞վ է ձեզ խանգարում Արազ . (Ուազդրութիւն չի դարձնում Հրանտի վրայ) Եւ դու որ այնպիսի ոգեւորութեամբ խոստանում էիր մեզ հետ այնտեղ գնալ, այժմ գնում ես հակառակ կողմ : Այժմ, երբ քո ուժերը կազմակերպուել են, երբ ունիս ուսում, գիտութիւն եւ մի կարեւոր արհեստ : Արտաշէս, մենք այժմ թուով շատ ենք, ճիշդ է, բայց մեր թշնամին հազար գլխանի մի հրէշ է : Մենք չըպիտի ջլատենք մեր ուժերը, մենք բոլորս պիտի միանանք եւ ծառայենք մեր եւ միմիայն մեր ժողովրդին : Եթէ քեզ նմանները թողնեն մեր անբաղդ արիւնակիցներին եւ գնան օտարներին ծառայելու — մեր դատը մեռած է :

Հրանս . (Կծու եղանակով) Ձեր դատը մեռած է ծնուելու օրից :

Արազ . (Վշտացած, կատաղի) Ո՛հ, պարո՛ն, ոչ, նա մեռած չէ եւ չի մեռնիլ, քանի որ մենք բոլորովին ջնջուած չենք աշխարհի երեսից : (Մի արնամարնական հայեացք ձգելով Հրանտի վրայ, երեսը դարձնում է) :

Արսաեւս . Արազ . մտքդ կարող է միայն այն գործին ծառայել . որին հաւատում է, այլապէս, նրա ծառայութիւնն անբարոյակա՜նութիւն է : Ես ձեր գործին չեմ հաւատում : Երկրորդ, երբ ամբողջ մարմինը վարակուել է, երբէք նրա անդամները առանձին առանձին չեն բուժուում :

Հրանս . Այդ մի տարրական միտք, է որ միայն ապուշները չեն հասկանում :

Արազ . Բայց այնտեղ սովորական հիւանդութիւն չի տիրում, մանուկ, այլ ժանտախտ, սով, աւերում, հրդեհ, կոտորած : Այնտեղ դժոխքն է թաղաւորում, հասկացի՛ր :

Արսաեւս . Գիտեմ, գիտեմ :

Արազ : Ո՛հ, չըգիտես : Օօ, եթէ տեսնէիր այն, ինչ որ ես տեսել եմ իմ աչքերով, այն աւերուած գիւղերը, ամառի աւանները, այրուած արտերը, սրբապղծուած տաճարները, բռնաբարուած աղջիկներին, այն հազարաւոր մայրերին իրանց զաւակներին ողբալիս, այն կիսակենդան թաղուած դիակները, այն ժամանակ չէիր փոխել քո հաւատամքը :

Հրանս . Եւ կը նստէիր տանդ, հայրենաւ սիրական վառվռուն երգեր կը յօրինէիր կամ կը գնայիր այնտեղ . երկու քուրդ կը սպանէիր, որպէս զի փոխարէնը հարիւրաւոր հայ կանանց եւ երեխաների գլուխներ կտրուէին :

Արսաեւս . (Մի զուլիչ եւ կատաղի հայեացքով) Հրա՛նտ, ձայնդ կարիր : (Արազին) Այն բոլորը, ինչ որ տացիր, տեսել եմ ե՛ւ ես ...

Արազ . Օտար վայրերում, մեզնից հեռու ...

Արսաեւս . Թշուառութիւնը հայրենիք չունի :

Արազ . Բայց մեր թշուառութիւնն անսասման է, անիրաւ . քո տեսածները մերը չեն, անիրաւ : Այդ ամենի համար կան ուրիշ աս-

տերազմողներ : Ինչո՞ւ նրանք չեն թողնում իրանց արիւնակիցներին եւ գալիս մեզ օգնելու, ասա՛, օտարամոլ :

Արսաեւս . (Դառը ծիծաղ) Օտարամո՛լ . . . Ահա իմ հօր սիրած հայնոյանքը, որ կարծում է մի համոզիչ զէնք է իւր ձեռքում : Օտարա՜րամոլութիւնը բոլորը ազգերի թշուառների արդար դատին ծառայելը չէ, ո՛չ, հազար անգամ ո՛չ, այլ սխալ գաղափարներին հետեւելը : Կրկնում եմ, ես չեմ հաւատում ձեր գործին, ի՛նչպէս, ուրեմն, ծառայեմ նրան առանց հաւատի : Թշուա՛ն, հեռու չէ այն ժամանակը, երբ կը պարզուի, թէ ո՞ւմ իղէալներն են հիմնուած աւելի արդար հիմունքների վրայ, մե՞քը, թէ՞ ձերը : Սակայն թողնենք անօգուտ փիճաբանութիւնը : Մի եւ նոյնն է . ո՛չ դու կարող ես ինձ դարձի բերել եւ ոչ ես քեզ : Ասա՛, ո՞րտեղ է Դերեկչեանը :

Արազ . Երկրում :

Արսաեւս . Ո՞րտեղ է Հալլարեանը :

Արազ . Բիթլիսի բանտում :

Արսաեւս . Համազա՞սպր :

Արազ . Աքսորուած է Աքիա :

Արսաեւս . Ո՞ւր է Գրիգորիսը :

Արազ . Սպանուած է քրդերից :

Հրանս . (Կծու) Իւր եղբայրներից :

Արսաեւս . Իսկ Արմենա՞կը :

Արազ . Դեռ կենդանի է :

Արսաեւս . Յուսով եմ, որ մեր կատակասէր Մելիքսեղը նո՛յնպէս :

Արազ . Կտակով աւանգեց հոգին ձեռնաբխ վրայ համիտէի գնդակից :

Հրանս . Անօգո՛ւտ գոհեր :

Արսաեւս . (Հեղհեռեալ յուզում է) Արմա՛յիսը :

Արազ . Կասկածի տակ էր՝ սպանեցինք :

Հրանս . (Կծու) Երեւի՛, առանց կասկածը ստուգելու :

Արսաեւս . Վերջապէս, մեր անվեհեր Դա՛րիա՛լը :

Արազ . Քրդերն այրեցին նրան : (Յուզում) Բայց ինչո՞ւ համար ես քրքրում իմ վէրքերը, ո՞վ տուեց քեզ իրաւունք :

Արսաեւս . (Մուայ եղանակով, զողորջուն ձայնով) Անձնագորհ ընկերներ իմ պատանեկութեան, բոլորդ միեւնոյն ու անիրագործելի նպատակի համար, միեւնոյն սխալ ճանապարհի վրայ :

Հրանս . (Կծու եւ չարախիղ) Ասում են, այսպէս կոչուած՝ Հայաստանում հայ՛ջի մնացել :

Արազ . (Բուռեցքները սեղմելով խղզուած ձայնով) Ասում են, պարո՛ն, ասում են :

Հրանս . Ասում են, ձեր շնորհով են նրանց ոչնչացրել :

Արազ . (Դտակը դնում է գլխին, դուրս է բերում դաշոնը պիծակի տակից եւ պատեանից հանելով, յարձակում է Հրանտի վրայ) Ես կը կարեմ այդ շան կոկորդը :

Հրանս . (Յեռ ցատկելով, դուրս է բերում պանթալոնի գրպանից մի ատրճանակ եւ ուղղում է

չըկայ, մայրենի օգ... (Թոյլ է տալիս, որ Արաղը տանի իրանն :)

Արագ. (Հրանտին, ձօնովն անցնելիս) Մենք դեռ կըտեսնուինք :

Հրանտ. Ես ինքս կաշխատեմ հանդիպել քեզ հէնց այսօր :

S Ե Ս Ի Լ V.

Արաղէն և Հրանտ.

Արաղ. (Մի քանի վայրկեան լուսթիւնից յետոյ) Կարելի է լինել տերօրօրիստ, անիշխանական, ինչ կամենաս, բայց քաղաքավարութիւնը պարտաւորական է ամենքի համար :

Հրանտ. Ես չեմ յիշում ոչ հայր, ոչ մայր, որոնցից սովորէի այդ : Ես ունիմ մի թունաւորուած հոգի, որ վրէժ է պահանջում մարդկանցից : Գնանք այստեղից շուտով : Ես տեսնում եմ, որ չըբնար կամաց կամաց ազդում է քեզ վրայ : Նոյնիզարին կուղարկեմ՝ դուրս բերելու քեզ այս նեխուած մթնոլորտից : (Արագ քայլերով գնում է աջ կողմի դռներով :)

Արաղ. (Նայում է ժամացոյցին, արագ քայլերով ձօնեմում է խորքի դռներին և բռնարով :)

Անահիտ :

Անահիտ. (Ներսից) Ի՞նչ ես կամենում :

Արաղ. Բեր տոյսեղ այն արկղիկը : (Յետ է գալիս, վերցնում է սեղանի վրայից զըլտարիկը) Դեռ ժամանակ ունիմ :

Անահիտ. (Գալիս է խորքի դռներով Փլօրայի արկղիկը ձեռին) Ահա :

Արաղ. Ես իսկոյն կըվերադառնամ : (Վերցնում է արկղիկը և շտապով գնում է :)

S Ե Ս Ի Լ VI.

Անահիտ և Կարաբէն.

Կարաբէն. (Գալիս է խորքի դռներով) Ո՞ւր գնաց նա : (Նկատելով ճամբարիկը որ կիսով չափ լիք է :) Աս, նա արդէն իրեղէնը կապիկ է : Անաստուածը դուրս քշեց իմ որդուն անիցս :

Անահիտ. Ոչ ոք նրան դուրս չի քշում : Ես ինքն է գնում իւր կամբով :

Կարաբէն. Եթէ հայրդ հէնց առաջին օրից նրա հետ այնպէս չըվարուէր, այս փորձանքն իմ գլխին չէր գալ : Տեսնուած բան է, որ հայրը որդուն անուանի դաւաճան :

Անահիտ. Հայրիկին պէտք է շատ բան ներել : Ես ձեր է եւ տանջում է : Տեսնում ես ի՞նչպէս է փախուել տասն օրուայ մէջ : Գիտես, մայրիկ, երէկ նա գրիչը կտարեց եւ դէն ձգեց : Ես այժմ միայն իրան է անիծում :

Կարաբէն. Սուս ես ասում : Հէնց այս բոլորիս նա օրհնեց ինքն իրան, օրհնելով իւր աշակերտին :

Անահիտ. Այնպիսի աշակերտին չէր կարելի չօրհնել Արագ Արաղեանը գնում է իւր կեանքը զօհելու իւր ժողովրդին : Ես հերոս է :

Կարաբէն. Ահ, ի՞նչպէս նրան ճանապարհ

դրեց, ի՞նչպէս համբուրուեց հետը : Հարազատ որդի ունենաւ եւ, ուրիշներին օրհնելով, նրան անիծես : Ահ, Անահիտ, քո հայրը սիրտ չունի :

Անահիտ. Մայրիկ, դու այնքան նախապաշարուած ես հայրիկի դէմ, որ մոռանում ես Արտաշիսի գնալու իսկական պատճառը :

Կարաբէն. Այդ աղջիկը : (Կատարելով) Աս, չորանար այն կնոջ մէջը, որ ծնել է նրան : Ի՞նչո՞ւ համար է նա փաթաթուել իմ որդու վզին : Ո՞վ է նա, ի՞նչ անցեալ ունի : Ես այս բոլորը պիտի իմանամ այսօր, հերիք է ինչքան լսեցի... :

Անահիտ. Ես ինձ նեղը գցեց, հարցնելով Փլօրայի ուշաթափուելու մասին : Ես պատճառը չըկամեցայ ասել : (Անց ու դարձ է անում)

Կարաբէն. Ե՛ս կասեմ : Ես իմ ձեռքից հեշտ չի ազատուել : Խեղճ Փլօրա, դ՞ու ինչ մեղք ունէիր, որ խառնուեցիր մեր քամբադրուութեան : Այնպիսի ընտանիքի աղջիկ, այն պիտի գեղեցկուէի, սիրտ, խելք, հարստութիւն... ում է թողել իմ որդին եւ ումի հետ է կապել իւր կեանքը :

Անահիտ. (Քայլերով ձօնեցել է նախասենեակի դռներին) Չգոյշ, գալիս է :

S Ե Ս Ի Լ VII

Նշիտ և Արաղէն.

Արաղ. (Գալիս է աջ կողմի դռներով վերադառնալով) Դա ստորութիւն է, անասելի ստորութիւն : Ի՞նչ եմ արել ես նրանց Գնացի վերջին բարեւ տալու Ալվանդեաններին, ծառան կոպիտ կերպով դռները փակեց իմ առջեւ, ասելով, թէ ինձ ընդունիլ չեն կարող : Աս, գիտեմ, յիմար չեմ, դա իմ հօր մեքենայութիւնն է :

Անահիտ. Չսպիր քեզ, ես չեմ կարող հայրիկի մասին այդպիսի խօսքեր լսել :

Արաղ. Չես կարող, հեռացիր այստեղից Բոլորդ երես դարձրէք ինձնից, մոռացէք, այդ հաղար անգամ աւելի լաւ կըլինի ինձ համար : Գնա այս բոլորիս Փլօրայի մօտ եւ ասա նրան, որ արկղիկն ես յանձնեցի ծառային : Ծառայիք, ես ուզում եմ իմանալ ստացել է թէ չէ :

Անահիտ. Ինչպէս կամենաս : (Գնում է խորքի դռներով)

S Ե Ս Ի Լ VIII.

Արաղէն և Կարաբէն.

Կարաբէն. Ուրեմն, գնում ես : Ծառ լաւ, թո՛ղ մօրդ այստեղ ձեռները ծոցում, արտասուքը աչքերին :

Արաղ. (Սկսում է մնացեալ իրեղէններն էլ տեղաւորել ճամբարիկի մէջ) Լաւ, բռնական է, կաշխատեմ շուտով վերադառնալ :

Կասարիցն . (Հառաչելով) Ոչ , դու չես վերադառնալ , ես այդ շատ լաւ գիտեմ : (Լուռ թիւն մի քանի վայրկեան :) Լսի՛ր , որդի , ես այժմ գիտեմ քո գնալու պատճառը : Ի՞նչ արած , մնացի՛ր այստեղ , թող նա էլ մնայ , ես նրան դուրս չեմ անիլ իմ տնից :

Արսաէս . (Շարունակ աշխատելով) Ո՞վ , մայրիկ , ո՞ւմ մասին է խօսքդ :

Կասարիցն . Քո կնոջ մասին :

Արսաէս . (Դադարում է աշխատել , դարձայած) Ի՞մ կնոջ . Ո՞վ է իմ կինը :

Կասարիցն . Ես ինչ գիտեմ , անունն էլ միտս չէ : Այն աղջիկը որ քեզ հետ եկել է եւ ամէն օր քո սենեակումն է :

Արսաէս . Նոյիմզա՞րը : Ո՞վ ասաց թէ նա իմ կինն է :

Կասարիցն . Ամբողջ քաղաքն է խօսում :

Արսաէս . (Միծաղելով) Այդ լաւ է , ամբողջ քաղաքն ինձ պատկել է , մինչդեռ ես ամուսնու չեմ : (Լուրջ) Մայրիկ , դա դատարկ բամբասանք է : Ի՞մ եւ Նոյիմզարի մէջ եղած կապն աւելի մաքուր է , քան ամուսնականը :

Կասարիցն . Տեսնո՞ւմ ես , ուրեմն , կայ քո եւ նրա մէջ մի կապ : Դա խայտառակութիւն է , որդի , աւելի լաւ է օրինաւոր պատկուծի :

Արսաէս . Մայր , ես գիտեմ ինչ ես ուզում ասել : Բայց Նոյիմզարն այնքան անարատ է , որքան քո աղջիկը :

Կասարիցն . (Վիրաւորում) Մի՛ անպատուիր քրոջդ , մի անպատուիր :

Արսաէս . Ես այնքան ստոր չեմ , որ իմ քրոջ բիւրեղի մաքրութիւնը համեմատեմ մի արատաւոր բանի հետ : Նոյիմզարը մի ազնիւ ընտանիքի աղջիկ է : Նա իմ գաղափարակիցն է եւ իմ ամենասիրելի ընկերոջ հարսնացուն :

Կասարիցն . Քո ընկերոջ հարսնացուն ինչո՞ւ է քեզ հետ շրջում քաղաքից քաղաք , եթէ օրինաւոր աղջիկ է :

Արսաէս . Մայրիկ , Նոյիմզարն իմ կինը չէ : Ես ոչ կերպուեմ եւ ոչ փաստեր կըտամ — ուզում ես , հաւատա , ուզում ես ոչ : Ուրիշ ասելիք չունիմ : (Դառնում է որ շարունակի գործը :)

Կասարիցն . Սիրուհի՞դ էլ չէ :

Արսաէս . Ո՛չ , ոչ , ասում եմ : Մի՛ վերաւորիր մի օրը , անօգնական եւ անմեղ աղջկայ : Ասում եմ , նա իմ ամենամտերիմ ընկերոջ հարսնացուն է : Այն ընկերոջ , որ երկու անգամ ինձ ազատել է մահից . . .

Կասարիցն . (Վախեցած) Մահի՞ց : Ի՞նչ ես ասում դու :

Արսաէս . Այո՛ , գրեթէ մահից : Նա ինձ փրկել է մի անգամ կազակների մտրակից , մի ուրիշ անգամ սուրիների հարուածից . . . բանդում :

Կասարիցն . (Աւելի վախեցած) Ի՞նչ ասացիր , բանտո՞ւմ : Ուրեմն , դու բանդ ես նստել :

Արսաէս . Երեք անգամ :

Կասարիցն . Երեք անգամ : Ինչո՞ւ . համար :

Արսաէս . (Դառն հեղուկեամբ) Ո՞վ գիտէ : Յամենայն դէպս ոչ գողութեան եւ ոչ որ եւ է խարդախութեան համար : Նրանք իրաւունք ունէին ինձ աւելի խիստ պատժելու , ես չեմ բողոքում :

Կասարիցն . Այդ էր պակասում իմ տանջանքներին : Բայց ինչո՞ւ մեզ չես գրել :

Արսաէս . Ի՞նչ կարիք կար ձեզ վշտացնելու : Ես ամեն միջոց ձեռք էի առել , որ լուրը ձեզ չըհասնի : Մայր , ես եղել եմ եւ հիւանդանոցում :

Կասարիցն . (Ընկճում) Ասա՛ , որդի , ասա՛ բոլորը եւ միանգամից վերջացրու :

Արսաէս . Չէի ասիլ եթէ դու չըխօսէիր Նոյիմզարի մասին : Ամբողջ մի ամիս ես գրուսուել եմ մահու եւ կեանքի մէջ : Եւ գիտե՞ս ով է եղել այն միակ անձը , որ գիշեր-ցերեկ հսկել է ինձ ինչպէս հարազատ բոյր , անքուն , անհանգիստ : Այն աղջիկը , որին արձամարհում էք եւ անպատուում : Նոյիմզարն իմ կինը չէ , մայր . մի կին կամ սիրուհի չէք կարող լինել այն , ինչ որ նա եղել է ինձ համար : Նա աւելի է ինձ համար , քան նոյն իսկ մի բոյր կամ մայր : Բայց թողնենք . այդ տեսակ յարաբերութիւնների մասին դուք գեռ գաղափար չունիք . . .

Կասարիցն . Եղբքս ոչինչ չի կարում : Ի՞նչ գործ ունի նա այստեղ : Ինչո՞ւ է կեկել քեզ հետ եւ քեզ հետ էլ գնում է :

Արսաէս . Այդ ինքը գիտէ : (Նայելով ժամացոյցին) Մայրիկ , ես ուշանում եմ , թող գործս վերջացնեմ :

Կասարիցն . Ո՛չ , չեմ թողնիլ : Այն բոլորից յետոյ , ինչ որ ասացիր , քո գնալն աւելի անհնարին է դառնում : Քեզ երեք անգամ բանդ են նստեցրել , դու եղել ես մահամերձ հիւանդ , եւ ես չեմ իմացել : Կնայի՛ր մօրդ , մի՛ գնար այդ անիծուած երկիրը : Մինչեւ հիմայ այստեղ թոքոխտն ու վատ հիւանդութիւններն էին սպանում մեր զաւակներին , այժմ քանդն ու արսորը : Մի՛ գնար : (Նստում է թուլացած :)

S B U T I IX .

Նոյն և դարձեալ Անահիտ .

Անահիտ . (Դալիս է խորքի դռներով գլխարկով Ասացի Փլօրային . նա ստացել է արկղիկը : Նա ուզում է քեզ հետ տեսնուել :

Արսաէս . (Հեղուկան ժողովով) Ուզում է ինձ հետ տեսնուել , զո՞ւնքն իմ առջև փակելով :

Անահիտ . Նա մեղաւոր չէ : Հայրն է հրաւրայել ծառաներին քեզ չընդունել : Այս մասին Փլօրան ահապիս վէճ է ունեցել իւր հօր հետ : Այժմ նրանք չեն խօսում միմեանց հետ : Փլօրան հագնուում էր , նա իսկոյն ինքը կըգայ այստեղ : Ես վազեցի , որ քեզ զգուշացնեմ : (Մտենալով Կատարինէին) , Մայրիկ , ինչո՞ւ ես այդպէս ընկճուել : Դու Արտաշիսին

պիտի ուրախ սրտով ճանապարհ դնես :
Կասարիճն . Թ՛ո՛ղ ինձ , թ՛ո՛ղ ինձ : Նա ուզում է , որ ես կամ յանկարծաման լինիմ կամ խելագարուիմ :

Անահիթ . (Նայելով դեպի աջ կողմի դռները)
Ահա Ֆլօրան . (Գնում է դիմաւորելու :

S Ե Ս Ի Լ X .

Նոյն , Ֆլօր , յետոյ Նոյն , Սենեֆերիս և Հրանր

Ֆլօրա . (Ներս է մտնում աջ կողմի դռներով :
Նրա դէմքը յոգնած և գունատ է :) Տիկին Կատարինէ , ես հկայ ձեզ համար միայն : Անահիթան ասաց , որ գուք յուսահատուած էք . . . (Մտնում է և համբուրում Կատարինէի հետ :)

Կասարիճն . (Ղեր կենալով տեղիցը) Այո՛ , Ֆլօրա , նա գնում է եւ ինձ թողնում աղի արտասուքի մէջ : Ես մայրիկից ամենապիտանիսն եմ , որ զրկուած եմ քեզ նման հրեշտակից . . .

Ֆլօրա . (Մաստիկ շփովում է :)

Անահիթ . Մայրիկ , ինչո՞ւ ես հարկաւոր այդ խօսքերը :

Արաշես . (Սառը Օրիորդ , ես շնորհակալութիւն եմ յայտնում ձեր առատ նուիրարբութեան համար : Բայց յետ ուղարկեցի այն , որովհետեւ եթէ ընդունէի , կըվիրաւորէի իմ ընկերներին : Կողպելով ձեր տան դռներն իմ առաջ , գուք դրանով յետ էք վերցրել ձեր նուէրը :

Նոյիմգար . (Ներս է մտնում աջ կողմի դռներով և , տեսնելով Ֆլօրային , թեթեւ ցնցում է և կանգնում է դռների առջեւ :)

Կասարիճն . (Տեսնելով Նոյիմգարին , նոյնպէս ցնցում է :)

Անահիթ . (Արձամարմնեցով երես է դարձնում Նոյիմգարից :)

Ֆլօրա . (Չի նկատել Նոյիմգարին) Եթէ ես տուն ունենայի իմ իրաւունքի տակ , նրա դռները միշտ բաց կըլինէին ձեր ամենավերտանգաւոր ընկերների համար : Բայց ինչպէս կ'ամենաք , ես կըզգտնեմ ճանապարհ իմ նուէրը տեղ հասցնելու :

Արաշես . (Ճամբարկը կողպելով , բանալին գնում է գրպանը :) Ես պատրաստ եմ : Մնում է մի կառք կանչել : (Վերարկուն վերցնում է թեւի վրայ :)

Նոյիմգար . Իմ կառքը սպասում է դրսում . կարող եմք երկուսս էլ տեղաւորուել : Վերարկուդ սուր ինձ :

Ֆլօրա . (Նոյիմգարի ձայնից ցնցուելով , նայում է :)

Կասարիճն . (Յանկարծ գրգռուելով) Անիծւածներ , ի՞նչ էք ուզում իմ որդուց : Գնացէ՛ք ձեր գործին , թողէ՛ք նրան :

Արաշես . (Իրստ յանդիմանութեամբ) Մայրի՛կ , մայրի՛կ . . .

Անահիթ . (Բռնելով Կատարինէի թեւը :) Մի՛ թեթեւացնիր մեր անունը այդ օտարուհու մօտ :

Կասարիճն . Ա՛հ , երկնային թագաւոր , այժ տուր ինձ դիմանալու :

Արաշես . Ես կըզամ , մայրիկ , յետ կըզամ , շուտով : (Ճամբարկը վերցնում է :)

Կասարիճն . (Ուրախանալով) Ահ , կըզա՞ս , շուտով , ասում ես : Դէհ , ներքի , որդի , բարե ճանապարհ . արի համբուրեմ քեզ : (Յարձակում է Արաշիին համբուրելու , բայց յանկարծ սարսափահար կանգ է առնում , լսելով Սենեֆերիսի ձայնը :)

Սենեֆերիս . (Բեմի խորքից , բարձր , յողորձուն ձայնով :) Նա չի գալ , նա չի գալ . . . նա գնում է օտարների համար կախաղան բարձրանալու :

Բոյորդ . Ցնցում են :
(Մի քանի վայրկեան լուռ թիւն :)

Հրան . (Երեսում է նախասենեակի դռներում և կանգնում սպառնալի դիրքում :)

Կասարիճն . Աս , բայդուշ , քո ձայնը . . .

(Մի ճիչ արձակելով , յարձակում է Արաշիի վրայ , ճամբարկը խուճ է և ձյում է յատակի վրայ :) Առաջ սպանիր ինձ , յետոյ ոտք դուրս դիր այս անից : Դու չես գալ , գու չես գալ . . . Կախաղան ասաց :

Արաշես . Մայր , թ՛ո՛ղ , աղաչում եմ , մի՛ խայտառակիր ինձ . . .

Կասարիճն . (Խեղրում ձայնով) Գնա . . . գնա . . . Օ՛հ , խեղդում եմ . . . օդ օդ . . . (Ուշաթափում է :)

Արաշես . Մայրի՛կ , (Յարձակում է և ձորք բռնում , որ չընկնի :)

Ֆլօրա . (Գունատ և անշարժ կանգնած է :)

Անահիթ . (Նոյիմգարին և Հրանային) Դուք տեսնո՞ւմ էք այս տեսարանը : (Վաղում է ձորն օգնելու :)

Նոյիմգար . }
Հրան . } Նայում են միմեանց :

Վ Ա Ր Ա Վ Ո Յ Ր

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Մ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Առաջին Արարուածի Տեսարանն է անփոփոխ .
միայն հաճի սեղանի վրայ ոչինչ չըկայ :

S Ե Ս Ի Լ I .

Անահիթ և Նազանի .

Անահիթ . (Վարացոյցը բարձրանալիս դուրս է գալիս աջ կողմի երկրորդ դռներով , մի աման ձեռին , վրէժ դրալ :) Նազանի՛ :

Նազանի . (Գալիս է խորքի դռներով , թեւերը ծալած) Հրամանքս :

Անահիթ . Էլի կա՞յ սոււպ :

Նազանի . Կայ մի քիչ էլ :

Անահիթ . Պահիր մայրիկի համար : Տար այս ամանը :

Նազանի . Ուրեմն , կերամ :
 Անահիտ . Վերջապէս :
 Նազանի . Փառք Աստուծո : Երեք օր էր խեղճ
 կնիկը պատառ չէր դրել բերանը : Օ՛հ , ողոր-
 մած Աստուծո , չեմ իմանում ինչ պատահեց ,
 որ Բո օրհնած տունը տակն ու վրայ եղաւ :
 (Գնում է խորքի դռներով , ամանը տանելով :)
 Անահիտ . (Կամացուկ մտնելով է աջ կողմի
 առաջին դրան , նայում է արանքով , ականջ
 է դնում , յետոյ) Հայրիկ : (Սպասում է)
 Երևի քնած է : (Հառաչում է , յետ է դառ-
 նում , նստում է ճաշի սեղանի քով եւ ընկ-
 նում մտածողութեան մէջ :)

Տ Ե Ս Ի Լ II.

Անահիտ և Տիգրան .

Տիգրան . Գալիս է խորքի դռներով : Հագ-
 նուած է այնպէս , ինչպէս առաջին արարուա-
 ծում : Օրիորդ . . .

Անահիտ . (Սթափուելով , ոտքի է կանգնում)
 Ահ , այդ դժբէք էք , պարոն Տիգրան : Ենորհա-
 կալ եմ , որ չէք մոռանում :

Տիգրան . Ինչպէ՞ս է այժմ տիկինը :

Անահիտ . Մի փոքր լաւ է այսօր . բայց աջ
 թեւը դեռ չի կարողանում շարժել : Գիշերը
 դարձեալ անքուն է անցկացրել : Միայն լու-
 սաբէմին մի քիչ քնեց : Առ հասարակ , վատ է ,
 վատ է , պարոն Տիգրան :

Տիգրան . Իսկ պարոն Սենեքերի՞մը :

Անահիտ . Հայրիկը աւելի վատ դրութեան մէջ
 է : Երէկուայ տեսարանից յետոյ մտել է իմ սեն-
 եակը եւ ոչ ոքի չի թողնում իւր մօտ : Գի-
 շերուայ ընթացքում նա մի քանի անգամ եկաւ
 մայրիկին տեսնելու . նայեց լուռ , գլուխը
 տարօրինակ շարժեց ու գնաց : Նա էլ չի քնի
 ամբողջ գիշերը . շարունակ ծխում է , հառա-
 չում ու անցուղարձ անում : Պարոն Տիգրան ,
 նա աւելի գիտէ , քան թէ մենք . նրան յայտնի
 է Արտաշեսի մի սարսափելի գաղտնիքը , որ
 մեզ չի ասում : Նա միայն կրկնում է . « Նա
 կործանուած է , փրկութիւն չըկայ : » Եւ այդ
 խօսքերն են , որ երէկ մայրիկին այնպէս
 հարուածեցին :

Տիգրան . (Մտազբաղ , խորհրդաւոր) Ո՞րտե-
 զից եւ ինչպէ՞ս կարողացաւ նա իմանալ այդ
 գաղտնիքը :

Անահիտ . Ուրեմն , դուք է՛լ գիտէք : Ասա-
 ՛էք , պարոն Տիգրան , աղաչում եմ , ի՞նչ է այդ :

Տիգրան . Չունիմ իրաւունք ասելու : Արտա-
 ՛էսն ինձ կրկնաբար մտնիչ :

Անահիտ . (Յուսահատուած) Անպութ մարդիկ
 դուք սիրա չունիք . . .

Տիգրան . Օրիորդ , մի՛ յուսահատուէք : Յոյս
 չայ , որ Արտաշէսն աշող տանի իւր գործը եւ
 տանգից աղատուի : Մի՛ մտածէք , բոլորը
 քննեցի :

Անահիտ . Այս ամենի մէջ մի բան գտնէ միւս-
 ՛յարական է : Որ Արտաշէսը Նոյիմզարի հետ

ամուսնացած չէ : Դա միակ բանն է , որ սիւ-
 փում է մօրս :

Տիգրան . Ես չէի՞ ասում ձեզ , որ այդ մի
 անմիտ բամբասանք է :

Անահիտ . Ո՛հ , ամօթ բամբասողներին : Ես
 էլ թեթեւամտաբար շտապեցի ասել Ֆլօրային
 եւ այն փոթորիկն առաջացնել : Բայց ի՞նչ
 գիտէի , որ նա այդպէս սիրում է Արտաշէսին
 Տիգրան . Ուրեմն , այդ ձի՞շտ է , որ օրիորդ
 Ալվանդեանը սիրում է նրան :

Անահիտ . Երէկ երեկոյ դէպքից յետոյ , ես
 նրա մօտն էի : Պէտք է տեսնէիք ինչպէս փոխ-
 ւեց խեղճ աղջիկն , կրք ասացի , թէ լուրը
 սուտ է , թէ Արտաշէսը ոչինչ կապ չունի այդ
 Նոյիմզարի հետ , բացի պարզ ընկերակցանից :
 Նա փաթաթուեց իմ պարանոցին եւ ուրա-
 խութիւնից արտասուեց :

Տիգրան . Ո՛ւր է այժմ Արտաշէսը :

Անահիտ . Կարծեմ , իւր սենեակում :

Տիգրան . Մենա՞կ :

Անահիտ . Ով գիտէ : Ծարուանակ գալիս են ,
 խորհրդակցում ու գնում : Ամբողջ գիշեր նրա
 սենեակից ձայներ էին լսում :

Սենեքերիմ . (Բեմի հետեւից) Անահիտ , Անա-
 հիտ . . . ա՛խ . . .

Անահիտ . Լսո՞ւմ էք այդ բարձր հառաչանքը :
 Առաջ այն չըկար : (Բարձր) Գալիս եմ , հայրիկ :
 (Ցածր) Պարոն Տիգրան , ես վախենում եմ ձե-
 րունու ուղեղի մասին . . .

Սենեքերիմ . (Բեմի հետեւից) Անահիտ , Անա-
 հիտ . . . ա՛խ . . .

Անահիտ . Իսկոյն , իսկոյն : (Շտապով գնում
 է աջ կողմի առաջին դռներով :)

Տ Ե Ս Ի Լ III

Արտաշէս և Տիգրան .

Տիգրան . (Մենակ մնալով , մտնելով է ձախ
 կողմի դրան , ականջ է դնում եւ յետոյ թե-
 թեւակի մի քանի անգամ զարկում է դրան :)
 Կարելի՞ է :

Արտաշէս . (Դուրս է գալիս կողմի դռներով
 ձեռքին թղթերի մի կապոց :) Տիգրան : Ես
 հէնց ուզում էի քեզ տեսնել . այս թղթերը
 թագցրու մի ապահով տեղ :

Տիգրան . (Թղթերն առնում է եւ դնում
 գրպանը) Դու սպասում ես :

Արտաշէս . Ամեն վայրկեան : Բայց մի եւ
 նոյնն է , ինչ ուզում է , թող լինի : (Չկող
 գնում է Տիգրանի ուսին) Ա՛խ , Տիգրան ,
 երանի քեզ , որ միայն զաղափարներով ես
 կապուած մեր շրջանի հետ եւ ոչ գործով ,
 թէօրեայի եւ գործի մէջ կայ անգործ ան-
 դունդ , որ շատ քչերին է լիծակուած անցնե-
 լու առանց ոտը կտորելու :

Տիգրան . Դու տատանւո՞ւմ ես :

Արտաշէս . Եղիկ են մարդիկ , որոնք իրանց
 հոգում կրկ են պարտականութեան եւ սիրո-
 կուր : Մեր լեզուով դա անուանուած է գրայ

նուիլ երկու կրակի մէջ : Բայց ես , Տիգրան ես չորս կրակի մէջ եմ , չորս միմեանցից զօրաւոր եւ միմեանց ջնջող զգացումների փութորկում : (Հեռանում է Տիգրանից) Այո, երէկ ես քաջութիւն ունէի , այսօր տատանում եմ...

Տիգրան . Այս լուպէին Անահիտն ինձ ասաց , թէ նա վախենում է հօրդ ուղեղի մասին :

Արտաշէս . Դա դատարկ կրկիւղ չէ , ընկեր : (Մտնում է , ցածր եւ խորհրդաւոր) Մերունին կարծեմ իմացել է իմ գալու եւ գնալու իսկական պատճառը :

Տիգրան . Այդ բանն ասաց եւ Անահիտը : Բայց նա թագցնում է գաղտնիքը մօրիցդ եւ քրոջիցդ :

Արտաշէս . (Դառն փպրտով) Լաւ է թագըրնում , հը , երէկ նա ուրիշներին ներկայութեամբ բարձրաձայն գոռաց . « Նա չի գալ , նա չի գալ , նա գնում է օտարներին համար կախաղան բարձրանալու : » Եւ ո՞վ է այդ օտարը , արի , հասկացրու նրա մոլեռանդ ազգասիրութեանը : — Իմ ամենամտերիմ ընկերը , որին պարտական եմ իմ կեանքն երկու անգամ : Ի՞նչ փոյթ , որ նա հայ չէ , ի՞նչ փոյթ , որ նա միեւնոյն արգանդից չի ծնուել , որից ծնուել եմ ես : Ոչ մի եղբայր չէր անիլ ինձ համար այն , ինչ որ Իպպոլիտն է արել : Եւ իմ հայրը պահանջում է , որ ես լինիմ ուխտադրուժ , երզնագանց , փոքրոգի եւ երկչոտ միայն նրա համար , որ Իպպոլիտը հայ չէ... Ո՛հ , գոհնիկ զգացում ցեղամոլութեան , երբ պիտի դու վերջնապէս ոչնչանաս մարդկանց սրահերում : Ո՛չ , ո՛չ , թող կորչին տատանումները : Ես երգուել եմ ազատել եւ պէտք է ազատեմ Իպպոլիտին շղթաներից :

Տիգրան . Նայն իսկ զոհելով ծնողներին :

Արտաշէս . Նայն իսկ զոհելով ծնողներին :

Տիգրան . Նայն իսկ Ֆլորային :

Արտաշէս . Կայ : Դու գիտես այդ :

Տիգրան . Ես վաղուց էի կասկածում : Անահիտն այսօր հաստատեց իմ ենթադրութիւնը : Ինչո՞ւ դու ինձ ոչինչ չէիր ասում այդ մասին :

Արտաշէս . Մինչեւ երէկ ես ինքս էլ չգիտէի այդ : Երէկուայ տեսարանը բաց արաւ աչքերս եւ ես նոր միայն իմացայ , թէ որքան հեռու եմ գնացել : Հրածեշտի վայրկեանին , նայելով Ֆլորայի քարացած կերպարանքին , ես զգացի մի այնպիսի վիշտ , որ ծնողներին անզամ մոռացայ : Եղաւ մի վայրկեան , երբ պատրաստ էի չքել այդ աղջկայ առջեւ եւ ասել . « Թող կորչի պարտականութիւնը , դու տանջուում ես , ապրել ես ուզում , ես էլ եմ ուզում , ծնողներս էլ են ուզում : Ես մնում եմ այստեղ քեզ եւ նրանց համար : » Բայց զոհերի միջից նայում էին ինձ ընկերներս յանդիմանական հայեացքով , ականջներս հնչում էին Իպպոլիտի աղերսական խօսքերը . « Ազատեցէք ինձ , ես հարկաւոր եմ մի մեծ գործի համար , ազատիք դու , Արտաշէս , որովհետեւ ես քեզ երկու անգամ ազատել եմ , եւ հէնց քո պատճառով

եմ այս շղթաները կրում : » Եւ , բարեբա՛ւ գորար , ես չարի այդ յիմարութիւնը :

Տիգրան . Եւ , այնու ամենայնիւ , վճռեցիր զոհել մի քանի անձեր մէկի կասկածելի փրկութեան համար : Դա խիստ է , դաժան :

Արտաշէս . Բայց դա սուրբ պարտականութիւնս է :

Տիգրան . Համաձայն եմ : Սակայն , որքան Իպպոլիտին ես պարտական քո կեանքը , նոյնչափ եւ ծնողներին : Մտածե՛լ ես այս մասին :

Արտաշէս . Ամբողջ գիշեր , դառը տանջանքներով... Լսիր , լսիր , Տիգրան , կայ մի բան , որ դեռ քեզ յայտնի չէ : Եթէ ես լինիմ այնչափ երկչոտ եւ ստոր , որ այսօր վճռեմ յետ կանգնել իմ քայլից , այնու ամենայնիւ , ես կորած եմ իմ ծնողներին համար :

Տիգրան . (Վախեցած , մի քայլ յետ է գնում) Ճիշդ եմ հասկանում , արդեօք , քո միտքը :

Արտաշէս . (Բռնում է Տիգրանի ձեռքը) Մուս , ոչ մի խօսք նրանց : (Խորհրդաւոր ձայնով) Երէկ ստացայ առաջին , այսօր երկրորդ ըսպառնալիքը : Ես ստիպուած եմ գնալ : (Բաց է թողնում Տիգրանի ձեռքը եւ հեռանում) :

Տիգրան . Թշուա՛ն , այդ ի՞նչ ես արել :

Արտաշէս . Ես իսկ եմ ուրիշի վիճակը : Այդ աւելի պատասխանատու է , քան եթէ վիճակն ինձ ընկնէր :

Տիգրան . (Մռայլ) Այո՛ , այո՛ , քո գրութիւնը ստեղծել է :

Արտաշէս . Բաւական է , այլ եւս ոչ մի խօսք այդ մասին : Գնա , խնդրում եմ , եւ այդ թղթերը թագցրու : Բոպէ առ ըոպէ կարելի է սպասել անկոչ հիւրերին : Երէկ պիտի փախչէի նրանց ձեռքից , չըթողեցին . դու գիտես , որ ես շատ մեղքեր ունիմ քաւելու համար... Պէտք է շուտով փախչիլ :

Տիգրան . Ես կերթամ եւ շուտով կը վերադառնամ : (Արագ քայլերով դնում է դէպի խորքի դուռը . այնտեղ հանդիպում է Ալէքսանդր Ալվանդեանին , քաղաքավարի ճանապարհ է տալիս եւ դուրս գնում) :

Տ Ե Ս Ի Լ IV

Արտաշէս , Ալէքսանդր եւ Սենեքերի՛ճ :

Արտաշէս . (Ալէքսանդրին տեսնելով , ցնցում է եւ անշարժ մնում) :

Ալէքսանդր . (Քլուխը թեթեւ շարժում է իր բաւելուց նշան) : Սենեքերի՛ճը տա՛նն է :

Արտաշէս . (Լուռ մօտենում է աջ կողմի ստալին դռներին , բաց է անում եւ դէպի ներս) : Հայրիկ , պարոն Ալվանդեանը կամենում է քեզ տեսնել : (Յետ դառնալով , գնում է դէպի իւր սենեակը) :

Ալէքսանդր . Սպասեցէ՛ք :

Արտաշէս . (Կանգ է առնում) :

Սենեքերի՛ճ . (Դուրս է գալիս աջ կողմի ստալին դռներով : Հագուստը նոյնն է , միայն օձլած շապկի փոխարէն գիշերային շապիկ :

Անքնութիւնից աչքերի կոպերն ուռել են ,
անլուայ է , մայերը քիչ գզգզուած) Ալէքսանդր :

Ալէքսանդր . Երբէք չէի կարող մտածել , թէ
մի օր պէտք է բարեկամիս տունը մտնեմ այս
զրուածեան մէջ :

Սենեկերիմ . (Անտարբեր) Ի՞նչ է պատահել :
Առանց Ալէքսանդրին նայելու , մօտենում է
ծանր քայլերով գրասեղանին և ցրուած հայ-
եացքով նայում գրքերին , պատին , յատակին) :

Ալէքսանդր . Որդիք իմ աղջկան խլիլ է իմ
ձեռքից , ես մնացել եմ անզաւտիկ — ահա ինչ
է պատահել :

Սենեկերիմ . (Միևնոյն ցրուած հայեացքով ,
միևնոյն անտարբերութեամբ նայում է նախ
Ալէքսանդրին , ապա Արտաշիսին) :

Արսաէս . (Վայրկենաբար վրդովուելով , ան-
միջապէս զսպում է իրան) Ի՞նչ էք կամե-
նում ինձանից :

Ալէքսանդր . (Չայնը մի քիչ բարձրացնելով)
Ինչ եմ կամենում : Կամենում եմ , որ դուք
իմ աղջկան վերադարձնէք ինձ :

Արսաէս . Ձեր աղջկը ձեր տանն է , իսկ
ես այստեղ :

Ալէքսանդր . Նա չըկայ , չըկայ իմ տանը :
Դուք յափշտակել էք նրա սիրտը , հոգին , բո-
լոր մտքերը և թողել մի դատարկ մարմին ,
որ օր օրի վրայ կմտխք է դառնում : Դուք
մտել էք իմ տունը բարեկամի դիմակով և
վարուել էք ինձ հետ , ինչպէս... աւազակ :

Սենեկերիմ . (Դուռը յանդիմանութեամբ) Ալէք-
սանդր ...

Արսաէս . (Մի ուժգին շարժումն է անում ,
կարծես կամենալով յարձակուել Ալէքսանդրի
վրայ , բայց իսկոյն զսպում է իրան : Թևթեւ
լուութիւն :) Շարունակեցէք ...

Ալէքսանդր . Ուրիշ ի՞նչ անուն տամ ձեր վար-
մունքին : Դուք նրա երեսխայական գլուխը լըց-
րել էք այնպիսի մտքերով , որոնք նրան պիտի
կործանեն : Դուք նրա բարի սիրտը խլիլ էք
իւր հօրից և դարձրել սատանան գիտէ դէպի
ո՞ւր : Նա թողնում է ինձ մեն-մենակ և հեռա-
նում . ո՞ւր էք տանում նրան , ասացէք :

Սենեկերիմ . Թոյնը մի անգամ բուն է գրել
կազմուածքի մէջ և պէտք է արագ արագ տա-
րածուի : Ողորմելի՛ , անտէր հասարակութիւն :
(Բռունցքները կատաղի սեղմելով) Ա՛խ , կըջախ-
ջախէի ոտներիս տակ այն հիդրային , որ կոչ-
ւում է սօցիալիզմ ...

Արսաէս . (Մառը) Կրկամենայի իմանալ , ձեր
աղջկին ի՞նքն է ասել , թէ ես շեղել եմ նրան
ձանապարհից :

Ալէքսանդր . Միթէ նա պիտի ասէ՞ր , որ ես
իմանայի , թէ դժբաղգութիւնը օրտեղից է գա-
լիս իմ գլխին : Այն օրից , որ դուք եկել էք ,
ես իմ աղջկան չեմ ձանաչում : Նա առաջ հեղ
էր , խոնարհ և աշխատում էր ոչ մի բանով ինձ
չըվշտացնել : Ես նրա զէմքի վրայ տիրութիւն
չէի տեսնում : Ուրախ էր , ինչպէս մի անհոգ
թռչուն : Իսկ այժմ իւր սենեակից դուրս չի

գալիս , միշտ մենակ , մտախոհ , ծածկամիտ :
Նա իմ հարցերին պատասխանում է ակամայ :
Նա խօսում է ինչ որ պարտականութիւնների
մասին և ահա երեք օր է շարունակ կրկնում է .
« Հայրիկ , ես պէտք է հեռանամ այս քաղաքից »
Ո՛ւր , հարցնում եմ : Ինքն էլ չըպիտէ ինչ պա-
տասխանէ : Մէկ ասում է , թէ ուզում է ձանա-
պարհորդել , մէկ , թէ զգուել է իւր այժմեան
կեանքից , ուզում է փոխել այն : Իսկ այսօր
պնդում է , թէ վճռել է բարձրագոյն ուսում
ստանալ : Վերջապէս , մի կէս ժամ առաջ ես յու-
սահատութիւնից կատաղեցի և կեանքումս առաջին
անգամ գոռացի նրա վրայ : Իսկ նա... նա ամե-
նայն սառնասրտութեամբ ասաց . « Բոլորն իզուր
է , ես այստեղ մնալ չեմ կարող : Եթէ չթողնես
գնալ , ես կըփախչեմ քո տնից » : Եւ այս
բուպէիս նա ձանապարհի պատրաստութիւն է
տեսնում :

Սենեկերիմ . Մի՛ թողնիր նրան , Ալէքսանդր ,
մի՛ թողնիր : Կապտիր նրա ոտներն ու ձեռ-
ները , գցիր մի մուտ սենեակ և ինքդ պահա-
պան կանգնիր դռների մօտ : Աղատութիւնն է ,
որ փչացրել է մեր գաւախներին : Ես այժմ եմ
հասկանում : Ես , որ միշտ ազատութիւն էի քա-
րողում :

Արսաէս . (Մառը) Պարոն Ալվանդեան , ես
ձեր աղջկան երբէք չեմ յորդորել իւր հօր տնից
հեռանալու : Հաւատում էք իմ խօսքին :

Ալէքսանդր . Բայց նա հեռանում է , ասում
եմ , նա կատակ չի անում : (Չգաճուելով) Նա
թողնում է իւր ձեռունի հօրը վիպը ճռած ,
անէծքը բերանին : Ի՞նչ վատութիւն էի արել
ձեզ , որ այս փորձանքը բերեցիք իմ գլխին :
Ինչո՞ւ համար էր հարկաւոր այդ : Միթէ՞ չկային
ուրիշ ընտանիքներ , ուր քարոզէիք ձեր ցնորք-
ները , ինչո՞ւ ընտրեցիք ձեր հօր ամենահաւա-
սարիմ բարեկամի տունը :

Արսաէս . Դժբաղդաբար ես ժամանակ չունիմ
վիճելու : Ասացէք . կարճ ու կտրական , ի՞նչ էք
պահանջում ինձնից .

Ալէքսանդր . Ես պահանջում եմ , որ դուք ինչ-
պէս իմ աղջկան շեղել էք ձանապարհից , այն-
պէս էլ յետ բերէք :

Արսաէս . Այսինքն կամենում էք , որ ես
նրան համոզեմ մնալ ձեր տանը , այնպէս չէ՞ :

Ալէքսանդր . Այո՛ :

Արսաէս . Կարող եմ ես այդ անել :

Ալէքսանդր . Կարող էք , որովհետեւ ինչ որ էլ
նա ասի , գիտեմ , որ ձեր ետեւիցն է գնում :

Արսաէս . Շատ բարի , ես կաշխատեմ կատա-
րել ձեր պահանջը : (Բարձր) Անահիտ ...

Ալէքսանդր . Ի՞նչ էք ուզում անել :

Արսաէս . Խնդրել , որ ձեր աղջկը գայ
այստեղ

Ալէքսանդր . Այդ անկարելի է :

Արսաէս . Ինչո՞ւ :

Ալէքսանդր . Անկարելի է : Եկէք դուք ինք-
ներդ մեր տուն :

Արսաւես . (Դրական) Երբէք : Դուք ձեր տան
դռները փակել էք իմ առջեւ , թողէք որ նրանք
միշտ փակուած մնան :

Ալեխանդր . (Տատանուելով) Բայց . . .

Սեներիմ . Ալեքսանդր , կարող ես հաւատաւ
նրան : Նա ամէն բան կորցրել է , բացի ազնւ-
ուութիւնից : Վերջապէս , չէ՞ որ այս իմ տունն է :

Ալեխանդր . Շատ լաւ , ես համաձայն եմ : Կը-
զնամ և նրան կուղարկեմ այստեղ : Սեներիմը
պատասխանատու է : Խեղճ մարդ , ինչպէս փոխ-
ւել ես դու : (Գնում է խորքի դռներով) :

S E U I V .

Արդաշես , Սենեբիմ , Անահիտ .

(Լուսութիւն)

Արսաւես . (Նայել է նախ Ալեքսանդրին ետե-
ւից , ապա իւր հօրը թախիծով) :

Սեներիմ . (Լուռ ճանապարհ է գնում Ալեք-
սանդրին մինչեւ դռները և յետ է գալիս) : Նա
իւր աղջկան կուղարկի այստեղ : Քո արարմուն-
քից յետոյ դա այնպիսի հաւատ է Ալեքսանդրի
կողմից դէպի իմ տունը , որ պէտք է յարգել
ինչպէս սրբութիւն :

Արսաւես . Այդպէս է :

Սեներիմ . Ես պատասխանատու եղայ քո
ազնուութեան մասին , որովհետեւ ապահանուած
է քո գլուխը և ոչ սիրտը : Դու կրհամոզես այդ
աղջկան տեղից չըջարժուել : Ես կըկանգնիմ
ահա այն դռների ետեւում (Յոյց է տալիս աջ
կողմի առաջին դռները) և կըհետեւիմ ձեր խօ-
սակցութեանը : Եթէ դու չաշխատիս կատարել
քո խոստումը , երգուում եմ , որ քեզ կըսպանեն :

Արսաւես . Լաւ , հայրիկ . . .

Անահիտ . (Դուրս է գալիս աջ կողմի առաջին
դռներից գլխարկով , ձեռին տետրակներ և
շապով անցնում է դէպի խորքի դռներով) :

Սեներիմ . Ո՛ւր ես գնում , աղջի :

Անահիտ . Դասի , հայրիկ , ուշացել եմ : (Շտա-
պով գնում է խորքի դռներով) :

Սեներիմ . (Դառնութեամբ) Լսեցիր : Տեսա՞ր
ինչպէս է մաշուել ու սպառուել : Այդ դասերը
նրան կըսպանեն : Նա առանց այն էլ թոյլ կաղ-
մուածք ունի : Արտաշէս , Արտաշէս , գնա քո
բնարած ճանապարհով . ես համոզուեցի , որ չեմ
կարող քեզ դարձի բերել : Բայց , գիտե՞ս , մի
քիչ գութ ունենալն էլ լաւ բան է : Մի՛ կար-
ծիր , որ ինձ համար եմ՝ ստում : Ոչ ոչ , քաւ
լիցի . ես կարեկցութիւն չեմ խնդրում քեզից :
Խնայիր նրան , խնայիր մորդ . . .

Արսաւես . (Տնցուելով) Մօ՛րս . . . (Գնում է աջ
կողմի երկրորդ դռները) :

Սեներիմ . Մի՛ անհանգստացնիր , նա քնած է :

Արսաւես . (Դռները կամացուկ բաց է անում
և նայում) Այո , քնած է : (Դալիս է բեմի
կենտրոնը) :

Սեներիմ . Անբա՛ղդ կին : Նրա աջ թեւը չի

շարժոււմ և . . . չի շարժուիլ երբէք , այդ պու-
լաւ գիտես , իրրեւ բժիշկ : Ես էլ եմ մեղաւոր
նրա առջ , ոօ , շատ եմ մեղաւոր : Քսան ու-
կոթ տարի յափշտակուած լինելով իմ գործու-
նէութեամբ , ես նրա վերաբերմամբ եղել եմ
մի պարբերի էգօրսա : Բայց ոչինչ , իմն էլ վեր-
ջացած է : Ես երկար ապրել չեմ կարող , զգում
եմ : Մի՛ թողնիր նրանց իմ մահից յետոյ դռնէ
դուռ ընկնիլ , որորմութիւն մտրալ : Ես խօս
ոչինչ չունիմ , իմ միակ ժառանգութիւնը դու
էիր , գնացիր ձեռքիցս : Դէհ , հերիք է , ինչ
հարկաւոր է պառաւ կնոջ պէս մթմթալ , չէ՞
որ ամեն բան վերջացած է . . . (Բայլերն ուղ-
ղում է դէպի աջ և գրեթէ հանում առաջին
դռներին) :

Արսաւես . (Ուշադիր դիտել է հօրը , մտե-
նում է նրան մի քանի քայլ) : Հայր , սպասիր :
(Աւելի մօտենալով) Դու գիտես իմ այստեղ գա-
լու պատճառը :

Սեներիմ . Ինչի՞ դ է հարկաւոր :

Արսաւես . Հայր , դու գիտե՞ս իմ գնալու իս-
կական պատճառը :

Սեներիմ . (Մի քիչ տատանուելուց յետոյ)

Գիտեմ . . բոլորը գիտեմ :

Արսաւես . (Շնչասպառ) Ո՞վ է ասել քեզ :

Սեներիմ . Դու ինքդ . . .

Արսաւես . Հայր , ես երբէք չեմ հարբում , և
ուղեղս գեռ առողջ է :

Սեներիմ . Պատանիներ էք դուք , անխորձ
պատանիներ : Եւ յիմարներ են նրանք , որոնք
ձեզ այդ տեսակ վտանգաւոր գործեր են յանձ-
նում : Ես լսել եմ իմ ականջներով , ահա այն-
տեղից , այն դռների ետեւից : (Յոյց է տալիս
ձախ կողմի դռները) :

Արսաւես . Հայր , դու կատարելապէս լրտե-
սում ես ինձ :

Սեներիմ . Յիմար յիմար մի՛ խօսիր : Ի՛նչ
ասել է լրտեսութիւն : Մի՛թէ դուք չէ՞ք լրտե-
սում և ամէն միջոցների դիմում ձեր հակառա-
կորդների միտքը հասկնալու համար : Այո , քո
գալու օրից ես հետեւում եմ քո ամեն մի քայ-
լին : Բայց այս անգամ լրտեսութիւն չէր , այլ
ուրիշ բան : Ասում եմ , երեխաներ էք դուք ,
գեռ մայրական կաթը չի չորացել ձեր շրթունք-
ների վրայ : Չըգիտէք , որ պատերն էլ ականջ-
ներ ունին այդ տեսակ բաների համար :

Արսաւես . (Գրգռուած) Ի՛նչպէս պատահեց
այդ , սաս :

Սեներիմ . Գիշեր էր : Քունը փախել էր ինձ-
նից : Իսկ միտքս գործում էր : Մտալ գիշեր ,
ստկայի վայրկեաններ : Դուք կարծում էիք ես
քնած եմ : Խուլ խօսում էիք , ճշմարիտ է ,
չչնչինով , բայց պարզ , լսելի : Այո՛ , ես ահա-
մայ լրտես եղայ և բոլորն իմացայ : Դու կոր-
ծանուած ես , զինուորների սուխններն արդէն
պսպղում են քո կրծքի վրայ . . . և յետոյ . . .
կախազանը . . .

Արսաւես . (Նայելով աջ ու ձախ) Սուս , բա-
ւական է . . . մայրիկը . . .

Սեփեփեիմ . Մի՛ վախենար . ես նրան ոչինչ չեմ ասիլ : Բայց ի՛նչ օգուտ, մայրական նախազգացումը վաղուց է նրան ասել, թէ դու կորած ես... թշուա՛ն, թշուա՛ն... (Գնում է աջ կողմի առաջին դռներով):

S Ե Ս Ի Լ VI.

Աբրա՛շա և Տիգրան .

Արսաէս . (Հօրը խօսքերից խորն ազդուած, մտածում է, ճակատը շիկելով: Մի քանի վայրկեան մենակ է բեմի վրայ):

Տիգրան . (Քաշիս է խորքի դռներով՝ գունատ և յուզուած): Մի դժբաղդ լուր:

Արսաէս . (Սթափուելով, բայց անտարբեր) Ի՞նչ է պատահել:

Տիգրան . Այս լուպէիս լսեցի, որ Արազը երկաթուղու կայարանում դաշոյնով ծանր վիրաւորել է Հրանտին:

Արսաէս . Հրանտն երկու ժամ առաջ ինձ մօտ էր:

Տիգրան . Դէպքը պատահել է մի ժամ առաջ: Դու գիտես, որ Արազն այսօր իւր խմբով պիտի ուղեւորէր Տաճկահայաստան: Հրանտը գնում է կայարան յատկապէս նրա հետ վէճի բռնուելու երէկուայ ընդհարման պատճառով: Նա Արազին վիրաւորում է փողոցային խօսքերով: Արազը հանում է դաշոյնը և խիտւմ նրան, գոռալով. « դաւաճան: »

Արսաէս . Արազը բանտարկուած է:

Տիգրան . Դեռ ոչ, չեն բռնել:

Արսաէս . Եւ հազիւ թէ կարողանան բռնել: Ճանաչում եմ ես Արազին:

Տիգրան . Հրանտին տարել են հիւանդանոց: Դրութիւնը անյուսալի է և, ասում են հազիւ թէ մինչև երեկոյ ապրի:

Արսաէս . Մի զո՞հ ևս իմ խղճի վրայ: Եթէ երէկ ինձ թողնէին գնալ, այդ դժբաղդութիւնը չէր պատահիլ:

Տիգրան . Հրանտը վաղ թէ ուշ պիտի իւր անպուսպ լեզուի զօհը գտանար:

Արսաէս . Ես ցաւում եմ աւելի Արազին: Ի՛նչ հոգով նա պիտի պաշտպանի իւր արիւնակիցներին այդ տեսակ եղբայրասպանութիւնից յետոյ: Տիգրան, գնանք Հրանտին տեսնելու:

Տիգրան . Ի՞նչ ևս ասում, անմիտ: Եթէ մի տեղ կայ քեզ համար գնալու — այդ երկաթուղու գնացքն է: (Տատանուելով) Դու գեւ չըբիտես ինչ է պատահել:

Արսաէս . Ուրիշ դժբաղդութիւն... .

Տիգրան . (Դուրսը տխուր թերում է կրծքին):

Արսաէս . (Ձայնը բարձրացնելով) Ասա՛, ի՛նչ ևս համբացել:

Տիգրան . (Տատանուելով) Նոյիմզարին բանտարկել են:

Արսաէս . (Ցնցւում է, գունատուում: Լուսթիւն) Ուրեմն, ամեն բան լրացա՛ւ:

S Ե Ս Ի Լ VII.

Նոյն՝ և Ֆլօրա .

Ֆլօրա . (Քաշիս է խորքի դռներով) Հայրս ինձ ասաց... որ (Տիգրանին տեսնելով, շիտովուում է):

Տիգրան . Թոյլ տուր ինձ անցնիլ քո սենեակը մի նամակ գրելու: (Առանձին Արաշխին ցածր ձայնով) Չերկարացնես: Դու պէտք է փախչես իսկոյն և եթ: (Գնում է ձախ կողմի դռներով):

S Ե Ս Ի Լ VIII

Աբրա՛շա և Ֆլօրա .

Արսաէս . (Թեթեւ լուսթիւնից յետոյ) Ֆլօրա, ձեր հայրն ինձ ասաց, թէ դուք ուղում էք հեռանալ այս քաղաքից: Կարելի է իմանալ, ո՞ւր էք մտադիր գնալու: (Աթոռ է տռաջարկում):

Ֆլօրա . (Չի նստում) Դրա համար էիք կամեցել ինձ տեսնել:

Արսաէս . Այո:

Ֆլօրա . Ձե՛մ կարող պատասխանել ձեր հարցին:

Արսաէս . Ֆլօրա, դուք երեխայ չէք: Երբ որոշում էք մի այդպիսի լուրջ քայլ անել, պարտաւոր էք նախ և առաջ ձեզ հաշիւ տալու ինչո՞ւ համար էք անում:

Ֆլօրա . Ես գնում եմ բարձրագոյն ուսում ստանալու:

Արսաէս . Չեր հայրը հաւատում է այդ բանին:

Ֆլօրա . Ոչ:

Արսաէս . Ֆլօրա, այնտեղ, ուր ուղում էք գնալ, դուք դեր չունիք կատարելու:

Ֆլօրա . (Վշտացած) Ինչո՞ւ մի Նոյիմզար կարող է դեր ունենալ, իսկ ես՝ ոչ:

Արսաէս . Նոյիմզարն ունի որոշ պատրաստութիւն, կամքի գօրեղ ոյժ և բոլոր դժուարութիւններին դիմանալու համբերութիւն:

Ֆլօրա . Իսկ ես ունիմ թշուառներին օգնելու ջերմ փափագ և դրամ:

Արսաէս . Դուք դրամ չունիք: Բոլորը առ այժմ պատկանում է ձեր հօրը . իսկ նա ձեզ ոչինչ չի տալ:

Ֆլօրա . (Դրական) Կրտայ, ստիպուած կրլինի տալ: Առաջին պահ նա կրկատաղի, կանիծ է ինձ, բայց յետոյ կրտայ: Եւ ես նրա տուածով կօգնեմ նրանց, որոնք այնպէս տանջւում են գաղափարի համար բանտերում և արտորում:

Արսաէս . Այդ օգնութիւնը դուք կարող էք անել առանց այստեղից հեռանալու էլ:

Ֆլօրա . Ոչ, այդ այն չէ: Ես նոյնպէս ուզում եմ իմ աչքերով տեսնել բոլորը, մտածել, զգալ ուրիշների պէս: Իմ անմիտ, անհոգ, բուսական

կեանքը ինձ ձանձրացրել է: Ես էլ փափագում եմ լինել մի նոյնիմացի, որ այնքան արժանացել է ձեր և ձեր ընկերների յարգանքին ու գովասանքին:

Արսաէս . Կամենում էք ասեմ, թէ իսկապէս ինչու համար էք գնում:

Ֆլորա . (Շփոթուելով) Ասացէք:

Արսաէս . Դուք ոչ այնքան գործով էք յոփշտակուած, որքան... ինձնով:

Ֆլորա . (Աւելի շփոթուելով) Դուք... սխալուում էք:

Արսաէս . Ֆլորա, այն շրջանը, ուր ուզում էք մտնել, նախ և առաջ թշնամի է կեղծիքին: Դիմահն այնտեղ դեր չի կատարում ընկերական յարաբերութիւնների մէջ: Սովորական ծամածռութիւններն առ միշտ արտաքուած են այդ շրջանից: Եթէ ես ձեզ, առանց քաջուելու, ասացի, թէ յափշտակուած էք ինձնով, դա անհամեստութիւն չէր, այլ ընկերական պարզ խոստովանութիւն: Երբ իմ քոյրը թեթեւամտաբար հաղորդել է ձեզ մի փողոցային բամբասանք, թէ ես իբր թէ գաղտնի ամուսնացած եմ նոյնիմացի հետ, դուք ուշաթափուել էք: Ճիշդ է, արդեօք:

Ֆլորա . (Տառանդուելով) Ճիշդ է...

Արսաէս . Տեսնում էք: Ի՞նչ է ապացուցանում այդ: Մի՛ ամաչէք: Մեր շրջանում այդ տեսակ ամօթի զգացումը համարուում է երեսի շպար: Ազատուեցէք նախ և առաջ այն ժանգից, որ կեանքի հնամուշ պայմանները դրել են մեր կանանց սրտերի վրայ: Համեստութիւնն այն ժամանակ է միայն համակրելի, երբ բնական է և անբաժան անկեղծութիւնից: Փոխանակ ձեր զգացումները քողարկելու, աշխատեցէք, որ նրանք միշտ լինին մաքուր:

Ֆլորա . (Ուշադիր լսելով, յափշտակուում է) Շարունակեցէք, շարունակեցէք...

Արսաէս . Այն, ինչ որ ձեր շրջաններում համարուում է պարկեշտութիւն, մի տեսակ փարիսեցուցութիւն է: Մենք աշխատում ենք տղամարդի և կնոջ յարաբերութիւնները զարձնել ընկերական, անքող բայց մաքուր: Մենք աշխատում ենք այնպէս մտածել կնոջ մասին, որ մեր լեզուն չամաչի արտայայտել մեր զգացումները: Ձեր շրջանի մէջ ընդունուած արտաքին վայելուչ ձեւերի տակ թաքնուած են շատ արատաւոր միտումներ, որոնցից մենք զգուում ենք:

Ֆլորա . (Աւելի ու աւելի յափշտակուելով) Առաջին անգամն եմ լսում այդպիսի խօսքեր և պատրաստ եմ լսել անվերջ: Շարունակեցէք, նրանք բաց են անում իմ առջեւ մի նոր, անծանօթ աշխարհ:

Արսաէս . Աշխատեցէք, ուրեմն, գրաւուիլ այդ նոր աշխարհի լուսով: Այն ժամանակ դուք կբարձրանաք մեր հասարակութեան բարոյական մակերեւոյթից և կըհասկնաք, ո՛ւր է թագնուած մարդու իսկական կոչումը: Ֆլորա, որքան դուք

էք ինձնով յափշտակուած, նոյնքան և ես ձեզնով: Եթէ սէրը տանջանք է, ապա երէկուանից դէս ես տանջուել եմ աւելի, քան վերջին հինգ տարիները, որ սոսկ տուայտանքների մի շղթայ են կղել:

Ֆլորա . (Բոլորովին յափշտակուելով) Արտաշէս, անգին Արտաշէս... (Ուզում է մօտենալ):

Արսաէս . (Ձեռի մի հանգիստ շարժումով) Ոչ, դրա համար չասացի: Թողնենք սովորական ձեւերը: Սէրը զգացում է և ոչ կիրք, թողնենք այն իւր մաքրութեան մէջ: Ծնչենք նրա յստակ բուրմունքը հեռուից: Քիչ է տեսելու մեր անսակցութիւնը: Քսան ու վեց տարեկան եմ եւ դեռ չեմ ճաշակել կնոջ համրոյրը: Ինչու քսան ու վեց վայրկեան էլ չըկարողանամ մնալ նոյնը:

Ֆլորա . (Վախեցած) Ի՞նչ էք ասում, ինչո՞ւ քսան ու վեց վայրկեան միայն, ինչո՞ւ ոչ աւելի: Ձեր խօսքերի տակ ես զգում եմ մի ինչ որ սարսափելի բան...

Արսաէս . (Հանգիստ) Բոլորը կըբացատրուի ինքն ըստ ինքեան: Մի քիչ համբերութիւն: Այսօր ձեր հայրն ինձ անուանեց աւագակ: Մի վայրկեան արիւնը գլխովս տուեց և չըգիտէի ինչ կանէի, եթէ ժամանակին չըզսպէի ինձ: Դա մի անարդար վիրաւորանք էր: Բայց ես նրան չեմ մեղադրում: Մի հայր, որ զրկուում է իւր միակ զւակից, ունի իրաւունք իւր սովորական սոսնաւարտութիւնը մոռանալու: Ֆլորա, մնացէք ձեր հօր տանը, մի՛ անբաղդացնէք նրան — ահա իմ միակ խնդիրը:

Ֆլորա . Ձեմ կարող: Քանի որ ստիպել էք ինձ անկեղծ լինել — կըլինիմ մինչեւ վերջը. առանց ձեզ ես մի օր անգամ չեմ կարող մնալ այստեղ:

Արսաէս . Բայց գիտէ՞ք ես ուր եմ գնում... (Նայում է Ֆլորային տարօրինակ):

Ֆլորա . Այդ ինձ համար մի և նոյնն է: Ես կըհետեւեմ ձեզ, ուր որ գնաք: (Ինչո՞ւ էք ինձ այդպէս նայում: Սպասեցէք, այդ չէ, այստեղ կայ մի վատ բան: (Մօտենում է և բռնում Արտաշիսի ձեռը) Ասա՛, ի՞նչ ես մտածում՝ դու այդ վայրկեանին, ինչո՞ւ քո աչքերն այդպէս տարօրինակ են նայում...)

Արսաէս . (Ականջ է դրել դէպի դուրս, գունատուում է, դողում) Կնա՛ տուն, Կնա՛ հօրդ մօտ... (Ձեռն ազատում է):

Սենեկերիմ . (Բեմի ետևից) Ա՛հ, ա՛հ, դալիս են, եկան, ուղղակի մեր տան վրայ... Ազատուեցէ՛ք...

Արսաէս . Լսում ես, լսում ես, Կնա՛, փախիր...

S T U T L IX.

Նոյն, Սենեկերիմ, Անանիոս, Կարաբէնէ, Տիգրան և մի Ոսթիկանական պաշտօնեայ.

Սենեկերիմ . (Ներս է վազում աջ կողմի առաջին դռներով դողալով) Ազատուեցէ՛ք, գալիս են:

Ես տեսայ այնտեղից, լուսամտից: Կատարինէ՛, Կատարինէ, օ՛հ, (Անիմաստ վազվզում է դէս ու դէն):

Տիգրան. (Ներս է գալիս ձախ կողմի դռներով մի գրիչ ձեռին): Ի՞նչ պատահեց:

Անահիտ. (Պալիս է շտապով խորքի դռներով) Հայրի՛կ, հայրի՛կ, նրանք գալիս են, ես հագիւ կարողացայ ներս մտնել: (Ընկնում է հօր գիրկը):

Սենեֆերիմ. (Գրկում է Անահիտի գլուխը) Մի՛ վախենար, նրանք գալիս են միայն մէկի համար: Այդ ես վազուց էի սպասում:

Արսաէա. (Հուռ և անշարժ կանգնած է բեմի ձախ կողմում և նայում է դէպի խորքի դռները) Բեմի ետեւից լսում է, ինչպէս մի ծանր բան, որ ընկնում է յատակի վրայ:

Անահիտ. Մայրիկը: (Վազում է դէպի աջ կողմի երկրորդ դռները, բաց է անում դռները, նայում, սարսափում): Մայրի՛կ... Ո՛հ, նա սողում է յատակի վրայ: Օգնեցէ՛ք:

Ֆլորա. (Բարացած, անշարժ, բեմի աջ կողմից դիտում է Արտաշիսին):

Տիգրան. (Վազում է դէպի աջ կողմի երկրորդ դռները և շէմքի վրայ Անահիտի օգնութեամբ յատակից բարձրացնում է անգամալոյծ Կատարինէին):

Բոյոր - (Բեմի աջ կողմում են, բացի Արտաշիսից և նայում են դէպի խորքի դռները):

Սենեֆերիմ. (Արտաշիսին) Փախի՛ր, թշուառ, ի՞նչ ես քարացել...

Արսաէա. Մայրի՛կ: (Արագ մտնելով է մօրը, գրկում, համբուրում: Յետոյ համբուրում է Անահիտի հետ և, դառնալով հօրը) Մնաս բարով, հայրիկ, ես այլ ևս քեզ չեմ տանջի: Ֆլորա, ներիր ինձ, (Մի վայրկեան դառը թախիծով նայելով Ֆլորային, վազում է ձախ կողմի դռներով և դռները ետեւից փակում):

Պրիսաւ. (Երևում է խորքի դռների մէջ: Նրա ետեւից երևում են ուրիշ ոստիկանների գլուխներ): Արտաշէս Սահառունի:

(Բեմի ետեւից լսում է ատրճանակի երկու զարկ):

Սենեֆերիմ. (Աղաղակելով) Ահա՛ կործանուածը:

Տիգրան. } Վազում են դէպի ձախ կողմի
Ֆլորա. } դռները:

Տիգրան. (Կոտրում է դռները, ներս նայում և յետ կանգնում): Նա լողում է արեան մէջ:

Կասարիկ. (Ճչում է) Աա, անաստուածներ...

Սենեֆերիմ. Նա ուրիշ ելք չունէր: Վազում է Արտաշիսի սենեակը, տարօրինակ ձիչեր արձակելով):

Վ Ա Ր Ա Դ Ո Յ Ը

Վ Ե Ր Ձ

ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Բաղդն ըզեզ յիճե
Կորգեց, Աղիճե .
Ռալէս զի յաշարն
Վարեմ կեան յաշար :

Այլ երբ իմ նակաս
Կրի յուսահաս,
Եւ վիճեմ կենցաղոյս
Ձիս րնկենն անոյս :

Անդէն ես ի լեզ
Խորհիմ, կո՛յոյ իմ ճեզ
Եւ հոգոյս մրայլ
Յրնդի ի ես փայլ :

Եւ երբ՝ բազմավեր,
Ըզոն յիւճեմ սեր,
Իսկոյն մտանաւ
Ցաւերս համերաւ :

Թէեւ ինձ մօտ չես՝
Քեզ ճես կ'ապրիմ ես .
Կարծեմ՝ լուսախիտ
Տեսնել ես ժպիտ :

Լրսել ձայնդ անու՛ս՝
Որ գրաւէ զիմ ու՛ս,
Չիւնաքոյր լանցաց
Տրոփիւնս սիրազգաց :

Եւ ըստփաբեր
Գողցիկ ես խօսեմ
Որ ի խոս ոգոյս
Շողողեն ըզոյս :

Ձի դու՛ մութ հոգոյս
Քաղցրութի՛նն ես, լո՛յս .
Քե՛ւ իմ ցրուի սուզ,
Քաղցրին արսաւո՛ւս :

Ձի ես սեր անախս՝
Իմ կեանն է եւ բախս .
Առանց սիրոյ էջ
Մեռանի՛մ անգոյ :

Ի Մ Ի Տ Ի Ա Լ Ը

Իմ իտէալն է մի կոյս՝
Որ դիցունին է հոգոյս :

Արտի սրտիկն ամենայն

Նրա՛ խնայեալ են միայն (*):

Ի նա խորհիմ հանապազ ,
Ձնա՛ կը տեսնեմ ես յերազ .
Ի սրբնցեան եւ գիտե՛ր՝
Նա՛ միտս աչացս է պատկեր :

Ձէ նա ծընած մեծաւուն .
Պարզութեամբն ա՛յնքան սիրուն՝
Որ ոսկեհուն հանդերձ՝ կին
Կը մտրագնի մերձ նրմին :

Նորա զարդն է բովանդակ
Կուսափայլ փողն քայիսակ .
Ձունի՛ նա կեղծ եւ ոչ ինչ ,
Համայնն՝ արտին պէս է ջինջ :

Շողալ սիրէ ոչ բընա
Ընկերութեանց պերն ի խառ .
Եւ կը շիկնի ամօրխառ
Յիւր հրապոյրներ սիրագրած :

Սեւակայծ աչք իւր ունին
Փայլ այնպիսի երկնային՝
Որ նորա սուրբ ակնարկէն
Շիկնին պատշոյ՛ իւր ամէն :

Անբընութեամբն է շուշան ,
Դեղովն ա՛յնքան հրաշագան ,
Որ յաշխարհ չո՛ր ինչ բընա
Նորա հանգոյն սրագրաւ :

Քան ըզրնար ձայնն անուշ ,
Այս քան ըզվարդն է քննուշ .
Քան ըզսաստակ հեղագոյն ,
Քաղցր քան զեկս է այգոյն :

Նորա նակսին պէս նրոյլ
Ձունին լուսին , աստեղ բոյլ .
Ոչ մի ծաղիկ գեղաբոյր
Հանձին նրա չունի բոյր :

Ձի զամենայն՝ զոր կանայ՛
Ունին ձիւրեր եւ հրմայ՛ ,
Բովանդակէ յիւր ոգին
Իբր ի փունջ՝ իմ պատշելին :

Շարժում իւր , բանն եւ բնութիւն՝
Փայլին լոկ զա՛մեղութիւն .
Եւ ով տեսաւ զայն՝ կ'ըսէ .
Արդեօ՛ք հրաբուն հրեօսակն է :

Հրեօսակ քէ կոյս հրաւաղէմ ,
Ես ալ յերկրայս՝ զա՛յս գիտեմ

* Վարդանէ. Խնայեալ են սրտս ձայնն :

Որ յիւր փափկիկ մի նայուած
Կեանք ըզգացի բոցազգած (*):

Չը գիտեմ քէ ո՞վ է նէ .
Դիտեմ որ իմ անուշն է :
Համայն իւր անձ՝ դաւանակ , լոյս ,
Բոյր , քաղցրութիւն է , սէր , յոյս :

Եւ ըզմայեալ իմ հոգին
Յա՛յտան հրապոյրս երկնային ,
Գոչեմ . « Իմ կոյս Աղինէ
Երկնի քննուշ ժրպիտն է » :

Ե Ի Ա

Երբ Արարիչ վերջ տուաւ
Արարածոցն բոսեղման ,
Յիւր գահոյից նայեցաւ
Յէից զմեղ տեսարան :

Արփին շողայր վեհափառ ,
Կեանս սրփուելով ի բնութեան .
Լուսին , աստեղ վառ ի վառ
Տային ըսփոփ գիտերուան :

Դիտեց լեռներն ամպաներձ ,
Ձանեղամուռնն ռվկէան ,
Պրսպղուն փայլ ջինջ աղբերց
Ձեփիւն ի սիւր յամարան :

Մարգագետինն եւ ծրմակ
Կանաչազարդ փայլէին ,
Եւ դասապետն սոխակ
Թրուչնոց հետ երգ մընչէին :

Մորկչէր առիւծ սիրաբար ,
Խորխընջէր ձին բառապանձ ,
Դառնիկ մայր հեղաբար
Յանասնոց ջոկ սիրախանձ :

Ի բուրասան բոյր ի բոյր ,
Շուշան , յակինթ , յամիկ , վարդ ,
Տարածէին քաղցրիկ բոյր ,
Շողողելով ցողազարդ :

« Այս ամենայն բարի է ,
Ըսաւ Հաստիչըն բնութեան .
Այլ ոչ մին դեռ պատկերէ
Ձիմ մրսասիպ գեղութեան » :

Նոյնատեղոյց զաչս յայնժամ
Ի դրախտն եղեմ . եւ տեսաւ
Ձի նետէր սէգ անդ Ազամ ,
Միայնութեան կրելով ցաւ :

* Վարդանէ. Որ յիւր սիրոյն թէ հայեաց — Կեանք ըզգացի սիրազգած :

Մագերն ի յուս գանգրաւէս,
Բոցավառ աչք սեւորակ,
Բարձր էր նակաս լայնաւէս,
Բազուկի կարենեղ, յաղթ հասակ :

« Սա կենդանեաց՝ արժանի,
Դաւաւ, լինել գահակալ,
Զի է բնութեամբ կորովի,
Հոգւոյ ձրիւմ պերնացեալ (*) :

« Այլ թէ է սա զօրութեան
Եւ համնարոյ ներկայիչ,
Այլ չէ եւ սա փափկութեան
Տեպեան մրացս յանկուցիչ :

« Սեղծագործեմ վերստին,
Տալ իմ մրաց մարմնացում.
Եւ այն լինի լիովին
Դեղոյ, շնորհաց լրացում » :

Եւ վայր իջեալ ի գրախոս Նայ
Արարչագործ իւր ձեռնով,
Առաւ սրբէն Ազամայ,
Շինեաց մարմին լուսարով :

Եւ ի սիրոյ աղբիւրէն
Փրչեալ սրբին ի վարդեր,
Բորբոնեց զայն բոցեղէն
Եւ եղաւ կին համակ սեր :

Դեղեցկութիւն ևւ շրնորն
Ճառագայթեն երկնագոյն .
Գորով, նազանք սրբախորն
Է էութիւն իւր ողջոյն :

Դեղձան հոպոպի ցոսն համբոյր,
Եւ պարանոց մարգարեայ,
Այսեր ևւ լանջ կարճաթոյր,
Անդամ փափկիկ բիւրեղեայ :

Թէ՛ հողանի՛ թէ՛ ի հող
Վարսից՝ ա՛յնման սրփոռ փայլ,
Զի չէ յէից ո՛ր յաղթող
Իւր երատուրից հոգեզմայլ :

Երբ գնայ ի բեմ ռսն ի բինդ,
Ի ստուերս հովսացն Եղեմին,
Իմաղկունք զգնա սիրս ի խինդ
Թագունի խոստովանին :

Յարարածոց ամէն ո՛ր
Մասն էս նրմա գեղազանգ .
Արփին ի սիրս հուր բորբոք,
Ծաղկունք, գոհար՝ բոյր, երանգ :

Շնորհաց, գեղոյ ամփոփում,
Գիրգ հոգի՛ գողոր ի մարմին,
Զմայլմանց, հեւտութեանց զեղում,
Կասարելութիւն վերջին :

Այս է անա կոյսն եւա,
Հասչին յեսին ձեռաց սիպ,
Եւ զմայլեցաւ էն ի նա,
Իբր յիսկաւան մրստիպ :

« Գեղեցկութիւն, կուսամ լեզ
Անգիմադարձ շնորն հրապոյր,
Վառէ՛ ի սեր բոցակեղ,
Մարդոյն թգսիւրս անհամբոյր :


Եւ ժրպեցելով Տէր՝ զլարթ,
Յաւել՝ « Սա այժմ արգարէւ
Է փունջ շնորհաց քան թզարդ,
Սա սացէ կեանս քան զարէւ :

« Սա բող լիցի մարդոյն միտ
Սրբին սարփանք, հոգւոյն յոյզ,
Ուրախութիւն իւր եւ վիտ,
Կեանքն իւր եւ ման, լոյսն ևւ յոյս » :

ԽՈՐԷՆ ԱՆՆԱՐՊԷՑ



Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ե Ե Ր Ը



Արեւակեղ համբաներէն երգ մը սրխուր կ'երկարի
Ու կը մեռնի գաղջութեան մէջ արեւելեան երկրնին .
Կարաւանին վրայ կ'իյնայ լուսնի շառայլ մ'հեւսազին
Իրծելով շունչը սրբինին համբորդներուն յոգնասանջ :

Անոնք հազիւ տեսան աղբիւրն ովասիսին զովաւաս
Որուն ջուրերն հրաւարասում նեկեաքն իրենց պատմեցին,
Ուր այն գիւրէր պահ մը շողաց երկնակամարն աստղածին
Նոստումներով՝ շունին, սէրին սարաբարհիկ նոններուն :

Ու ցաւաբեկ, կորսամակ կ'երթան անոնք անսրտուց
Դէպ ի բոյրերն աստրական անանուխին հեւսաւէս
Ուր սարփորէն պիտի զրգուէ երանքն իրենց ձէլլանի :

Կը մրտակե՛ն, կը մրտակե՛ն պերն նրծոյցներն յաղթաւուն:
Անապասին մահամարմբոյր հովերուն մէջ առ յաւէս,
Յետոյ սրտո՛ւմ կ'երգեն անունը ձէննեղին, Ալլանին . . .

Ա. ՀԱՐՈՆՆ ՏԱՏՈՒՐԵՆՆ



*) Վարսիւն . — Հոգւոյն յիւր մասնակցեալ :

Ք Ր Ո Ն Ի Կ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը.
Ե. Լալախեանի « Ալպոմը » :

«Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը» որ 1906ին հիմնուեցաւ Գահիրէի մէջ՝ նախաձեռնութեամբ Պօղոս փաշա Նուպարի, հրատարակեց վերջերս իր եռամեայ գործունէութեան տեղեկագիրը: Անհնար է՝ ու եւ է Հայու համար՝ կարգաւ այդ տեղեկագիրը առանց խորին գոհունակութեան: Միութեան հիմնադիրները ցանկացած են կազմել Հայկական ընկերութիւն մը որ «Ալիանս Իզրայէլիթ»-ին համարժէքն ըլլայ մեզ համար:

Այս առաջին երեք տարիներուն մէջ, — ինչպէս Հ. Բ. Ը. Միութեան կեդր. վարչ. ժողովն ալ կը յայտարարէ իր տեղեկագրովը — Միութիւնը չէ կրցած ունենալ անշուշտ գործունէութիւն մը այնքան բազմաձև ու լայն ծրագրով՝ ինչպէս է «Ալիանս Իզրայէլիթ»-ինը:

Թէ ի՞նչ է ծրագիրը Հրեական այդ մեծ ընկերութեան և թէ ի՞նչ ըրած է ան իր բազմամեայ կեանքին մէջ, այդ մասին ընդարձակօրէն գրած եմ «Անահիտ»-ի 1902 դեկտեմբերի թիւին մէջ, ինչպէս և 1905 հոկտ.-նոյ., ցանկութիւն յայտնելով նմանօրինակ ընկերութիւն մը մեր մէջ հաստատուած տեսնել, ընկերութիւն մը որուն շուրջը խմբուէին Հայութեան այն մեծազանգուած տարրերը որ յեղափոխական միջոցներով գործելու համամիտ չըլլալով՝ պարտաւոր էին գոնէ խաղաղ միջոցներով, բայց լայն և ուժեղ կազմակերպութեամբ մը, նպատակ հայ ժողովրդին կեանքը պահպանելու և զօրացնելու: Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը իր առաջին երեք տարուան շրջանին մէջ՝ տարամերժօրէն ձգտած է ահաւոր թշուառութեան մը մտանուած Թրքահայաստանի հայ բնակչութեան օգնութիւն հասցնելու: Ատիկա ինքնին շատ յարգելի և կարևոր գործ մըն էր. ժողովուրդ մը՝ վարգանալու համար՝ նախ պէտք է ապրի. իր կեանքը ապահովելու համար՝ իր քաղաքական պայմանները բարելաւելու ձգտող

քաղաքական գործունէութեան մը հետ զուգահեռաբար՝ թշուառութեան մէջ փձանալու ան միջական վտանգին դէմ զինքը պաշտպանող գործունէութիւն մը անհրաժեշտ էր. այդ գործը անշուշտ Հ. Բ. Ը. Միութեան հիմնուելէն առաջ, և անոր հիմնուելէն ետքն ալ, շատ մը հայ հաստատութիւններ, կազմակերպութիւններ և անհատներ կատարած են. բայց Հ. Բ. Ը. Միութիւնը զայն կատարած է՝ շատ ընդարձակ սահմանի մը մէջ՝ այնպիսի մեթոտաւոր կանոնադրութեամբ մը, ապահով ու փութկոտ ձեւով որ հազուագիւտ են մեր մէջ և ամենամեծ գովեստի արժանի են: Ինչ որ արդէն՝ ըստ իս՝ ամենէն նկատելին և բերկրառիթն է այդ տեղեկագրին թելադրած տպաւորութեանց մէջ, ճիշդ այն կուռ ու տեական կազմակերպութեան, մեթոտաւոր գործունէութեան ոգին է, այդ ընկերութեան փոխանցուած իր գլխաւոր հիմնադրէն՝ եւրոպաձև գիտական յստակ մտքով, բարձրօրէն գործնական ոգւով օժտուած այն Հայէն՝ որ է Պօղոս փաշա Նուպար Հ. Բ. Ը. Միութեան այս երեք տարուան միջոցին ամենէն կարևոր գործը, ինծի համար, նպաստամատոյց գործունէութեան շատ յարգելի և արդիւնաւոր ջանքերէն իսկ աւելի կարևոր, զօրեղ ու յարատե կեանքի մը կարելիութիւնն ինքզինքին վճռապէս ապահոված ըլլալն է: Գործիքը վերջնապէս պատրաստ է այլևս, ճապուղ ու սոկուն. շնորհիւ անոր, այժմէն կրնանք գուշակել, Հայերը պիտի ունենան Հայկական «Ալիանս» մը:

Երեք տարուան մէջ՝ Միութիւնը գոյացուցած է, մուտքի վճարով, ամսավճարով, նուիրատուութիւններով, ևն. 12,647 եգիպտ. ոսկիի գումար մը, որուն 8,718 ոսկին պահուած կը մնայ՝ իբր անձեռնմխելի դրամագլուխ՝ ըստ ընկերութեան կանոնագրին մէկ հեռատես ու շատ գովելի յօդուածին, իսկ մնացեալը մեծ մասամբ ուղարկուած է Թուրքիոյ (և մասամբ՝ Վովկաթի) թշուառ Հայերուն. նպաստները ուղարկուած են ոչ միայն իբր հացագին ծառայելու, այլ՝ աւելի գործնական ըմբռնումով մը բարեգործութեան՝ կարօտ Հայ երկրագործին սերմնցու բաշխելու:

Միութիւնը մասնաւորապէս մեծ դեր կատարած է Վիլիկիոյ վերջին աղէտքին բացած

աճաւոր վէրքը դարմանելու . առաջին նպաստները զրկողներէն եղած է ինքը , մեծ արագութեամբ և կանոնաւորութեամբ . բաց ի իր դրամէն այդ նպատակին յատկացուցած գումարէն , հանգանակութիւն մը ևս կազմելով հաւաքած է 253,716 եփիպ . զոր ուղարկած է Վիլիկիա :

Այժմ , իր եռամեայ տեղեկագրին մէջ , Միութեան կեդր. վարչական ժողովը ինքն իսկ կը յայտարարէ թէ այսուհետեւ ջանադիր պիտի պիտի ըլլայ իր ծրագիրը աւելի ընդարձակօրէն գործադրելու . «Առաջին վայրկեանէն՝ ինքզինքնին գտանք այնպիսի աճաւորութեան մը առջև , այնքան բազմապահանջ պէտքերու առջև որ մեր բոլոր բարի կամեցողութիւնը և յարատեւ ջանադրութիւնը չի գորեցին փափաքուածին չափ օգնութիւն հասցնելու : Յաճախակէպ աղէտքներու և աճադին կարօտութեան պատճառաւ , հացապինի և սերմնցուի համար նիւթական նպաստի հարիւրաւոր խնդրանքներուն մէջէն՝ ստիպուեցանք է՛ն անհրաժեշտներուն միայն մասամբ գոհացում տալ՝ մեր նպաստները յատկացնելով պարագային համեմատ հացադնի կամ սերմնցուի : Եւ այսպէսով , չիկրցանք դժբաղդաբար գործադրել ընկերութեանս նպատակին մնացեալ մասը , որ մեզի համար աւագ կարեւորութիւն ունի և որուն մէջ իսկ կը կայանայ Միութեան գլխաւոր դերը , այսինքն նպաստել ընդհանրապէս հայ ժողովրդին բարոյական և մտաւորական զարգացումին , և օժանդակել կարելի եղած չափով՝ հայ գիւղացիներուն՝ հողատնտեսական միջոցներ հայթայթելով և արհեստագործութեան վերաբերեալ մասնայատուկ նախագիտելիքները սորվեցնելով անոնց : Չենք կարող սակայն մեր ուշադրութենէն հեռացնել Միութեան նպատակին այս շատ կարեւոր մասը , զոր և ոչ մէկ ջանք պիտի խնայենք գործադրելու համար , անմիջապէս որ ներեն պարագաները՝ որ մեզ սահմանափակեցին ցարդ Աղքատախնամի մը դերին մէջ . արդարեւ , համոզուած ենք , այսպէսով է միայն որ Միութիւնը պիտի յաջողի կատարելապէս լրացնել իր բուն առաջադրութիւնը :»

Արդարեւ , Միութեան կանոնագրութիւնը , խմբագրուած 1906ին , կը պարունակէր արդէն հետեւեալ յօդուածները .

Նպասակ . — Ա. Ասիաբնակ Հայ ժողովրդին մտաւոր և բարոյական զարգացմանը նպաստել . Բ. Անոր նիւթական ու տնտեսական կացութիւնը բարւոքելու աշխատիլ , Գ. Այս արդիւնքը յաւաք բերելու ծառայող որ և է ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել : Յօդուած 14 . — ... Հայազգի գիւղացիներուն նպաստել , անոնց հայթայթելով հունտ , կենդանի և մշակելի հողեր :»

«Գիւղերու մէջ մշակութեան վրայ այժմու գործնական գիտելիքները տարածելու , տեղական արհեստագործութեանց զարգացումին նըպաստելու , երկրին պայմաններուն համապատասխան եղանակով աշխատութեան և արդիւնաբերութեան նոր միջոցներ արտագրելու :»

Միութիւնը ուրեմն այսուհետեւ պիտի ջանայ նաև իր ծրագրին այս էական կէտերով զբաղելու : Այս ոգևով , վերջին ընդհ. ժողովը աւելցուցած է նոյն իսկ 14րդ յօդուածին վրայ հետեւեալ կարեւոր հատուածը որ «Ալիանս Իզրայէլիթ» ծրագրին կարեւորագոյն մասը կազմած է արդէն . «Հիմնել կամ նպաստով օժտել վարժարաններ , մատենադարաններ , ընթերցատուններ , արհեստանոցներ , հիւանդանոցներ , խնամատուններ , որբանոցներ և ուրիշ նմանօրինակ հաստատութիւններ :»

Այսքան ամուր ու ապահով հիմերու վրայ դրուած ընկերութիւն մը , վարչական կարողութիւններ , յարատեւութեան ուղի ունենալնին գործով ապացուցանող Հայերու ցեղավարութեան տակ , այսպիսի ընդարձակ և ամենակենսական ծրագրով մը , կոչուած է բազմաբղիւն ու փառաւոր ապագայ ունենալու՝ նկատի ունենալով մանաւանդ Յաճկաստանի ներկայ կացութիւնը որ այդ ծրագրին իրագործման համար շատ նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ :

Այդ ստուար ու բազմակողմանի ծրագիրը իրականացնելու համար , Միութեան միջոցները հեռու են գեւ բաւական ըլլալէ : Միութիւնը ունի ընդ ամենը 686 անդամ , մեծ մասը եփիպատոսի մէջ , մաս մը՝ Անգլիա , Ֆրանսա , Ամերիկա , Թուրքիոյ մէջ՝ դեռ Իզմիր միայն : Իր կեդրոնատեղին ըլլալով Գասիլիէ , ունի մասնաձիւղեր՝ Աղեքսանդրիա , Փրովիտենս , Նիւ-Եորք , Ֆիլատելֆիա , Իզմիր :

Տեղեկագիրը կը յայտնէ թէ Միւլթիւնը որոշած է մասնաձիւղեր հիմնել Պոլիս և Տաճկաստանի ուրիշ կարևոր քաղաքները :

Ամէն Հայ պէտք է աջակցի որ այդ ընկերութիւնը գտնէ այն տարածումը , միջոցներու այն ընդարձակումը որ անհրաժեշտ են իր ծրածիրը ամբողջովին իրագործելու համար : Տաճկաստանի Հայութիւնը անշուշտ իր խանգոտ աջակցութիւնը պիտի բերէ այդ ընկերութեան : Յանկալի է որ արտասահմանի մէջ ևս մասնաձիւղերը բազմապատկուին . իսկ նմանօրինակ ձգտումներու գոհացում տալու նպատակով հիմնուած ուրիշ ընկերութիւններ , ինչպէս օրինակի համար Փարիզի Հայկական միութիւնը , ըստ իս՝ պէտք է որ այժմ Հ. Բ. Ը. Միւլթեան մասնաձիւղերու փոխարինուին :

Հ. Բ. Ը. Միւլթիւնը արժանի է ըլլալու , և պիտի ըլլայ , հայկական մեծ հաստատութիւն մը , որուն ամենէն ազգատ Հայը իր լուսման սիրով կ'ուզարկէ , և որուն ունեւոր Հայը կը յանձնէ իր խոշոր նուիրատուութիւնը կամ կտակը 1) :

* * *

Մեծ ուրախութեամբ իմացայ Մշակէն թէ Երուանդ Լալայիան հրատարակ հանած է արդէն իր Ալպովը հայկական բնագատկերներու և ճարտարապետական յիշատակարաններու : Թիֆլիսի մէջ ևս հաճոյքն ունեցայ անձամբ տեսնել այն բազմութիւ շարքը լուսանկարներու որ կը ներկայացնեն Վայոց Չոր և Նոր-Պայտաղի գաւառներու բնանկարներ , աիպարներ՝ տեղական հագուստով , քանդակագործական նշխարներ և ճարտարապետական յիշատակարաններ : Մինչև ցարդ եղած այդ կարգի ձեռնարկներէն՝ շատ աւելի յաջող և լիակատար է այդ հաւաքածուն : Լալայեան , որ իբր մասնագէտ ազգագրաբան վազուց ի վեր՝ իր Ալպովիէն Հանդէսով , իր առանձին հրատարակութիւններով , և իր կազմած Ազգագրական թանգարանով , կը կատարէ , մեծ գիտակցութեամբ , մեթոտով , եռանդով և անձնուիրութեամբ , գործ մը անհունապէս օգտակար և կարևոր՝ մեր տոհմային ինքնաճա-

նաչման տեսակէտով , այս ձեռնարկին մէջ ևս ի յայտ բերած է իր վարպետ-գործիչի բոլոր թանկագին յատկութիւնները : Ահագին ներութիւն ու զոհողութիւններ յանձն առնելով՝ հետն առած առաջնակարգ լուսանկարիչ մը՝ Պ. Երմաքովը , ծայրէ ծայր այցելած է ուստական Հայաստանի այդ երկու գաւառները , ամենէն անձանօթ մնացած անկիւններն ու խորշերը մտած , խուզարկած , ուսումնասիրած և երևան հանած ու լուսանկարել տուած է հայ ճարտարապետութեան և քանդակագործութեան զմայլելի նմուշներ՝ որ բոլորովին անյայտ էին ցարդ հայ հասարակութեան : Լուսանկարները մեծադիր են և վերջին ծայր յաջող : Լալայեան չէ շատացած եկեղեցիներու կամ վանքերու ամբողջութեան լուսանկարը տալով , այլ և մեծ ու յստակ լուսանկարը քանդակագործական գեղեցիկ մասերու՝ պատուհան , դուռ , պատի վրայ քանդակուած անձնաւորութիւններ կամ պատկերներ , ևն : Առ այժմ՝ Ալպովի ձեռով հրատարակած է Վայոց Չորին պատկանող 126 լուսանկարները , անոնց մասին հայերէն , ուսերէն և ֆրանսերէն ամփոփ տեղեկութիւններ պարունակող յառաջաբանով մը : Մտադիր է ի մօտոյ հրատարակել նաև Նոր-Պայտաղի վերաբերեալ Ալպովը : Իւրաքանչիւր ալպովի գինն է 100 բուլլի : Գնել ուզողները պէտք է գիմեն Պ. Երուանդ Լալայեանին , Beboutovskaja , 14 , Tiflis .

Ամէն ունեւոր Հայ , որ անտարբեր չէ դէպ ի իր ազգն ու ազգային գեղարուեստը , պէտք է իր սալօնը զարգարէ այդ հոյակապ հաւաքածոյով : Մեր բարձրագոյն ուսումնարաններն ու մեր մեծ մատենադարանները պէտք է ունենան այդ հաւաքածուէն օրինակ մը :

Անհրաժեշտ է խրախուսել Պ. Լալայեանը իր այս ձեռնարկին մէջ , որպէս զի կարենայ շարունակել այդ գործը և տայ մեզի ուստական և թրքական Հայաստանի բոլոր գաւառներուն նուիրուած նմանօրինակ ալպովներ :


Մենք թեթևօրէն ու սգիտօրէն կը մեղադրենք մեր նախնիքը՝ թէ հարուստ և ինքնատիպ արուեստ մը չեն արտագրած . Լալայեանի ալպովները ատոր հակառակը կ'ապացուցանեն : Միջոց տանք իրեն որ լիովին ի կատար հանէ այդ ապացուցումը , մեզ համար այնքան շահեկան ու սրտապնդիչ :

Ահա՛ գործիչ մը որ իր դերը կը կատարէ հոյակապօրէն : Թող հասարակութիւնն ալ իր պարտքը կատարէ .

Ա. Զ.

1 Կեդր. վարչական ժողովը կը բաղկանայ հետևեալ անձնաւորութիւններէն , Վսեմ. Պոդու փաւա Նուպար , ասեմապէս . Վսեմ. Եանուպ Արքիմ փաւա Է. Պ. Երուանդ պէյ Աղաբօն , փոխ-ասեմապէս , Պ. Մ. Անդրանիկեան , գանձապէս . Պ. Վահան Մալլեգեան , ասեմաղպիր . Պ. Պ. Առախէլ պէյ Նուպար , Գրիգոր Եղիայեան , Կարապէս պէյ Շէրիսեան , Մ. Մարկոսով պէյ : Ասեմաղպիրն հասցէն է՝ Mr V. Malézián, Ismaïlieh, Le Caire : Գանձապէսին հասցէն՝ Mr. M. Antranikian, 10 rue Nubar Pacha, Le Caire.

Վ Ե Ն Ե Տ Ի Կ



Ո՛վ խած Վենետիկ , փառապանծ տիկին ,
Զոր Իտալիոյ կաթն ու գինին սընոյց
Եւ Արեւելքն իր գարդերով անգին
Պըճնեց վեհ ճակատդ ու ստքերըդ լոյճ :

Արրիականին բաճբէշն ես յաւէտ
Զարդարուած ջուրէ ժապաւէններով .
Լխոյցի արեւն ելլելով ծոցէդ
Թագ կ'ըլլայ զըլխուդ եւ կ'ընկըզմի ծով :

Կը հեղու երկինքն , իբրեւ սիրահար ,
Ասողեր զըրկիդ մէջ , ասողեր ճագերուդ .
Ծոփն առջեւդ սըփուեր է գարգ ու քոհար .—
Զոյգ կապոյտի մէջ երագ ճ'ես կապոյտ :

Կըրթնած բարձերու վըրայ փըրփուրէ
Ո՛րքան թովիչ ես՝ երգն ալքերուն լուրթ
Երբ որ կ'ունկընդրես ,—ո՛վ քաղաք ջուրէ ,
Ո՛վ լափիւրինթոս քայլերու պանդուխտ :

Ունիս ճաճբաներ նեղ ու օճհոլով՝
Կէսը սալաքար եւ կէսը ալիք .
Հոն կըրնանք ընկերս ու ես խօսելով
Երթալ , ես ոտքով ու նաւակով ինք :

Անիւն անոնց մէջ ահօս տողած չէ ,
Եւ ոչ ալ պայտն հուր կայծեր սերմանած .—
Զըկնորսին սանդախն հըգօր կը հընչէ
Հոն՝ ուր ճեմեց տո՛ն օր ձը սիգընթաց :

Անթիւ կըղզիներ՝ շէնքեր վըրանին՝
Կոր կամուրջներով են շղթայարկուած .
Կարծես կուզ ուղտերն են կարաւանին
Անապատին մէջ ժայռերու փորուած :

Կը լըւայ ջուրն հի՛մը սուններուն գէջ՝
Փոշի առ փոշի ճեփը լիղելով .
Երկու կըղզինտրի անջըրպետին մէջ
Կ'ածէ յսականջն ի՛ր ձուերն ալետուով :

Պատ'հաններուն տակ ջրանցներ շափուղայ
Հայցի են կարծես՝ գոր ծովն է յըղեր ,
Ուր աստղերուն մէջ , լուսնին քով կըրնայ
Վենետիկահին իր գէճըր գետեղել :

Որմերուն ըտուերն հեւքոտ կը նազի
Ալիքներուն վրայ , ալիքն՝ որմերու :
Տունը ջուրին մէջ նորէն կը սկըսի ,
Միշտ քայքայուելով՝ առանց փըլչելու :

Աչտեղ զըւներուն շեմը կոնտայ ճ'է .—
Անդոզ քաղաքին անդոզ կարկուրայ ,
Որ գըշերուան մէջ ճակտին կը գըրէ
Մէկ աչք ճ'հըրեպէն ,—փայտէ՛ կիկոպայ ,

Որ օճի նրման , սեւ , սողազընաց ,
Կամուրջներուն տակ կը սահի կ'անցնի ,
Ինչպէս զըղջումին տակ մեղքն ամօթխած ,
Այս տարրերութեամբ՝ որ մեղքն աչք չունի :

Ահա Մեծ-Ջըրանցդ , ո՛վ Բաղաք-զըշխոյց ,
Որ կոր երկզով քեզ կը պարուրէ ,
Իբր Ազրիականն իր թուը կապոյտ .
Վիզըր անցընէր՝ որ թուշդ համբուրէ :

Սուրբ Մարկոնն ահա , թանգարան անհուն
Գեղարուեստներու , բրածոյ սուրբերու :
Անոր կից պալատն ահա Տոճերուն .—
Խորանը գահէն քայլ ձըն է հեռու :

Ահա Փենպլներն՝ որոնց տակ յաւէտ
Այսօր կը ձընչեն տատարակներն հըլու .—
Երնէ՛կ քեզ անկճանդ մէջ լակ , ո՛վ Վենետ ,
Բանտերդ են փոխուած թըւչնայ բոյներու :

Եւ ա՛յլ տաճարներ . ա՛յլ սպարանքներ ,
Կոթոյներ կըճեքիդ , հանճարիդ հրոկայ ,
Ալիքներն անոնց առջեւ կ'երգեն դեռ .
Փառքդ անցեալ գըրուած ծովերու վըրայ :

Ու հառաչանքի կամուրջն աւասիկ ,
Կամուրջն՝ որուն վրայ իրիկնաղէմին
Երդը լըսեցի ջուրերուն հեղիկ՝
Երբ կու գար աչքերս համբուրել քամին :

Կանգնած արեւուն առջեւ ճայրամուտ
Սերտեցի գոյներ , շողեր մեղձընթաց .—
Բու երկընթիւ մէջ եւ քու ջուրերուդ
Հոգին նըկարչի վըրձին ճ'էր զըտած :

Ո՛րքան ալիքներ , ալիքներ լածուա՛րդ ,
Ալիքներ նարի՛նջ , յակի՛նթ ալիքներ . . .
Ո՛վ Վենետիկ իճ , լըճակըդ զըւարթ
Թիցիանոյի երանգապնակն էր :

Պիտի յիշէ քեզ քընտրս իճ յաւէտ ,
Բու փառքըդ ճուրճի , եւ փառքըդ վըրձնի .
Պիտի յիշէ և՛ խուցն ա՛յն տըխրաւէտ
Կանանջ ջըրանցին վրայ Գարմինիի :

Անոր վանդակեայ պատ'հանին առջեւ
Էր որ ես լացի նայելով լուսնին
Կամքըս բանտարկուած : Հոն սիրաս հեւ ի հեւ
Ընպեց հեռացող երգը ձըկնորսին :

Գարձեալ անկից էր՝ որ ես առջի հեղ
Տեսայ Լինտան , կո՛յնն ատամներով բրինձ ,
Որ նըստած իր հօր նաւակին մէջտեղ
Կը կարկտէր ուռկան ճ'ու կը ժըպտէր ինձ . . .

Գ.Ա.Ն.Ի.Է. Գ.Ա.ՐՈՒ.Ժ.Ա.Ն.

Le Gérant : FRÉDÉRIC MACLER.
Imprimerie CH. NERCÈS, 7, Rue du Pot de Fer—Paris.

Ա Ձ Պ

Ի նկատի ունենալով Տաճկաստանի — մասնաւորապէս գաւառներու — Հայոց նիւթական անձուկ կացութիւնը և գոհացում տալու համար մեզի ուղղուած խնդրանքներուն, որոշեցինք մեր հետեւեալ հրատարակութեանց զինք զեղչել:

Նահապետ Բուշակի դիւանը	2	Փր.
Մ. Պէշիկթաշլեանի ֆերուածներն ու նաւերը	2	„
Ա. Չօպանեան — ֆերուածներ —	3	„
Poèmes arméniens anciens et modernes	1	„
Les massacres d'Arménie	1	„
Անթուր Քրանս, Եպիկուրի պարսեզը — հատուածներ, հայ թարգմ.	25	անգ.
Ալֆրէտ տը Վինի, ֆերուածներ. հայ. թարգմ.	25	„

Իսկ Անահիտ տարեկան բաժանորդագինի վրայ ևս պատրաստ ենք զեղչ մ'ընել ամէն անոնց որ յատկապէս պիտի գիմեն մեզ այդ մասին:

Չ Ա Յ Ն Հ Ա Յ Ի Ե Ն Ե Ա Յ

Շարաթաթերթ

Գրական եւ Բարոյական

Արտօնատէր, ԵՐ. Չ Ա Վ Ո Ի Շ Ե Ա Ն

Տնօրէն. Իմբրաղիմ ԼԵՒՈՆ ԼԱՐԵՆՅ

Բացուած է Չայն Հայրենեացի Բ. տարեշրջանի բաժանորդագրութիւնը: Պոլսոյ և գաւառներու համար՝ տարեկան 40 դր., վեցամսեայ 20 դր., արտասահմանի համար 10 Փր. կամ 2 տոլար տարեկան և 5 Փր. կամ 1 տոլար վեցամսեայ:

Չայն Հայրենեացը որ կը հրատարակուի վերջինչ. Կուսակցութեան ձեռամբ, թրքահայ պարբերականներու մէջ առաջնակարգ զիրք ճը կը գրաւէ: Ա. տարեշրջանի հաւաքածոն, 504 մեծաղիւր էջերէ բաղկացեալ և անգլիական գեղեցիկ կաղձով կը ծախուի 50 դր.ի: Դիմել ուղղակի Չայն Հայրենեացի հասցէին՝ Ղալաթիա, Մոմհանէ, Եալտըզ խան, թիւ 20:

Ա. ՉՕՊԱՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Les massacres d'Arménie, Գիմ' Ծրանք	
Préface de G. Clémenceau,	1
L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient; introduction d'Anatole France.	1
Zeitoun, depuis les origines jusqu'à l'insurrection de 1895, par Aghassi; traduction française: préface de Victor Bérard.	—
Նահապետ Բուշակի դիւանը, քննական ուսումնասիրութեամբ հրատարակուած	2
Poèmes arméniens anciens et modernes, traduction française, précédée d'une étude sur la poésie et l'art arméniens par Gabriel Mourey.	1
Chants populaires arméniens, traduction française avec une introduction et des notes: préface de Paul Adam. (պրակուած՝ Թրանսական Ա.կադեմիային):	3,50
Մկրտիչ Պէշիկթաշլեանի ֆերուածներն ու նաւերը, ծանօթագրութիւններով հրատարակուած,	2
Les Trouvères arméniens, traduction française, avec une introduction et des notes.	3,50
Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը, քննական ուսումնասիրութիւն.	5
Գերուածներ	3

ԱՆԱՀԻՏԸ պիտի հրատարակուի այսուհետև կանոնաւորապէս՝ երկու ամիսն անգամ մը :
 Ներկայ տարեշրջանը կը սկսի Ապրիլ-Մայիսին և պիտի լրանայ 1910ի Մարտ-Ապրիլին

ԱՆԱՀԻՏԸ պիտի ունենայ բովանդակութիւն մը այլազան ու բազմակողմանի—գրականութիւն, գեղարուեստ, գիտութիւն, իմաստասիրութիւն, քաղաքական և ընկերական հարցեր, ևն., տիրող բաժինը պիտի կազմեն հայոց հին ու նոր կեանքին, գրականութեան և արուեստին վերաբերող գրուածքներ :

ԱՆԱՀԻՏԸ ունի իր որոշ ուղղութիւնը, որ կը յայտնուի իր անօրէնին ստորագրութիւնը կողմ գրութեանց մէջ, բայց և կը հիւրընկալէ գրուածքներ տարբեր ուղղութեամբ, երբ ա՛ն նաև ունի անկեղծութիւն և տաղանդ :

ԱՆԱՀԻՏԻՆ աշխատակցիլ խոստացած են ռուսահայ և թրքահայ ամենէն հեղինակաւոր գրագէտներէն, ինչպէս և մեր նորածիլ տաղանդաւոր գրողներէն շատերը :

ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ամերիկայի Միացեալ-Նահանգաց ընդհ. գործակալ		
		Տր. Արշակ Տէր-Մարկոսեան
Սենթրըլ ֆօլս	Պարոն	Սահակ Ծառուկեան
Բագու	»	Ստեփան Ալշրճեան
Գահիրէ	»	Արմենակ Ատրիւսեան
Թաւրիզ	»	Վ. Բժշկեան
Թիֆլիս	»	Ս. Մեղրուճեան
Տանկասան		Պալենց գրատուն
		Դաւթեան գործակալութիւն
Կ. Պոլիս		Պալենց գրատուն
		Արծիւ գրատուն
		Պ. Տիգրան Տողրամաճեան
Ադրիանուպոլիս	»	Տիգրան Մարտիրոսեան
Իզմիր	Պ.	Գրիգոր Յ. Տէր-Մինասեան
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիգրանեան, « Արարատեան » գրատուն
Պարսիզակ	»	Մեղրոն Յովսէփեան
Ամապիա	»	Արքայաճամբատեան
Մարգուան	»	Յակոբ Պապասինեան
Կեսարիա	»	Գէորգ Ճամճեան
Երզնկա	»	Սարգիս Աղնաւուրեան
Շապին-Գարահիսար	»	Վահան Հիւսիսեան
Խարբերդ	»	Մեսրոպ Սահակեան
Վան	»	Տիգրան Զիթունի
Սեբասիա	»	Վահան Մոսկոֆեան
Ռուսնուզ	»	Գառնիկ Մազմանեան
Ֆիլիպք	»	Թագաւոր Հինգլեան

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՆԱՀԻՏԸ կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :
 Բաժանորդագրին Ե սարեկան՝ 10 ֆրանկ (Ֆրանսա), 12 ֆրանկ (օտար երկիրներ),
 2 տղար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 5 ֆրանկ (Ֆրանսա), 6 ֆրանկ (օտար երկիրներ), 1 տղար Ամերիկա,
 3 ռուպլի (Ռուսիա) :
 Յօդուած եւ բաժանորդագրին դրկել հետեւեալ հասցիին .

A. TCHOBANIAN
 17. Rue La Bruyère, Paris.